80

"2000"

343

G. Gerhan

1730-36

922-U2

343 243 Ա-77 922-Ա2

# ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ

## Մեկնութիւն Աղօթից։

Արարեալ Երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց Եպիսկոպոսի։

Եւ այլ ինչ Վարդապետաց։

Եւ հաւաքեցեալ ըստ կարգի ՚ի միում Տփի ՚ի Մովսիսէ Ումենէ Աշխատասէր Վարդապետէ։

1332-50

Յառաջաբանութիւն Մովսէսի Լօրենցինի Աւագ
փայեար, ընդ Պոլսոյս Հաստատչի.

# ՉՈՒՓ ԾՈՒՆՈՒՉԵԼ ՈՒՆՁԻՆ

Ուսուցանեն մեզ ամ ծայրին օրէնք և պատուիրանք. և մի՛ ամբառնալ աւատել ք զարժանն. Զի քան զյանցանացն պատիժս և յոլովակի ցուցանի դատավճիռ խիղախութեն. Մանաւանդ թէ եպերի՛ և յամենեցունց, անխտրհրդաբար համարձակելն և ձեռնամուխ լինել յիրս ինչ, որ քան զկար զօրութեան ումեք բարձրագոյն իցէ. Նա և ոչ այս միայն, այլ և անվաւեր և տղայական լինին ամ առաջարկութիւքն, և նախատելի՛ ամենեցունց վս անյարմար և կաղակրկին բանիցն. Այլ և ինքն առ ինքն հարեալ դատի ՚ի խղճէ մտացն. երկբայաբար միշտ գոլով ՚ի գործառնութի գործոյն. անըստգիւտ դատախազ տեսանելով զմտացն իւրոց յանդիմանութի. զի Սահ մեծ է անկանիլ ՚ի ձեռս այ կենդանւոյ, ըստ գրեցելումն. Զի նախ ոք լինել պարտ է, և ապա հանդիսանալ և ճառել զորբութի մեծին այ. զի մի՛ փոխանակ վարձուց հատուցման՝ պատիժ կրիցէ անուպայ յամառութեն. Նա՛ և կրթութե յոյժ պէտք են գրոց որց և ներկուա վերծանութե. Այլ և արտաքնոց և տեղեկութե զբաւցատրութեանցն, և բայիցն և բառից. Ա՞յլ ճանաչող միտս ունել, զի կարող

լինիցի ընտրութիւն առնել խորթատեսակ բանիցն։ Նաեւ մարմնոյ եւս պնդութիւն եւ զգայարանացն առողջութիւն յոյժ պէտք են։ Նմ եւ անդորրութիւն ժամանակի եւ յապահով տեղւոջ դեգերման. առ ընթեր միշտ ունելով զյոլովութիւն տառից. յորս պարապեալ համապազ հմտասցի ճշմարիտ մակացու լինելով։ Նաեւ յայսմ ամէ՛ թափուր իմ գոլով, եւ հակառակօքն յաւէտ լցեալ. զոր թուի թէ ոչ այլ ոք այսպէս իմ իրօք. Բայց քանզի խնդրեցեր սիրելի զվերլուծութիւն աղօթից զորս թողեալ է մեզ երանելոյն Խոսրովու, ոչ բաւական համարելով զպարարեալն, կապեցեր զմեզ ընդ հարկաւ, գրաւելով ՚ի ծառայութիւն։ Զի ամենեցուն ‖ խնդրողաց հրամայէ տէրն տալ ըստ կարողութեան. եւ զո՛չ հնազանդեալսն ‖ կորստեան մատնէ իմաստունն։ Զի ոչ կարելն՝ տկարութիւն ասի. իսկ ոչ կամելն՝ անհնազանդութիւն. զի հասարակաց է շահն. եւ իւրաքանչիւր ոք զիւր վարձս առցէ. Այլ ապաւինելով յայն որ առանց ‖ նախատելոյ շնորհէ՛ հաւատով խնդրողաց, եւ աղօթիւք ձերովք եւ մեծաւ յուսով ձեռնարկեսցուք ՚ի գործս. Բայց սկսցուք ՚ի սկիզբն գրոցս զոր սկզբնաւորեալ է մեծին Խոսրովու, հաւաքելով յանձնիւր տեղիս ըստ պատշաճ պիտոյից. եւ զիւրաքանչիւր մեզցն խօսեցեալ բանս։ Նաեւ թէ տացէ տէր ըստ հաճոյից իւրոց յար



մա

մարել զառաջարկութիս, տն շնորհ. և թէ ո՛չ և այնչափ շնորհ. զի գիտէ ըստ արժանւոյն բաշխել: Նա՛ մերում տարտամութեանս ներեսցէ. զի ո՛չ գըտաք ըստ արժանւոյն ոռոգել զբանական երկիր մտաց մերոց ածային գրոցն վարդապետութե. որով 'ի դէպ ժամու պտղաբերէաք զարժանն:
Այլ աղաչեմ ծնազանդեալ հրամանաց քոց բարեսէր և պատուէլի՛ եղբայր Թէոդորէ, թէպէտ և յո՛յժ լրբութի գոլ մեզ և առաւել դատապարտութի, սկիզբն արասցուք ած 'ի գործս: Նա՛ դու աղօթեա՛ 'ի վե՛ր մեր, զի արժանի լիցուք առանց սայթաքելոյ յաւարտ հասանիլ. որով փառաւորի անկարօտն փառաց ած: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

## Յառաջաբանութի Սրբոյն Խոսրովու Անձևացեաց Եպիսկոպոսի, տէ Գրիգորի Ծօբինոցի:

ՆԴՐ ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ԽՕՍԱՑՈՂ, ամ արթնութբ պարտիմք միտ դնել բանիցն ասացելոց. զի մի՛ ընդունայն կամ թէ 'ի դատապարտութի մեզ ասացեալքն լինիցին: Զի թէ ընդ մեր նման մարդոյ ո՛չ դանդաղեալ մտօք խօսիմք, այլ իմացուածովք զբանն բերեմք և յօդաւոր ասիւք պատշաճեմք. և մանաւանդ յորժամ ընդ աւագագոյն ունիցիմք խօսիլ, երկիւղա-



լից

լից մտօք՝ բանիցն հոգ տանիմք։ Այլ որչափ ան
զբօս խորհրդովք ընդ Աստուծոյ և ընդ Աստուծոյն պարտիմք
խօսել։ և զմիտս երկիւղիւ ընդ նմա և վասն նորա բանա
նոր իմացուածովք անարատել զբանսն։ Զի յա
ղագս այսորիկ եմք բանաւորք և ոչ յաղագս այլ
իրիք։ Այլ թէ ոչ, մա՛րթէաք զմարմնաւոր պէտսն
անբանութեամբ հարկել ոչ անասնոցն ամենեցուն ջոկք։
Այլ եղաք բանաւորք և մտաւորք, և սպասաւորք
յանբանիցն. զի զնոցայն և զմերն բովանդակ մեք
տացուք Աստուծոյ բան՝ մտա՛ց լուսաւորութեամբ. և զուգա
հրեշտակք յերկրի, նման երկնայնոցն լիցուք.
և նոյնպիսի սիրով և ահիւ առ նորայն լիցուք պա
տուիւ և երկրպագութեամբ և փառաւորութիւն.
Նա՛ և առաւել ևս՝ որ քան զպատուականսն ա
նարգքն. և քան զհաճոյսն յանցաւորքն. և քան
զչափաւոր խնամեալսն յոքնաբար երախտաւորքն։
Զի ոչ զհրեշտակաց բուռն հարկանէ ասէ,
այլ զզաւակէն աբրահամու. որով և զամենայն
մարդկանէ։ Այլ զի պարարակ զենումն, և զամ
խրախճանութիւնքն ոչ յաղագս հրեշտակաց անդրա
նիկ և հաճոյ և պատուական որդւոց. այլ վասն
մեր փոքունցս և անհնազանդիցս և օտարադնացե
լոցս և զամ հայրենիսն վատնողացս է։ Այլ եթէ
շատ օգտողն և շատ թողուն դատողն, շատ խնդրի
և շատ սէր պարտի որպէս ասաց տէրն մեր երբեմն

‖առ աշակերտսն և երբեմն ‖առ կինն պոռնիկ •
ապա յայտ է թէ կարի՛ առաւել պարտին ազգք
մարդկան քան զհրեշտակս երախտահատոյց լինել
ա̃յ յորդն սիրոյն և յաձախ ներողութ̃են և անպա
տում և բազմաւոր պարգևացն •

Ա՜ զի այս այսպէս է, անշուշտ ջանասցուք ըստ կարի մերում զպաշտօնս մեր ՚ի մ̃բ սրտէ և ՚ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց ըն ծայել ա̃յ • Բանզի և զսոյն ՚ի պօղոսէ աղաչիմք գթութ̃են ա̃յ պաղատեալ, զի ‖պատ̃րդ կենդանի մ̃բ և հաճոյ ա̃յ զխօսուն պաշտօնս պատրաստեսցուք • ՚Ի սոյն և սաղմոսանուագն յորդորէ • երբեմն ո̃չ յինքենէ, և երբեմն ո̃չ ՚ի դիմաց ա̃յ • Յինքենէ՝ յասելն, մատո՛ ա̃յ պատարագ օրհնութ̃ե, և կատա րեա՛ զբարձրելոյն զուխտս քո • Ա՜ դարձեալ թէ, հատե՛ր զկապանս իմ, քե՛զ մատուցից պատարագ օրհնութեան • և զանուն տ̃ն կարդացից •

Ա՜ որպէս յերեսաց ա̃յ, յորժամ ասէ, պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս •

Ա՜ զի մի՛ դարձեալ բանբասեսցիմք յա̃յ ո̃չ հրէայքն • լսել զայն թէ, ‖ժողովուրդս այս շրթամբք պա տուէ զիս • և սիրտք իւրեանց հեռացեալ ՚ի բա ցեա՛յ են յինէն • զուր պաշտեն զիս • Ա՜ կամ ‖անպտուղ մօզք լինիցիմք ո̃չ ասէ առաքեալն • Ա՜ կամ ըստ տ̃րունեան բանին, ‖շատախօսք լեալ

առանց մըտացն առ ա̃ծ ամբառնալոյ․ և առանց զբանս աղօթից ստուգապէս և յստակութե̃ նմա մատուցանելոյ , համարիցիմք ըստ հեթանոսացն ՚ի բազում խօսից լսելի լինել։ Այլ զի ‖ սաղմոս ասասցուք և ՚ի միտ առցուք․ և զսակաւ բանս մտօք կամեսցուք ո̃պ ասացն պօղոս , քան զբազում բանս լեզուաւ։ Այլ զի մի՛ լինիցիմք որպէս ընդ օդս խօսեցելոց․ և կամ ո՛չ գիտելով զօրութի̃ ձայնին , ‖ լինիցիմք ասօղք խուժ , և լսօղքն դուժ ըստ առաքելոյ օրինակելոյն ։

Յաղագս այսորիկ կամեցայ ես բացայայտել որ ՚ի պաշտաման եկեղեցւոյ քարոզութի̃ք և աղօթք քահանայականք։ Զոր գիտակքն մի՛ արհամարհեսցեն․ զի թէ և ինքեանք անկարօտք են մերոց իմաստից , այլ ՚ի պարզամտացն հայե̃ցլ օգուտս , ընկալցին զմեր ջանս վաստակոց․ և զպակասութն՝ եղբայրական խնամով ուղղել խոկասցեն ։

Այլ հասարակաց հոգացողն քս̃՝ մեզ և նց̃ լիցի օգնական․ և տացէ բան ‖ աւետարանել զօրութե̃ բազմաւ։ Եւ Նմա փառք ընդ հօր և ընդ սբ̃ հոգւոյն։ Այժմ և յաւիտեանս յաւիտենից , Ամէն։



Ս՚կ

Милостив



Սրբազնութիւն Վսեմակարգութեան Հասարակաց
Նախորդին Հայաստանեայց Եկեղեցւոյ.

## Քարոզ Հրաշման Պիւղերոյ.

# ԶԱՐԹՈՒՑԵԱԼՔՍ

ամենեքեան 'ի հանգստենէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն Տծ 'ի մեծի թարութիւն և 'ի սփոփանս տկարութեն մերում.

## Մեկնութիւն Աւրանելոյն Խորհրդոյ.

Յիսկզբան բանիցս ցուցանէ զմեզ խնամսն, որ նախ քան զհանդերձեալսն եւ աստէն զհանգիստն յաշխատութեցս և 'ի հոգոց և 'ի մեղաց և յազգի ազգի տրտմ

տրտմութեց դիշերայնոյ։
Այլ քնով, զի Թէպէտ
և պարտաւորեցաք այսո
ցիկ ըստ յանցմանն, այլ
գութ մարդասիրին այ̅
ոչ անսաց միշտ յայսպի
սիս մնալ մեզ վտանգս։
այլ բաժանեաց զկեանս
մեր և ետ զմասն մի կե
նացն 'ի հանգիստ։ ոչ
ըստ արժանեց, այլ շնոր
հօք։ այսինքն ձրի մար
դասիրութեն հարկ արա
րեալ։ Վն̅ այնր ասէ,
զոր շնորհեաց մեզ մար
դասէրն ած̅։ Քանզի
ոչ միայն 'ի կամս ապաս
տան զայս արար, այլ և
հարկ 'ի վր̅ եդ ծանրու
թեամբ աչաց և մարմնոյ՝
ոգւոյն թմրութեամբ։
Այլ յայն սակս՝ 'ի ծան
րութե՛ քնոյ կոչէ զզար
թումն։ զի մխիթարի՛ և
սփոփի՛ քնով անձն մեր
և նորոգի՛ յաշխատութե։
ասէ, Շնորհեաց մեզ
մարդասէրն ած̅ մխիթա
րութի, և սփոփանս տկա
րութե մերոյ։

Այլ եկեալքս միաբան։
Ո՛չ վայրապար յաւել
զմիաբանն աստ, կամ յա
ռաջ 'ի զարթուցեալսն
զամենեսեանն։ այլ զի
ցուցցէ թէ՝ ամենեցունց
միաբանիլն յայ̅ պաշտօնն՝
դիւրահաշտ առնէ զած̅։
և զօրաւորս զմեզ, և ըզ
դիւաց մարտ անզօր։

Յոգևոր երգով 'ի փա
ռաբանութիւն և 'ի պա
տիւ ամենասուրբ անուան
տն̅ մերոյ և փրկչին
յի̅ քի̅։

Յոգևոր ասելով երգ,
յայտ առնէ թէ Հոգին
սբ̅ 'ի թիկունս և 'ի գոր
ծակցութի տկարութես
մերոյ գայ ըստ պօղոսի։
և երգակից լինի սրբե
ցելոցն մտօք, և յորդորե
լոցն 'ի փառաբանութին այ̅։
Փառաբանութի կոչի,
զի բանիւ փառաւորեմք
զանկարօտ բնութին այ̅։
Այլ՝ տրն̅ ասելով և փր
կիչն։ Զ տրն̅, վս̅ ստեղ
ծանելոյն։ և զի տիրէ՛
մեզ։ Իսկ փրկիչն, զի



զանձն

զանձն փրկանս տուեալ
փրկեաց զմեզ արեամբն
իւրով ՚ի մեղաց և ՚ի մա
հուանէ. և եբարձ զա
նէծսն որ ՚ի վերայ մեր։
Սակս այսր յաճախ զնա
անուանեմք յերկոցունց.
զի յարարչութենէն և
՚ի խնամակալութենէն,
և որով ընտանութի ընդ
մեզ եցոյց՝ գոհացուք
զնմանէ։
Ահի և դողութ կաց
ցուք յաղօթս առաջի
նորա։
Զհրեշտակաց հրա
մայէ ունել զահ և զդո
ղումն. վս այսր յաւել
թէ՝ առաջի՛ նր։ Զի ոպ
հրեշտակք ՚ի տեսլենէ
փառաց նր միշտ ահեալք
են. նոյնպէս և մեք յած
զմիտ ամբարձեալ և ա
ռաջի կացեալ ահադին
փառացն՝ դողութբ զնա
պաշտեսցուք։
Եւ գոհացարուք զնը
մանէ ՚ի գիշերային ժա
մուս յայսմիկ վասն իրա
ւանց և արդարութե
նորա։

Քանզի ասէ դաւիթ,
՚ի մէջ գիշերի յառնէի
գոհանալ զքէն վս իրա
ւանց և արդարութն քոյ։
Զնոյն և մեզ հրամայէ
առնել. և ցուցանէ զի
րաւունս և զարդարու
թիս նր զոր արար ընդ
մեզ։ և ո՛չ ըս արժանեաց,
այլ ողորմելով. վս այնո
րիկ ասէ,
Որ ընտրեաց զմեզ ողոր
մութբն իւրով։
Զի ողորմեցաւ ասէ՝
յայն սակս ընտրեաց։
Իբր զի խոտան էաք և
ընկեցեալք յերեսացն այ,
ողորմութի նր ընտիր
արար ըստ առաքելական
բանին։ Ընտրեաց զմեզ
ասէ նովաւ, այսինքն է
քի, յառաջ քան զհի
նիլն աշխարհի. լինել
մեզ սբս և անարատս ա
ռաջի նր։
Եւ շնորհեաց մեզ բե
րել զնմանութի երկ
նայինն հրշտկացն։
Զի նոքա յերկինս փա
ռաբանիչք են, ոպ յա
ւել

նել թէ՛ երկնային հրեշ
տակացն, եւ լինիլ մեզ
յերկրի հրեշտակս փա
ռաբանիչս այ։ Վն այսոր
յարէ 'ի նոյն, փառաբա
նիչս տն այ ամենեցուն
և մեզ լինիլ։ Եւ՛ ած և
տր տմցն ասելով, զար
թուցանէ զմիտս մեր գի
տել թէ զերկնից և զեր
կրի և զամ արարածոց
ստեղծիչն կարգեալ եմք
փառաւորել։ Եւ՛ դնէ
առ նմին,

Եւ՛ մեք այսու հետեւ
սրբելով զանձինս
մեր։

Այսինքն՝ թէ որով հե
տեւ հրեշտակս արար ընդ
մեզ յերկրի, կալցուք
յանձինս զհրեշտակացն
սրբութի։ Եւ՛ զոր ինչ
ըստ մարդկային բնութե
սխալեալ իցեմք, խոստո
վանութբ և ապաշխարու
թբ սրբելով զայն, մա
քրուրք լիցուք։ քանզի
ասէ սրբել 'ի խղճէ և
'ի չար գործոց։ Եւ՛ քզի
մարգարէն հրամայէ՛,



‖'ի գիշերի համբառնալ
զձեռս մեր 'ի սրբութի։
ըստ այնմ հրամայէ և քա
րոզա, նախ սրբել զխիղճ
և զչար գործս, և ապա
համբառնալ զձեռս 'ի
սրբութի։

Համբարձցուք զձեռս
մեր 'ի սրբութի առանց
բարկութեան և երկմը
տութեան։

Յաւելով 'ի մարգարէ
ականն և զառաքելա
կանն ևս խրատ, թէ ‖ա
ռանց բարկութե և երկմը
տութե։ Զի պէտք են
աղօթականին աներկմիտ
հաւատով և անբարկա
նալի մտօք մատուցանել
զաղօթսն՝ այ։ Վն որոյ
և տրն ասէ, ‖Թող զպա
տարագն քո զաղօթսն,
և երթ նախ հաշտ արա
զեղբայրն քո, և ապա զիս
Յայն սակս և քարոզն
զբարկութին թողուլ տայ
և ապա յայ զքաւութի
հայցել։ ասելով, Խընդ
րեսցուք հաւատով ընդ
թողութիւն մեղաց։

Զի թողլոյն եղբարց,
խնդրեսցուք մեզ զթո
ղութիւն յԱյ, և հաստա
տասցուք եթէ առ
նումք։

Խոստովանելով զգաղտ
նիս սրտից մերոց ծած
կագիտին Այ։ Զի անց
յառաջ՝ սրբել ՚ի խղճէ
զանձինս, աստ զօրինակն
ցուցանէ թէ խոստովան
լինելով և քաւութն խնդ
րելով սրբիմք։ Զի թէ
և չխոստովանիմք, ՚ի ծած
կագիտէն չկարեմք թա
քուցանել։ այլ խոստո
վանիլն և վնասապարտ
զանձն առնել, ՚ի խոնար
հութի ածէ զմեզ և յա
մօթ և ՚ի զեղջ և ՚ի պա
ղատանս։ որով և զողոր
միլն և զներելն գտանեմք
յԱյ և զարդարանալն։
Քանզի ասէ իսկ մարգա
րէին․ Ասա դու նախ
զանօրէնութիւնս քո՝
զի արդարասցիս յա
ւելն։

Զի ընդունելով զպա
ղատանս մեր աղօթիւք
և բարեխօսութբ ամե
նայն սբց։

Այսինքն է թէ՝ խոնար
հիլն խոստովանութբ և
անարժան համարել զան
ձինս՝ առ ՚ի սբցն ապաւի
նեալ ՚ի բարեխօսութիւն,
ընդունելի՝ առնէ Այ ըզ
պղտանսն։ Մանաւանդ
թէ զարթնուցումք ոչ
՚ի քնոյ միայն, այլ և ՚ի
զբաղմանց աշխարհիս,
և յազգի ազգի ցնորից,
և արթուն զոգիսն ունի
ցիմք։ Լսել նախ զոր ա
սիցեմք մեղէն, և ապա
յամենայնուր ականջան Այ
արկանել։ Որում փո
խարէն,

Շնորհեսցէ՝ մեզ մար
դասէրն Ած կեալ առա
քինութբ և անարատ վա
րուք ըստ կամաց նորա
յայսմ աշխարհիս։ ար
ժանաւոր լինելով յաւի
տենական ուրախուեցն
զոր խոստացաւ տալ սի
րելեաց իւրոց։

Շնորհելն՝ յայտ առնէ
թէ՝ ձրի՝ են պարգևք


նր․

նր․ Թէպէտ և բազում
առաքինեանմք․ Այլ զի
սիրէ զմարդիկ, և շնորհ
է զոր շնորհէ՛ մարդա
սէրն ած, և կեալն առա
քինութբ և ոչ մի ինչ
բիծ ունելով, այլ անխտ
փարուք կեալ․ Այլ առա
ւել քան զարքայութեն
պտիւ է․ որում ընտիրքն
բաղձային յոյժ ցանկու
թբ քան երկնից բարեացն․
Ո ի ոչ փարձս առնուլ
'ի քն է, այլ ձգնել յա
ղագս քո ցանկային․
Որ յաղագս սաստիկ սի
րոյն որ առ քն, բազմա
պատիկ ախորժական էր
նց քան ընդ քո 'ի փառս
լինիլ՝ չարչարիլ վն քո․
Այս և երանելին յովհան
ասէ թէ, քան ընդ քե
րովբէսն մերձ կալ այ,
'ի կապանս կալ վն քո
ընտրեմ․ Այլ երանելի
ածաբանն գրէ, զի մի՛
անցից թէ նոյն ինքն աշ
խատիլն է վարձ որ ոչ է
ամենևին փաձառական մը
տօք․ Այլ նիւսացի ընտ

րեալն գրիգոր, վն այնոր
ասէ երգերգոց լինիլ
օրհնութեցն սողոմոնի,
զի վն սիրելոյ զառաքի
նիլն և ոչ վն փարձու,
ունի զհարսնն․ Այլ յե
րիս որոշմունս ածա
բանի և սորա եդեալ է
զարդարութի․ Վն եր
կիւզի․ վն վարձու․ վն
սիրոյ․ Ամ զսիրոյ զդե
րակայութին յամուսնա
կան մերձաւորութենէն
օրինակէ՛ սողոմոնակա
նաւն, և նա յորդորէ․
երիս կարգս ապրեցելոցն
ասելով․ Ծառայ կոչէ
զերկիւղին ուղղեալսն․
և վարձկան զյօժարելսն
յառնուլն․ այլ թէ ա
ռաւել ք զայսոսիկ ասէ
որդի՝ հօրն հաճանեալ
և ոչ վարձուն․ Որդ՝է
առաջին և մեծ պարգև
այս՝ զառաքինութի ստա
նալ․ Այլ երկրորդն՝ յա
ւիտենական ուրխութեցն
արժանաւորիլ․ զոր սի
րողքն քո ըստ անսուտ
խոստման նորա առնուն


'ի

'ի նմանէ ։ Մեզ այնորիկ
'ի ճշմարտութէն կոչէ
զայն որ խոստացաւն․ զի
մի՛ երկբայեսցուք խոստ
մանցն ։ Այսպէս ասե
լով,

Ճշմարիտն ած յս քս
տր մեր կեցո՛ և ողորմեա՛
մեզ ։

'Ի խնդրուածս փակէ
զբանն, և զտնօրինական
անուանսն յիշէ․ որ վս
մեր եղև և կոչեցաւ յս
որ է փրկիչ․ վս զի փրկ
կեաց զմեզ 'ի մոլորութէ,
և 'ի սատանայական գոր
ծոց, և 'ի մեղաց, և յանի
ծից, և 'ի մահուանէ, և
յապականութէ, և 'ի դը
ժոխոց ։ Նաև քս անուա
նեցաւ, վս զի օծաւ հո
գւովն կոչի քս․ այսինքն
օծեալ ։ Նաև նովին հո
գւովն օծէ և զմեզ, և
օծեալս արար և քրիս
տոնեայս անուա
նեաց ։

Տր մեր և ած ։ Պար
գևէ հոգևոց տեառնն
մեզ սեպհական լինել․
վսնորիկ յաւել անդր
զմերն․ զի այնու առա
ւել զնա 'ի գութ ածի
ցեմք կեցուցանել և ո
ղորմել ։ Ասելով,

Յս քս տր մեր կեցո՛ և
ողորմեա՛ ։

Զնոյն և ժողովուրդքն
ասեն, կեցո՛ տր ։ Քանզի
մեռեալ էաք 'ի մեղս մեր․
և կեցուցանել քս կամե
լով եկն յերկիր և ասաց,
'ի կեցուցանել եկի և
ոչ 'ի կորուսանել ։ Նաև
զի՝ կորըստեան և ոչ կե
նաց արժանի էաք․ այլ
նա կեցոյց ողորմելովն ։
Այնորիկ քարոզն ասէ
կեցո՛ և ողորմեա՛ ։
Այսինքն՝ թէ և անար
ժան եմք կենաց, կեցո՛
ողորմութբ ։ Զի ողորմին
չթողու զարժանին խնդ
րել․ այլ հարկ առնէ և
զանարժանսն կեցուցա
նել ։

Զմնացուած գիշե
րիս խաղաղութբ
անցուցանել հաւատով
'ի տնէ խնդրեսցուք․



Հա

Քանզի վ̃ն խաղաղութե
հրամայիմք աղօթել․ ո՛չ
միայն մարմնոյ, այլ և հո
գւոյ և մտաց խաղաղու
թե̃ն հայցել․ ուստի բա
զում օգտութի̃ լինի և
լուսաւորութի և յըստա
կութի̃ յաղօթսն մ̃յ․
Նա՛ և ամէն ժողովուրդքն
միաբան՝ ո՛չ եթէ տո՛ւր,
այլ եթէ՝ Տ̃ ողորմեա՛ մ̃ր․
Ա̃մ ուրեք զշնորհելն
խնդրելով զողորմելոյն,
և յո՛չ արժանիսն զգթով
տալն մաղթէ․
Զհրեշտակ խաղաղու
թե̃ պահապան անձանց
մերոց ՚ի տ̃նէ խնդ''․
Վ̃ն զի՛ են հրեշտակք
որք ՚ի պատժել առաքին
ասէ երանելին յովհան․
և են որ պարգևաց և
խաղաղութե արքանեակք
են․ զորս ՚ի պահպանու
թիւն և ՚ի փրկութիւն
առաքել մեզ՝ և զո՛ր հա
նապազ ընդ մեզ լինել
հայցեմք․
Զքա̂ւութի և զթողութի
մեղաց մերոց ՚ի տ̃նէ''․
Մ

Զի կարի՛ պիտանացո՛ւ
է յա̃մ ժամ զմրուա̂ն ա
ծել զոր յանցեաքն առ
արարիչն, և ապերախտք
առ երախտաւորն եղաք․
Այլ առաւել կարևոր է
՚ի միաբանութեն զայս
առնել․ և միմեամբք վ̃ն
միմեանց պաղատել․ և
զերերաց թեթևացուցա
նել զմեղացն բեռն․
Զի ՚ի միաբանութեն
մերում և հրեշտակք և
մ̃բք կցորդակից լինին
մերոց մաղթանացս․
Նա՛ ա̃ծ առաւել խնար
հի ՚ի միաբանութե խըն
դիրսն և զհաշտութիւն
առնէ․ Որ̃պ և Նինուէա
ցւոցն միաբանելոց արար
քաւութի և անցոյց զբա
պառնացեալ պատու
հասն․
Նա՛ զա̃բյ խաչին զօրու
թին ՚ի պահպանութի
անձանց մերոց ՚ի տ̃նէ
խնդրես''․
Զոր գթութին մ̃յ մեծ
պահապան մեզ պարգև
եաց․ սուր սրեալ իւրով

 ահա

ահագին արեմբն ետ առ
ձեռն պատրաստ զէն մեզ
հակառակ անմարմնին թշ
նամեացն։ Այլ և՚ի մար
մնաւորականաց դիմամար
տաց պարիսպ և վահան
անմարտնչելի։ Միայն
թէ աներկբայ և անպղ
տոր ոգւով դրոշմեսցուք
զմեզ, խափանելին ամ երե
ւելի և աներևոյթ մրտք
՚ի մէնջ։ Միայն թէ՝ և
՚ի կնքելն մերում յիշես
ցուք զտն մերոյ զմարդա
սիրութին։ որ այ գոլով
որդի, սբ անմեղ անարտ
||զատեալ ՚ի մեղաւորաց։
և վս մեր մեղաւորացս
իւրով մարմնովն կրեաց
զչարչարանս խաչին։
Պնտեալ զնա բևեռօք
և սաստիկ մարմաջմամբք
ցաւոց՝ մեր յանցանացս
՚ի նմա՛ պհանջեցաւ պար
տիս։ Եւ լուծեալ ՚ի
նմա զանիծիցն և ըպմե
ղացն դատակնիք, ազատս
և անսպիս և անմահս և
անապականս զմեզ արար։
Ինքն քահանայապետ և
Ի

ինքն պատարագ ՚ի նմա՛ գո
լով։ Եւ ||իւրով արեմբն
յերկինս երկնից յանմա
տոյցն մտեալ սրբութիս։
Հաշտ առնելով զհայր
ընդ մեզ, յանդիման ե
րեսաց նր զմեզ՝ իւրն կա
ցոյց մարմնովն։ յորդիս
այ կարդեալ զդատապար
տութե անկեալքս յերե
սացն այ։ և ինքն մարմ
նով բարձրացլ ՚ի խաչին
ամբառնալով, անմեկնելի
գոլով ՚ի նմանէ ածութն։
Վ այնորիկ և մեք դնե
լով զնշան խաչին ՚ի մեզ՝
հաւատսցուք զնոյն ինքն
այ որդին ||ածական ա
րեամբն ՚ի մեզ կրել։ և
զերեսս դրոշմել։ և ըզ
գլուխս պսակել։ և զան
ձինս պարսպել։ և ||ընդ
գիրկս ոգւոց մերոց խօ
սիլ զփրկութի ոգւոց
մերոց։ Եւ ապաւինելով
՚ի սբ նշանն, աներկիւղ
լինիլ ՚ի չարէն։ Ըստ մար
գարէին, ոչ երկեայց ՚ի
չարէ՛, զի դու տր ընդ իս
ես։ Եւ՝ ցուպ քո և գա
ւա



1332-50 343

քահանան՝ նոքա մխիթարես-
ցեն զնա։

Արդ զնա համապաղ
խնդրեսցուք մեզ ՚ի պաշտ-
պանութի, և ՚ի նորին պար-
ծեսցուք միշտ։ Եւ ՚ի
քարոզէն լուեալ զայս՝
հաւատով նկարեսցուք
՚ի սիրտս և ՚ի դէմս մեր։
Եւ աւանդեսցուք այ սրտի
մտօք, Շնորհեաւ տր։
Զոր և ըստ իւրաքանչ
իւր տանց քարոզէին սո-
վոր եմք ասել և յայսմ
աւարտել։ Ապա քա-
րոզէ։

Եւ ևս՝ և վս միաբա-
նութե ճշմարիտ և
սբ հաւատոյս զտր աղա-
չեսցուք։

Որ է խնդիր մեծ և կա-
րևոր ամցն · քակե-
լոց յուղիղ հաւատոց և
մոլորելոց ՚ի հերձուածս՝
դարձ խնդրել և միաբա-
նութի յուղիղ հաւատս,
և ‖ ՚ի ճշմարտութին հաս-
տատել միաբանութբ։
Յաղագս որոյ և զտր ո-
ղորմեացն առ հասարակ
վերաձայնեն. զի ողորմես-
ցի և ՚ի գութ դարձեալ
խնամարկեսցէ յիւր յա-
րարածս · և գթալով ՚ի
գինս արեան իւրոյ, ո՛չ
թողցէ իսպառ կո-
րնչիլ։

Զանձինս մեր և զմի-
մեանց տն այ ամենկլին
յանձն արասցուք ·
Զմեր ոգիս և զամ հա-
ւատացելոց, մանաւանդ
զայնոցիկ որք աղօթս ՚ի
մէնջ հայցեցին՝ պարտիմք
յանձնել այ։ Քանզի և
զայս իսկ սովոր եմք պա-
տասխանի առնել նմ թէ
այ յանձն։ Յայն սակս
և առաջինքն այլ քարոզ
չառնէին վասն նոցա զի
այսու շատէին։

Ո՛չ վայրապար և զամե-
նակալն յաւելուն։ այլ
զի զմտաւ ածցուք թէ
նոյն տր է ամենեցուն,
և բաւական առ ամենե-
սեան · և զամ ունի ընդ
իւրով իշխանութբ · զի
այս է ‖ ամենակալն։
Ապա ՚ի նոյն ինքն ած-

ժողովուրդքն զբանսն դարձուցեալ ասեն միաբան, Քեզ տն յանձն եղիցուք։ ’Ի նո́յն բերէ և քարոզն զաւարտն։

Ողորմեաց մեզ տր ած մեր ըստ մեծի ողորմութ քում։

Ո՛ ո՛չ որչափ մեք խնդրեմք և իմանամք, այլ որչափ մեծ է ողորմութիդ ’ի քում բնութեանդ։ Զի որպ իւրն ած անսահմանէ, նոյնպէս և ողորմութիւն։ Ողորմութ ասի ըստ մեզ ’ի սրտի, ’ի նեղութիս և ’ի վիշտս և ’ի վարանս ուրուք աղէտանալ, և ըստ կարողութե դիւրել վտանգելոյն։ Թէ և պարտապան ինչ չիցեմք, սակայն գերումն սրտին խոնարհեցուցանէ ոպ պարտապան ’ի կարեկցութի։ Զայս և մեք յոյ մաղթեմք։ Թէ և այլովք դիմօք չեմք ասեմք արժանի քոց պարգևացդ, այլ զի անկաք ’ի փառացն որ տուեալն ’ի քէն և եղաք ’ի դրախտէն։ և ըստ մահուամբ և ըստ ապականութ դատապարտեցաք։ և ’ի հոգս և ’ի տրտմութիս և յաշխատութիւնս և յազգի ազգի ցաւս և ’ի տառապանս և ’ի տարակուսանս խարչիմք։ զրկեալք ’ի տեսութէ տր երեսացդ քոց։ և զբանսարկուն անհաշտ պատերազմող ունիմք մեզ և որոգայթադիր և մեղսածու զանազն ախտիւք։ և եղկելիք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և ըստ մըտաց եմք։ քանզի և նոյն իսկ բնութիւն հակառակ մեզ կարգեցաւ։ Այսպիսի աղէտս հայեցեալ ամենողորմ տն, և քով մեծաւ ողորմութբդ ըզ մեզ յամի ողորմելիս իմացեալ, ողորմեսցիս մեզ անչափ ողորմութբդ քով։ Այս ձայն ողորմագին պաղատանացս և ժողովուրդքն զհայցուածսն միաձայնեն ասելով առ հասարակ, տր ողորմեա։



Տալ

Արդ թէ քանի՞ կարեւոր է այս եօթն տուն քարոզիս ուսցիս․ զի ըստ ա՟մ ժամուց եւ ըստ իւրաքանչիւր կարգաց ա՛յլ եւ ա՛յլ քարոզք են․ իսկ սոքա յա՟մ ժամու պաշտին․ եւ ՚ի գիշերին երկիցս․ մի յիսկզբանն եւ մի ՚ի կատարմանն։ Արդ եւ զերիս տունսն՝ յա՟մ ձայնի՞ քարոզսն դնեմք, զառաւե՛լ պիտանութի՟ սոցա յայտ առնելով։

Աղօթք Գիշերապաշտման։

Զքէն գոհանամք տ՟ր ա՟ծ մեր․ որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութե՟։

Ա՟ զի հրամայեաց քարոզն գոհանալ զք՟յ, յառաջ կալով առաջնորդին բերան ա՟մ ժողովրդեանն լեալ․ եւ զսիրտս ա՟մցուն յինքն միացուցեալ, եւ ո՟պ մի ոգի զամենայնն ժողովեալ․ զհասարակաց գոհութի՟ն եւ զաղօթսն միով լեզուով մատուցանէ ա՟յ․ նախ զգոհութի՟ն եւ ապա զաղօթսն։ Քանզի այսպ՟ ուսուցանէ առաքեալն․ ի գոհութե՟ ասէ խնդրուածք ձեր յայտնի լիցին առ ա՟ծ։ Զոր եւ երանելի վ՟րդպ՟տն յոհան առել զբանս զայս՝ ասէ, ըստ առաքելական խրատուն յորժամ կամիցիս խնդրել ինչ յա՟յ, նախ գոհացի՛ր զորոց առեր, եւ ապա խնդրիցես․ զի այնպէս լսելի լինիցին։

Ըստ այնմիկ եւ սկիզբն աղօթիցս գոհութի՟ է․ Զքէն գոհանամք տ՟ր ա՟ծ մեր։

Պարձեալ՝ զառաւե՛լ ընտանութի՟ն ընդ մեզ հաստատելս յուշ առնէ, Տ՟ր ա՟ծ մեր ասելով։ Որպէս աբրահամու եւ իւրոցն ասի վ՟ս մտերիմ ն՟ց ծառայութե՟ն․ թէ եւ ամենեցուն ա՟ծ է։

Սոյնպ՟ եւ հաստատեցելոց



առա

առաւել կոչի ած ։
Նոյնպէս և որ լուսա
ւորիչն անց ․ որ ասէքդ
Թէ ած քոէ՝ բարուոք ա
սէք ․ զի որք ճանաչենն
զնա, նոցա՛ է ած ։ Իսկ
որք ո՛չն ճանաչէն զնա,
Թէպէտ և են նորա արա
րածք, սակայն հեռի՛ են
'ի սիրոյ և'ի խնամոց բա
րերարութեան նորա ։
Զայս և մրգրէքն յա
ճախ առնեն ․ զի է որ ած
ժողովրդեանն կոչեն ըզ
նա ած, և է երբեմն զի
ւրենց իսկ առանձինն ։
Ժողովրդենն, յորժամ
ասեն, ‖ տր ած իէլի ։
Եւ կամ ‖ տր ած մեր ։
Իսկ իւրենց առանձինն՝
ած ած իմ, ես առ քեզ
առաւօտ առնեմ ։
Եւ թէ՝ դու ած իմ մի՛
յամենար ։ Եւ թէ՝ ած
իմ ես դու՝ խոստովան
եղէց քեզ ։ Զսոյն և
'ի պօղոսէ գտանեմք ա
սացեալ ։ ‖ Գոհանամ զայ
իմոյ ։ Եւ ‖ գուցէ նկուն
ինչ առնիցէ զիս ած իմ

առ ձեզ ։ Եւ թէ՝ ‖ ած
իմ լի՛ արասցէ զամենայն
պէտս ձեր ։ Եւ այլ ևս
բազումս յառաքելոց և
յայլոց սբցն գտանեմք
ասացեալ ։ Որք առ ջերմ
եռանդն սրտին սիրոյ
խանդաղատէին՝ զհասա
րակաց տրն կոչելով այ
զառանձնականն ։ Նոյնպ
և աղօթքն՝ տր ած մեր
ասելով, բորբոքէ զգութ
մեր 'ի սէր նր ։ և զնորայն
'ի մեզ յանկուցանէ ։
Գոհանալն շնորհակա
լութի է ։ Եւ զորմէ՞ է
գոհութին ։ Զի հան
գոյց քնով զաշխատութիս
մեր ։ և զի խաղաղութե
պահեաց ։ Քանզի բա
զում և ազգի ազգի փոր
ձութիք յերևելիս և
յաներևոյթս կան մարդ
կային կենացս ․ մանաւ
անդ 'ի քնոյն ժամն ․
Զի բազում անգամ
յարձակին դևք հեղձու
ցանել և տանջել և զար
հուրեցուցանել ․ և խա
փանել լինին 'ի հրեշ

տակաց այ։ Զանան և
որոգայթս պատրաստել.
և ած անցուցանէ զմեօք։
Այլ և 'ի գազանաց և
'ի զեռնոց և 'ի սողնոց
ևս՝ և 'ի փոքր ճըճեաց
և ցաւք և մահք և վը
տանգք մեզ մերձին. և
փրկութի գտանեմք առ
յայ։ Յաղագս որոյ և
երանելին յոհան, առա
ռելքան զոր երևիս մեզ
և գիտիս, զանգիտելիան
ասէ լինիլ մեզ խնամ և
պահպանութիւն յայ։
Եւ մեր զայս ամ զմտաւ
ածելով պա՛րտիմք գոհա
նալ յամի։ ոպ առաքեալն
ասէ։ Գոհացարուք յամ
ժամ 'ի վր ամի։ Որպ և
ասա աղօթիցն գոհութի
վս զհանգիստ քնոյ շնոր
հելոյ. և զի խաղաղութբ
շնորհեաց. և զի զարթ
նուլ ետ և կանխել 'ի
փռբանւի անուան իւրոյ։
Քանզի ասէ։
Աւ ժամանեցուցեր ըզ
մեզ կանխել 'իփառա
բանութի և 'ի պատիւ
ամենսբ անուանդ քո։

Զ որ մեծ երանութի
մարգարէն համարի։
Երանելիք են ասէ որ
բնակեալ են 'ի տան տն.
յաւիտեանս յաւիտենից
օրհնեսցեն զքեզ տր։
Այսմ երանութե հասել
կանխեալքն 'ի տուն այ
և 'ի պաշտօն նր և 'ի փա
ռաբանութի սբ անուան
նր, 'ի պատուել զմեծու
թի նր, գոհանան զշնոր
հացն այ՝ բերանով առաջ
նորդին և միաբանութբ
ոգւոցն։ Այս ասէ,
Տուր մեզ տր աղաչեմք
զքեզ։
Զի աղաչանաց սովոր
ես ողորմել, վասն այնր
տուր, և ոչ զի արժանի
ինչ եմք. Ած զինչ է
խնդիրն։
Զ առաջակայ ժամ գի
շերիս առանց մեղաց և
առանց գայթակղութե
անցուցանել։
Քանզի հանապազ խսկ
բայց առաւել 'իժամ ա
ղօթիցն նետաձիգ լինիլ
սովոր է բանսարկուն,

աղաչէ՛ ապրիլ՝ ի պատրա
նաց նր՟ . և ազատ մնալ
յա՟մ մեղաց ծառայուէ.
և ո՛չ զօրել մեզ գայթակ
ղութեց նր՟ . այլ երկի
ղի՛ն ա՟յ պարսպիլ .

Ո՛չ միայն ՚ի մնացուած
գիշերին, այլ և յա՟մ ժա
մանակս կենաց. ա՛յսպէս
ասելով.

Նա՛ զա՟մ ժամանակս պան
դխտութն մերոյ՝ եր
կիւղի՛դ քո ամրացո՛ .

Պանդխտուի կոչէ զաս
տի կեանս ըստ մարգա
րէին, որ զի՛նքն և զա՟մ
հարսն պանդուխտս կո
չեաց որ սուրբքն էին.
Նա՛ ըստ տն՟ որ ա՛սց թէ՝
‖ դուք չէք յաշխարհէ.
այլ ես ընտրեցի զձեզ
յաշխարհէ. Ս՟րոյ և
առաքելոյն յովհաննէս
յաղագս այլոցն ասէ,
‖ յաշխարհէ՛ են, և աշ՟ս
լսէ՛ նց՟. մեք յա՟յ եմք.
որ զա՟ծ ճանաչէ, լսէ՛ մեզ.
Նա՛ զի՛ որ յա՟յ է, պան
դո՛ւխտ է յաշխարհի.
յայն սակս և առաքելոյն
պետրոս պատուիրէ՛ յա
սելն, ‖ և եթէ հայր կոչի
ցէք զառանց ակնառու
թն դատօղն, ապա եր
կիւղի՛ւ զձերոյ պանդխ
տութե ժամանակն գնաս
ջի՛ք. Նա՛ ըստ առաքելո
կանիս խրատու՝ մաղթէ
բան աղօթիցն եթէ,

Զա՟մ ժամանակս պան
դխտութե մերոյ՝ երկի
ղի՛դ քո ամրացո՛ .

Քանզի չի՛ք ինչ զգու
շաւոր ամրուի քան զեր
կիւղն ա՟յ . և ո՛չ դիւրըմ
բռնելի սատանայի քան
զաներկիւղսն յա՟յ . զի հե
ռի՛ են յա՟յ՝ հեռացեալքն
յերկիւղէ նր՟ . Իսկ եր
կիւղածք նր՟ մերձենան
առ նա . և այցելուի նր՟
շո՛ւրջ է զնոքօք և պահէ
զնս՟ . քանզի և բանակօք
հրեշտակաց պարփակէ՛
զնս՟ . Նա՛ ըստ ասելոյն
սաղմոսի, ‖ երկիւղ տն՟
ածէ՛ զանխռովութիս և
զթշնամանս և զամբար
տաւանուի. Նա՛ ոմն յե
րանելի վրդպտցն ասաց,


ուր

ուրանօր երկիւղ է, մնդ-
է պատուիրանաց պահպա
նութի և մարմնոյ մաք
րութի և որ 'ի կարգին․
Զոր և աղօթիցն բան՝
յետ զերկիւղն այ հայցե
լոյ՝ անարատ միալ ասէ
և զգուշաւոր ըղ կեալն
յաշխարհի․ այսպէս
ասելով․
Զի զգուշութե և ա
նարատ վարուք կրօնա
ւորեալք յայսմ աշխար
հիս․
Զի որ երկնչին, զգոյշ
և պատրաստ հանապազ
կան․ և զգուշանալովն
ոչ ըմբռնին յարատէ՝
մեղաց․ այլ ըստ այ կրօ
նաւորին յայսմ Ճիս, և
հասանին յապահով և 'ի
խաղաղ նաւահանգիստն․
զոր անքոյթ կոչէ բանն
ասելով,
Յամանեսցուք յանքոյթ
հանգիստ յաւիտենական
կենացն․
Ուր հողմք և ալիք մե
ղացն ոչ բերին․ այլ ան
երկիւղ ամ խռովութեց

կեանս յաւիտենականս
ստանան, որ է անհաս և
անսպառ՝ լի ամ բարութ․
Այլ լինի այս,
Շնորհօք և մարդասի
րութ տն մերոյ և փրկ
չին յի քի․
Վանզի քո ասէ սիրե
լովդ զմարդիկ և առ մեզ
գալովդ և 'ի վր մեր մե
ռանելովդ, հանդիպ իմք
այսմ ամենայնի․ զոր և
‖շնորհք քն սովորեն կո
չել գիրք․ Այլ տր եփրե
կիչ մեր 'ի խոստովանիլն
զնա, 'ի վիճաբանութի փակէ
զբանն յասելն․
Որում վայելէ փառք
իշխանութի և պատիւ․
Այսելեւ նմա՝ ցուցա
նէ՝ թէ նմա միայն ան
կաւորէ փառաւոր լինիլ
և իշխել 'ի վր ամի․ և
պատուիլ յամնցունց․
Յաժմ, զառ ձեռն ժա
մանակն ասէ․ և Միշտ,
զհանապազորդեանն․
և Յաւիտեանս յաւիտե
նից, որ 'ի հանդերձելն
է անսպառութեամբ․


Այլ

Եւ ժողովուրդքն միա
բան ասէին զամէնն. եւ
սակաւ բանիւս հաւա
սարին բովանդակ ասա
ցելոցս. գոհութեն եւ
մաղթանաց. Եւ է այնն՝
եբրայեցի բարբառով՝
այո, եւ արդարեւ.
Խաղաղութիւն ամենե
ցուն.
Սա այսր խաղաղութե
երկայն բանիւք եզում
գիրս խօսելով երանելի
վարդապետն յովհան եւ
այլք 'ի վարդպտաց մեց,
ասեն զսա զողջոյնն զոր
հրամայեաց քս առաքե
լոցն՝ ‖ տալ տանցն յորս
մտանիցենն. Եւ զի հա
սարակաց տունէ եկեղե
ցին, 'ի նմա հանդպզ տայ
գլխաւորն եկեղեցւոյն
զողջոյնս զայս. Եւ սա է
‖ խաղաղութին զոր տրն
հաստատեաց առաքելոցն.
որ լի՛ է ամ բարեաց պար
գեւօք. Եւ զի միջնորդ
կայ առաջնորդն՝ այ եւ
մարդկան, հանէ զաղօթ
սըն ժողովրդեննն առ ած՝

եւ իջուցանէ զնր խաղա
ղութին յերկիր առ մար
դիկ. Վա այնորիկ յետ
օրհնութեցն, կամ յետ ա
ղօթիցն, կամ 'ի կամիցն
կարդալ աւետարան,
տայ զխաղաղութիւնն.
Զի յաւետարանեցն՝
առաքելաբար տայ զող
ջոյնն, եւ ապա աւետարա
նէ. Իսկ յօրհնեցն կամ
յաղօթեցն՝ յերկինս ըզ
միտս տանելով զաղօթս
եւ զօրհնութիս, առ մեզ զա
մենապարգեւ խաղաղութի
նր բերէ. Զի ոպ հա
սարակաց ժողովրդեանն
բերան է, նոյնպ եւ այ.
Որպ ասաց մարգարէն,
‖ եթէ հանցես զպատուա
կանն յանարգէն, բերան
իմ եղիցիս. Եւ զի ա
ռաջնորդաց գործ է ըզ
պատուիրն զմարդն որ է
պատկեր այ յանարգութե
մեղաց հանել մկրտութ
եւ ապաշխարութ. վարդա
պետելով նմա զհաճոյսն
այ. վա այնորիկ բերան է
այ. Եւ զորօրինակ որք

 Հրեշ

Հրեշտակե՛ն զպատգամա
ւորութի երկոցուն կող
մանցն, տանին և բերեն
զերկոցունցն բանսն։
Ա՛յսպ առնեն և առաջ
նորդք եկեղեցւոյ, ինքն
կալով այ և ժողովրդեանն,
բանս տանին և բերեն.
և կոչին Հրեշտակք տն
ամենակալին 'ի մրգրէէն։
Որդ մատուցել այ զա
ղօթիցն հայցուածս, փո
խադարձե՛ն ժողովրդեանն՝
զխաղաղութեն ընդունե
լութի ամենատարանելով։
Այլ թէ ասիցեն, վասն որոյ
առաքեցիքն՝ լուաւ, և
զխաղաղութին իւր առա
քեաց բերել ձեզ զամ
պարգևս. ոչ միում ու
մեք կամ երկուց, այլ
բովանդակ ամ ժողովրդ
դեանդ. Այ ա՛յնր 'ի խա
ղաղութ ին յանելու՝ զա
մենեցունն՝ ասելով,
Խաղաղութի ամցուն.
Ա՞յս զի ամենեցե բանս,
ըստ ամենեցուն պայմանի
առնեմք գդարձուած.
բանին։ Զի երբ ասէ
ամենեքերն թէ ամենայն
ձեզ. ասեն նմա, և քեզ
բարեացդ ամենայն։
Այսինքն թէ՝ ամենեցդ
բարիք և քե՛զ պարգև
եսցին։ Այսպիսի առ
նեն և ժողովուրդքն.
լսելով զխաղաղութեն
ամենայն, ձայնե՛ն միա՛ն,
Ա՛ընդ հոգւոյդ քում։
Այսպիսի ինչ թէ, և
քո՛ւմ ոգւոյդ եղիցի զոր
մե՛զ ամենաւորեցեր։
Այլ առ այս որ արհա
մարհանօք և ո՛չ սրտի
մտօք առնուցուն և տայ
ցեն զխաղաղութիւնն,
գրեթէ թափուր յամ
պարգևաց խաղաղութեն
մնասցեն. Այլ որպ ասա
ցի՝ յոլո՛վ են առ այսպիսեցն
բանք. և մանաւանդ ե
րանելւոյն յովհաննու.
անդ զուսումնասէրսն
առաքեսցուք. և մեք յա
ռաջ ըստ կարգին զբանն
վարեսցուք.
Հրամայէ՛ ապա սարկա
ւագն, Այ երկիր պա
գեսցուք.

Բանզի և այսպ է օրէն.
պարգևատուութիւն 'ի Թա
գաւորաց՝ ուսուցանեն
հրահանգօղքն երկրպա
գութե շնորհ ունել:
Օ սոյն և սարկաւագն
առնէ. Մն ասէ՝ որ լը
ւաւ զպատգամաւորին
ձերոյ զաղօթից բանս.
և ետ ձեզ զխաղաղութի
իւր. որ ունի զամ ձեր
զհայցուածոց լրումն.
երկիր նմա պագէք:
Եւ երկրպագելով ամե
նեցուն, անդէն առ պար
գևատուն ասեն միաբն,
Առաջի քո տր:
Որպ ինձ թուի՝ ասեն
եթէ՝ դու տր մեր առ
ամենեսեան մերձենաս
որ կարդան առ քեզ.
և ուր երկրպագեն քեզ՝
առաջի քո է. և մեք այժմ
զոր երկրպագեցաք ա
ռաջի քո է և տեսանի 'ի
քէն. Բանզի և առ մար
դիկ յոլով անգամ զայս
առնեմք. թէ և տեսանի
'ի նմանէ երկրպագելն,
սակայն մեք յաւելումք
ասել, երկրպգի իմ տնդ.
Նպա անդրէն դառնայ
առաջնորդն առ տծ կըր
կին տանիլ զժողովրդնն
պաղատանս. Եւ զօրօրի
նակ՝ պարգևաբերքն դառ
նալով 'ի պարգևատուն,
ասեն նախ եթէ՝ երկիր
պագին և գոհացան. և
ապա զայլ և խնդիրսն
ասեն: Այնպ և առաջ
նորդն նոյնպիսի օրինա
կաւ առնէ սկիզբն բա
նիս ասելով.

Նայեաց տր բարե
րար ողորմութբդ
քո յերկրպագուս և 'ի
փառաբանիչս անուանդ
քում սրբոյ:
Եւ վս զի ողորմութբ սո
վոր ես խոնարհիլ 'ի
մարդիկ, և 'ի գոռովոյ և
'ի գթոյ հարկիս նայիլ
յամենեսեան թէ և ոչ
ունիցին արժանիս:
Նոյնպէս և 'ի քո ժողո
վուրդս նայեաց ողորմե
լով. տեսանել զքո զեր
կրպագութիս, և ունկն

դնել սոցա փառաբանու-
թեանս։ Եւ ապա ասա-
ցեալ վ՟ երկրպագելոյ
ժողովրդեանն, եթէ միշտ
երկրպագուք և փառա-
բանիցք ո՟բ անճառնդ քո
են, յարէ 'ի նոյն զպա-
ղատանսն։

Խաղաղացո զանձինս
մեր յա՟մ սատանայական
խռովութեանց և յաշ-
խարհական զբօսանաց։
Զհրեշտակ խաղաղու-
թե՟ քո առաքեա առ մեզ
որ եկեալ պահեսցէ ըզ-
մեզ անխռովս 'ի տուէ
և 'ի գիշերի յարթնու-
թեան և 'ի հանգստեան
մերում։

Զանազան խորհուրդք
ահագինք և խռովարարք
զոգիս մեր վտանգեն.
և աշխարհիս հոգք և
զբաղմունք խանգարեցու-
ցանեն զմիտս մեր. աղաչէ
զի խաղաղասցին ոգիք
մեր յայնպիսեաց դառն
վտանգից։ Եւ այս լի-
նի եթէ հրեշտակք ա՟յ ի
բաց հալածեն զդիւացն

բ

մարտս. և դիւրութի՟ս
արասցեն մեզ 'ի զարհու-
րանացն դիւականաց և
'ի ցնորից աշխարհակա-
նաց. Որ 'ի քուն և յարթ-
նութե՟ պղտորումն և եր-
կիւղս պակուցանօղս ան-
ձանց մերոց առնեն ան-
ճառելի ցնորիւք 'ի տուէ
և 'ի գիշերի. Ա՟ որոյ
արտասուաւլից պաղատա-
նօք հայցելի է մեզ զհրեշ-
տակացն պահպանութի՟ս.
Զի ո՟պ որոց 'ի թագա-
ւորաց պահապանս տա-
ցին՝ աներկիւղս պահին
'ի հակառակամարտիցն.
Նոյնպէս և վ՟ որոց ա՟յ
պատուիրեալ է հրեշտա-
կաց իւրոց պահել զն՟.
անհոգս մնան յա՟մ չարին
արկածից. և զերծեալք
'ի բռնահարութէ որսո-
ղին անխափան և զօրա-
ւոր զառաքինութեն գը-
նան ճանապարհ. վ՟որոյ
և յարէ 'ի նոյն։

Ո՟պ զի պարկեշտութե՟
և արժանաւորապէս
քեզ տ՟նդ ծառայելով 'ի



կեանս

կեանս յայսմիկ։
Բանզի արգելուն վասն
թար խորհուրդք զպար
կեշտութե վարս այսպիսի
օրինակաւ։ Կամիմք՝ ի կե
րակրոց և ըմպելեաց պար
կեշտանալ, և խորհուրդք
զորկրամոլութի՝ ի վեր յա
րուցանեն։ Կամիմք՝ ի
քնոյ զգաստանալ, և խոր
հուրդք՝ քնոյ զմեզ տալ
դրդեն։ Կամիմք և յըն
չիցն ծառայութե ազա
տանալ, և խորհուրդքն
զագահութիւն մեզ օրի
նադրեն։ Կամիմք համ
բերել թշնամանաց և
անարգանաց և զրկուեց
և ցաւոց և աղքատութեց
՚ի վերայ հասելոց, և խոր
հուրդքն զամբարտաւա
նութի և զանձնագանդու
թի և զանհամբեր բարս
մեզ ուսուցանեն։
Նոյնպէս և այլովք առա
քինութեք կամիմք զգաս
տանալ, և խորհուրդքն
զմեզ մեղկեն և լքուցա
նեն և անկարելիս մեզ
զայսոսիկ առնեն։

Յաղագս այսորիկ խա
ղաղանալ հոգւոյն աղա
չէ, և ՚ի հրեշտակէ՝ այ
ընկերկիլ առ ընդդիմա
կաց խորհրդոցն։ որպէս զի
նոցա խափանեալ՝ զօրաս
ցուք առաւել պարկեշտա
նալ. և արժանաւորապէս
ծառայել այ։ Ո՛չ յսէ ար
ժանաւորապէս ծառայել
այ, որչափ կարն մեր զօ
րէ, ըստ նորա մեծութեն
զծառայութիւն մեր բա
զում երկիւղիւ հատու
ցանել։ որպէս այ ծառայել
պարտէ մարդոյս հողոյս
և ստեղծուածոյս անար
գիս և փոքու՝ մեծին և
փառաւորելոյն և անբա
ւի արարչին և խնամողին
և փրկողին։ Ոչ եթէ որ
չափ նմա արժանաւոր է
կարեմք ծառայել նմա,
այլ որչափ մերս բաւա
կանանայ տկարութի,
և մեք ո՛չ հեղգայցեմք,
արժանաւոր ծառայութի
մեզ համարի զայն։
Ոչ յսէ զոր ասէն, պար
կեշտութե և արժանաւո


րա

րապէս քեզ տՆդ. ծա
ռայելով 'ի կեանս յայ
սոսիկ։

Ա՟ է՞ր յաւել 'ի կենս յայնոսիկ. քանզի այսու կենօքս մտերմութի առ արարիչն ցուցեալ, անըսպառին և անապականին կենաց առ հասարակաց տՆն ուրախ լիցուք միշտ վայելելով։ Որպ և յարէ 'ի նոյն։

Ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեն քոյ, զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ Ծի սբց քոց։

Ա՟յ և մեք զայս իմասցուք, եթէ յերկրի և յանցաւոր կենս սակաւ աշխատելով, յերկինս յաւիտենս յաւիտենից թագաւորեսցուք ընդ քի և ընդ սբս Նր. զի այսպէս է արքայութեն թագաւորութի որում արժանանան սբքն։

Եւ ընդ նոսին առ գոհանալով փառաւորեսցուք զամենասուրբ զԵրրորդութիդ։

Որով յայտ է եթէ կըցորդին մեզ սբքն 'ի գոհութի և 'ի փառաբանութին այ՝ և յայս ևս կենս. քանզի 'ի մի շնորհս կոչեաց զմեզ և զնոսա յանանց թագաւորութին. որոց պատրաստութին 'ի սկզբանէ աշխարհի յա՟յ կարգեցաւ։ Նոքա գընացին զճանապարհ որ յանտի երանութեան տանի. որ թէ և մեք նոյն ճանապարհցն ուղևորք լիցուք, աստէն իսկ զառհաւատչեայ յուսոյն ընկալցուք. աստէն և սըրբոցն հղորդ լիցուք յուրախալից փառաբանութեան այ, և 'ի կեանս մերձակայս, և միշտ յամ աւուրս մեր, և յաւիտեանս յաւիտենից յայն անկէտ և անթիւ աւուրն յետնում որ ոչ ունի ըզվախճան։ Եւ ժողովուրդն ասեն միաբան, ամէն։ Եւ այսու նկաւ բանիւս տմ գոհութեցն և աղօթիցն հաւանորդ



լը

լինին ։ Ա՟յ և վկայու-
թի՟ սովոր եմք կոչել ․ զի
զա՟ձն ասելով, վկա՛յ լի-
նիմք ա՟մ ասացելոցն յա-
ռաջնորդէն ։ Եւ յաւե-
լու ՚ի նոյն թէ, Օրհ-
նեալ է տ՟ր ։ Զի որպէս
ասէ առաքեալն ․ Հաւա-
տամք եթէ առնումք ըզ
հայցուածն զոր հայցեմք
առ ՚ի նմանէ ։ Ա՟ն այնո-
րիկ և ըստ այնմ օրհնա-
կի զոր ասացին, իբրև
պատգամաւորաւ զմեր
խնդիրն յ՟այ առաջնոր-
դաւն հայցեալ ․ և հա-
ւատացեալ թէ տայ, ա-
սեմք եթէ, օրհնեա՛ զա՟ծ
ընդ մեր ։ Եւ նա անդէն
օրհնէ ասելով, Օրհնեալ է
տ՟ր մեր յ՟ս ք՟ս ։ Եւ միա-
բան ասեմք ամէն ։ Զի
յայտ լիցի թէ մեք շնոր-
հակալութի՟ տուաք առ-
նել առաջնորդի եկեղե-
ցւոյն ․

Այլ թէ էր աղագաւ
աստանօր ոչ՟ ՚ի վախճան
ժամուն օրհնել հայցեմք ։
Թուի թէ առաջինքն
յայսմ վայրի գիրս ըն-
թեռնուին ։ Եւ ոչ՟ զկա-
նոն ՚ի կանոն չյարէին,
այլ զատուցանէին կար-
գացմամբք ․ Սոյնպէս և
ոչ զսաղմոսս առաջաբա-
նիցն ՚ի կանոնն յարէին,
այլ գրովք մեկնէին ։
Բանզի և կանոնական
բանն ա՛յսպ՟ս օրհնադրէ
չյարել զսաղմոսն ՚ի մի-
մեանս ։ Եւ սաղմոս ասե-
լով և ո՛չ կանոն, յայտ
առնէ թէ և յառաջաբա-
նից սաղմոսացն որոշել
արժանէ զկանոնն գրովք ․
Եւ օրհնեա՛ տ՟ր ասելն՝
զնոյն գուշակէ դարձել ․
Եւ զի կարեւոր ևս է
յայսմ տեղւոջ գրոց կար-
գացուածն վասն եկելոցն
մտաց նորոգութե՟ ․ և վ՟ս
չև ևս եկելոցն գալոյ ․
ոչ՟ զի ամենեքեան միա-
բան զսաղմոսին հոգևոր
երգ՝ տացեն ա՟յ ․ օժան-
դակ լեալ գրոցն խրատք
և լուսաւորութի ոգւոցն ։
Բայց թէ ընդէր այժմ
խափանեալ է ․ Ո՛չ վասն


այլ

այլ իւրի, այլ միայն վ՟ն պղերգութե. քանզի և զկանոնին դիրս 'ի յոլով տեղիս այժմ խափանեալ տեսանեմք. և ուր կարդանն, քնոյ պատճառ և ո՛չ խրատու օգտի ըզդիրսն առնեն ե՟ղուլք: Եւ ըստ յառաջանալ ժամանակիս՝ Թուի թէ և սուղ կարդացումն այս սպառի. քանզի աւելորդ իւրս և ո՛չ կարևոր յոլովից Թուի. Եւ երանի թէ աւելորդ միայն՝ և ո՛չ վնաս ևս իսկ համարէին բազումք, և վայրապար դատարկուք 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր գործոց: Եւ ասեն, զայսպիսի բանս և զմեղս և զարդարութի՟ ա՟մ ոք գիտէ. և եթէ խոստովիլ կամի 'ի չարէ՛ և զբարին առնել, տեղեակ է ա՟մ մարդ. իսկ զդրովք պատաղին չէ՛ ինչ շահ. այլ խափանումն 'ի կարևորաց: Եւ այսէ որ զամովսական ըսպառնացումն յարդիւնս աճէ. զսոմն ո՛չ հացի, և զծարաւն ո՛չ ջրոյ. այլ ‖ սովլսելոյ զբանն ա՟ծ: և թէ ո՟չ 'ի սովոյ խարշին և ապականին ոգիքն որք ո՛չ լսեն զպատգամն ա՟յ, յայտ մարգարէն առնէ: քանզի ո՟չ առանց մարմնակին կերակրոյ չապրի մարմին. նոյնպէս և ո՛չ առանց խրատու գրոց կեալ կարէ ոգին:

‖ Զայս և մովսէս ասէ: Զնոյն և տէրն 'ի վկայութիւն առնու ընդդէմ փորձչին. ‖ ո՛չ հացի ասէ միայն կեցցէ մարդ. այլ՝ ա՟մ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ ա՟յ: Եւ դաւիթ քան զմեղր քաղցր ասէ քրմաց զբանս ա՟յ: Զոր և գրիգոր ա՟ծաբանն ըստուգէ յասելն. կե՟րկուր իմն է վարդապետութի՟ն և կերակրողին. Եւ երանելին յովհան ասէ, զի՞նչ չար քո՞ զայն կայցէ՝ յորժամ զոր ա՟ծ 'ի տանջանաց կարգի՝ սպառնայ,

դու անձամբ յանձն կու
տես զապականիչ սովն։
Բա՛յց իմա զբանն եթէ
չգո՛յ ինչ ա՛յլ չար քան զայն։
Զի եթէ զկորնթացիսն
ողբայ Պօղոս զի չկրէին
զհաստատուն կերակուր
վարդապետութեն առնուլ.
այլ՝ կաթն ջամբել պի
տոյացաւ։ Նա և որ ո՛չ
կաթինն ջամբելոյ հաս
ցեն, որքան ողբալիք են։
Սա՛ նոյնպէս և զեբրայե
ցիսն բանբասէ՛ ասելով,
Եղէք կարօտք կաթին
և ո՛չ հաստատուն կերակ
րոյ։ Զի վասն Աստուծոյ բանին
ասէ զայս որ ոգւոցն է
կերակուր, յայտ յաջոր
դէն է։ Ամենայն որ կա
թընկեր է ասէ՝ տգէտ է
բանին արդարութեան։
Նա՛ ո՞րէ բանն արդարու
թն, եթէ ոչ՝ խրատք սուրբ
գրոց. և որ նոցա տգէտն է,
տակաւին տղայ է թէպէտ
և լաւ զնոսա։ իսկ որ և լաւ
ո՛չ, զիարդ կարէ ապրիլ։
Կատարելոցն է հաստա
տուն կերակուրն։ և

պ.

եթէ կերակուր է, ապա
և կենա՛ց է։ Որպէս ասաց
տէրն թէ Պատուէրն այն
կեանք են յաւիտենից։
Նա՛ եթէ պատուիրանն
Աստուծոյ՝ կեա՛նք են յաւիտենա
կան, յա՛յտ է թէ զուր
կեալքն ՚ի պատուիրա
նացն Աստուծոյ՝ մեռեա՛լ են յա
ւիտենական կենացն.
որպէս զրկեալքն ՚ի հարկա
ւոր կերակրոց՝ մեռեալ
են այսց կենացս։ Նա ո՛չ
միայն մեռեալ են այսմ
կենաց որք ո՛չն կերակ
րին պատուիրանօքն Աստուծոյ,
այլ և ՚ի խաւարի աստէն
են. քանզի ո՛չ ունին ըզ
լոյս պատուիրանացն Աստուծոյ։
Պատուիրանք տեառն լոյս
են ասէ, և լոյս տան ա
չաց։ Նա՛ ո՛չ լուսաւորէ
միայն. այլ և իմաստուն
առնէ։ Վկայութիւն տեառն
ասէ հաւատարիմ է, և
իմաստուն առնէ ըզ տը
ղայս։ Ճրա՛գ են ասէ
բանք քո ոտից իմոց, և
լոյս տան շաւղաց իմոց։
Որով յայտ է թէ որոց



շա

շամ̂իղքն այսու ո՛չ լու
սաւ̂որին, մինչ 'ի դայթակ
ղութեան են ոտք նց̅ ։
Ոպ̅ ասաց տ̅րն, որ գնայ
'ի գիշերի' գայթակղի ·
զի լոյս ո՛չ գոյ ը̅ նմա ։
Դարձեալ և 'ի նոյն սաղ
մոսին հաստատէ' զայն
թէ, և իմաստուն առնէ
զտղայս ։ Նաև զծերս
ասէ իմաստուն եղէ · զի
զպատուիրանս քո քննե
ցի ։ Դարձեալ, 'ի պատ
ուիրանաց քոց իմացեալ
ատեցի զա̅մ ճանապարհս
չարաց · զի դու օրէնս
դէտ արարեր զիս ։
Տե՛ս և զի՞նչ սողոմոն
ասէ, Ճրա՛գ է պատուի
րանն օրինաց · միանգա
մայն և լոյս յանդիմանու
թի և խրատ ։ Ո՞ սոյն և
գլուխ առաքելոցն պետ
րոս ասէ, ունիմք հաս
տատագոյն զբանն մար
գարէական · որում թէ
անսայցէք' բարւո՛ք առ
նէք · իբրև զճրագ որ
տայցէ լոյս 'ի խաւ̂արչտին
տեղւոջ · մինչև տիւ̂ն լու
սաւ̂որեսցի և արուսեակն
ծագեսցի 'ի սիրտս ձեր ։
Սա՛ ասե̅ց ո̅պ մարգարէն
ասաց թէ լուսաւ̂ո՛ր առ
նէ ։ Նա՛ պօղոս ըստ նո
ցին վկայէ թէ իմաստո՛ւն
առնէ, առ տիմոթէոս
գրէ, միտ դիր ընթեր
ցուածոց մխիթարութե̅
և վարդապետութեան ։
Նա՛ թէ, 'ի մանկութէ
զգիրս ս̅բս գիտես որ կա
րո՛ղ են իմաստուն առնել
զքեզ 'ի փրկութի̅, 'ի ձեռն
հաւ̂ատոցն որ 'ի ք̅ս յս̅ ։
Նա՛ յարէ 'ի նոյն թէ,
ա̅մ գիրք ա̅ծաշունչք
և օգտակարք' 'ի յանդի
մանութի̅ են և յուղղութի̅
և 'ի խրատ արդարութե̅ ·
զի կատարե̅լ իցէ մարդն
ա̅յ յա̅մ գործս բարութե̅
հաստատեալ ։ Նք̅ ասեն'
չե՞ն պէտք գրոց, և պօ
ղոս ասէ' օգտակա՛ր են ·
խրատեն ուղղեն և կա
տարե̅լ մարդ ա̅յ առնեն
և յա̅մ գործս բարութե̅
պատրաստեն ։ Ո՛րդ' դու
քեզէն տուր զերա̅ն'


թէ

թէ ո՞ւմ հաւանիլ ար
ժան է․ պօղոսի՞ թէ մո
լեգնոտացն որ արհամար
հեն զգիրս մեր․ Որոց
մարգարէն Եսայիաս վա՜յ
տայ․ Վա՜յ արհամարհո
ղաց ասէ, որ արհամար
հեն արհամարհանօք զօ
րէնսն․ Վա՜յ այնոցիկ որ
առ իմաստունս ունիցին
զանձինս, և յաչս անձինց
իւրեանց խորհրդականք։
Դարձեալ ուշ կալ․ թէ
տիմոթեայ որ լի՛ն էր հո
գւով մ͞ծւ և՛ի հոգւոյն
մ͞ծյ ուսանէր՝ պէտք էին
գրոց, որչափ և առաւել
մեզ։ Եւ զի՞նչ ասեմ տի
մոթէոյ, պօղոսի՛ իսկ գրը
խովին պէտք էին գրոց։
Գրէ՛ առ սոյն իսկ տիմո
թէոս, Մյրժմ գայցես,
բերջիր զգիրսն․ մանա
ւանդ զմատեանսն․
Եւ այն զի մօտ 'ի վախ
ճա՛ն էր․ Ես այսու հե
տև նուիրեա՛լ եմ ասէ․
և ժամանակ դարձի իմոյ
հասեալ կայ 'ի վերայ։
Ուստի յա՛յտ է թէ, որչա
հիւանդաց որոց յոյս հա
տեալ իցէ կենաց, հա՛րկ
առնեմք որչափ ունիցին
շունչ՝ կերակրել դոյզն
ինչ աղպէտաւ զի զօրաս
ցին ոգիքն որչափ 'ի մար
մնի իցեն։ Նոյնպէս և
հոգևոր կերակրոյն մին
չև յելանել ոգւոյն 'ի
մարմնոյն՝ պէտքն պահան
ջին։ Մանաւանդ եթէ
յայնժամ առաւել․ զի
զղջմամբ և յուսով և կա
տարեալ հաւատով գը
նասցէ աստի․
Բայց հարցից ցնոսա,
վայրապա՞ր հրամայեաց
ա͞ծ մովսէսի և մարգա
րէիցն գրել զգիրս․ և
կամ ունա՞յն գրեցին ա
ռաքեալքն զաւետարանս
և զթուղթս իւրեանց և
որ զգործս առաքելոցն
գրեաց, և կամ վարդա
պետքն զոր ինչ գրեցին։
Որակէս մի 'ի պատուի
րանացն ա͞յ՝ պատուակա
նագո՛յն է քան զերկինս
և զերկիր․ Ո͞րոյ պատ
ուիրէ՛ մովսէսի ա͞ծ․


թէ

Թէ ‖Եղիցին քեզ պատ
գամքս այսոքիկ զոր ես
պատուիրեմ քեզ այսօր՝
՚ի սրտի քում և յանձին
քում. և իմացուսցես
զայս որդւոց քոց. և
խօսեսցիս սոքօք ՚ի նըս
տիլ ՚ի տան և ՚ի գնալ ՚ի
ճանապարհի. ՚ի ննջել և
՚ի յառնել։ Եւ արկցես
զն̅ա նշան ՚ի ձեռին քում.
և եղիցի անշարժ առաջի
աչաց քոց։ Եւ գրեսցես
զսոսա ի վ̅ր սեմոց տանց
քոց և ՚ի դրունս քո։
Եւ դարձեալ յայս հայե
ցեալ, երանէ՛ որք յօրէն
սըն տ̅ն խորհին ՚ի տուէ
և՚ի գիշերի. Երանի տայ
որ քննեն զվկայութ̅իս
տ̅ն. բոլորով սրտիւ իւ
րեանց խնդրեսցեն զնա։
Սոյնպ̅ և Երեմիաս ‖Երա
նի տայ իէ̅լի վ̅ն այսր.
զի պատուիրանք տ̅ն լոյս
են ն̅ր։ Եւ եսայի ՚ի գի
շերոյն խաւարէ դիմէ
առ ա̅ծ, լոյս զպատուի
րանս ն̅ր ունելով. այսպ̅
ասէ։ ‖՚Ի գիշերաց կան

խէ հոգի իմ առաւօտ
առնել առ քեզ ա̅ծ. վ̅ն
զի լոյս են հրամանք քո
՚ի վ̅ր երկրի։ Եւ քարո
զէ՛ ամենեցուն, ուսա
րուք զարդարութիւն
բնակիչք երկրի։
Եւ ուստի՞ ուսանին
զարդարութ̅ի. եթէ ո՛չ ՚ի
հրամանաց ն̅ր որ լո՛յս է
երկրի։ Եւ եթէ այս
այսպէս է, խաւարով մը
թացեալ են ոգիք ատե
ցողացն զպատուիրանս
տ̅ն. և ո՛չ զլոյսն որ ՚ի
նոցանէն գիտեն. և ո՛չ
իմաստութ̅են որ ՚ի նոցանէ
են բաղձան։ Մեղադա
րեալք՝ և նման շամշե
լոցն խօսին։ Զի եթէ
գիտէին լսել ՚ի պօղոսէ՛,
թերևս իմանային։
‖Հաւատք ՚ի լսելոյ են
ասէ. և լուր՝ ՚ի բանէն
ք̅ի։ Եւ կամ տրուն̅են
ձայնին իսկ լսէին. ‖Քըն
նեցէք ասէ զգիրս, զի
նոքօք համարիք ունել
ըզ կեանս։ Նա և ‖մոլո
րեալս իսկ կոչեաց զայն


պի

պիսիսն որք անդէտք են
պատուիրանացն ա̅յ · զի
և զզօրութիւն ա̅յ անգիտա
նան ։ Իսկ որք զի պիտոյ
են պատուիրանքն ա̅յ՝ ի֊
մանան, այսպէս խօսին,
թէ վասն այսր զի զա̅յսն
խօսիցիմք՝ և ո՛չ վ̅ն այլ
իրիք բանաւորք եղաք·
Այլ եթէ՝ այսու լաւ եմք
քան զանասունսն ։ իսկ
յայլսն յոյժ տըկարա֊
գոյնք եմք քան զնոսա ։
Ոչ ի եթէ՝ ի մարմնաւոր
իրս իմաստնոցն խրատք
զօրանան, քանզի ո՛չ ՚ի հո
գևորան խօսեցելքն յա̅յ·
Այլ եթէ պղծոցն բանք
և ՚ի սատանայէ՛ ծնեցեալ
երգքն ‖ իբրև զքաղցկեղ
ճարակ գտանեն, և գե
րեն զմիտս զգաստից ՚ի
կորուստ ։ Ապա ո՛րչափ
հոգևոյն ս̅բյ ազդեալ
բանքն ՚ի հնազանդու֊թ̅
Քի̅ գերեն զունկնդրացն
ոգիս · Ոչ ի եթէ սոսկ
բան ո̅պ ասէ ա̅ծաբանն
՚ի յարութ̅ ճառին՝ յաւե
լուած ո՛չ սկ̂, այլ յո՛յժ

գ

օգտակար ։ Ապա ա̅ծա֊
շունչ բանքն քանզի բազ֊
մապատիկ յաւելուն զար
դարուն առաւելուն ։
Ոչ ի որքան միջոց ընդ
ա̅յ և ընդ մարդիկ է,
նոյնքան և ընդ մարդ
կային իմաստութ̅ խօ
սեցեալն և ընդ ա̅յ շնոր
հիւն ։ Այլ եթէ մարդ
կայինքն ո՛չ միայն առ մար
դիկ, այլ և առ անասուն
կարողանան ‖ ո̅րպ ասեն
գիրք· և զհեղգութիւն
զեզին և զձիոյ և զիշոյ և
զշան ՚ի փոյթ յորդորէ·
ապա զմարդ որ անասնա
գոյն հնդիպի ո̅պ զեզն,
և անմտագոյն ո̅պ զէշ,
և զվռնջելն ունիցի ՚ի կա
նայս նման ձիոյ, և շանց
գունակ ազգի ազգի պոռ
նկութ̅ պղծի · չկարէ՞
քաստուր խրատն դար
ձուցանել զնա ՚ի չարէն
՚ի բարին ։
Ամա՛, ո՛րքան ՚ի միում
աւուր որսաց ձկնորսան
բանիւն ուռկանաւ ՚ի կենս։
ո՛րչափ բիւրս ՚ի հրէից



՚ի

'ի սակաւ ժամանակս ա
ւտրանին հնազանդեաց։
Նա և խորանակարն ո՞չ
ապաքէն ‖ յհնդէ' մինչև 'ի
կողմանս լուրիկեցւոց'
բանիւ ընծայեաց քի
զանբաւութի մարդկան։
Ո՞չ և այլ առաքելոցն
բանք կարողացան յամ
երկրի լսիլ. և յամ ազ
գաց ժողովել յարքայ
ութեն աման։ Այլ ո՞պ
երանելին յովհան ասէ
վրդպտն տիեզերաց, թէ
սատանայական մրտա՛ց է
այն որ չտայ հայիլ մեզ
'ի դանձն, զի մի' զմեծու
թիւնն որ անտի'է շահի
ցեմք։ Նա՛ թէ' զոր օրի
նակ 'ի ծխի աչք բըժա
բերք և արտասուալիցք
լինին. իսկ որք 'ի մարդս
և յաղբերականս և'ի սբ
օդս զբօսնուցուն' սրա
տեսք և քաջահայեացք
լինին։ Ըստ այնմ օրինա
կի և ակն ոգւոցն եթէ
է ծուխ աշխարհիս իրոց
գայցեն, բազում վտան
գիւք խաւարալ և դառն
մրթով վարակեալ, ազգի
ազգի լալիւն և վայիցէ
և սուտ և անդ։ Ապա թէ
յաղբիւրս հոգևոր բա
նից ձայրակիցի, քաջատես
և սրանկն լինի։ Պարձի'
և որոց լսեն և ո՛չ պհեն
'ի մտի, մեղադրէ' սաս
տիկս։ Սակաւ ասէ ոսկի
գտեալ ուրուք 'ի քսակ
արկանէ և զգուշանայ
կապով և կնքով և պահ
պանութբ։ Նա՛ մեք ըզ
բանն այ զցանկալին քն
զոսկի և ք զականս պատ
ւականս' ո՛չ ամբարեմք
յոգիս. այլ թողումք սա
հիլ 'ի մտաց։ Նա՛ ո՛ այնու
հետև ողորմեսցի մեզ
անձանց նենգաւորաց,
և յայս քան աղքատուի
իջելոց։ Նա՛ զսերմնա
կալթն ‖ զպիղծն յօրի
նացն' երջանիկ վրդպտն
յայլում դրի նոցա օրի
նակէ, որք ո՛չ պահեն 'ի
միտս զսերմն բանին այ։
այլ ծորեցուցանեն 'ի մը
տաց։ վայ յո՛յժ պիղծք
են։ և թէ որ ո՛չ պահեն
'ի

՚ի միտս՝ առաւել պիղծք են. և ուր մերձինն պղծեն. Ապա յայտ է թէ բիւր պղծութե՛ լի՛են և կարի՛ անմերձենալիք, որք և ո՛չ լսել անգամ և ընդունել զբանն ա՟յ անսան. Իսկ թէ անդաստան և այգի անսերմ և անգործ չպտղաբերի. ապա և ո՛չ հոգի որ ո՛չ գործի և սերմանի ՚ի խրատուց ա՟յ՝ կարէ արդիւնս առնել. Նոյն ո՛պ օրինակէ եսայի վ՟ս հոգևորին զերկրաւոր մըշակութին ասելով, եթէ՝ նա՛խ կակղե՛ն, և ապա՛ զազգ ազգ սերմանեացն սերմանեն. Իսկ իվ՟ր բերէ թէ, խրատեսցիս դու խրաւամբք ա՟յ քո.

Յայտ արարեալ թէ այսպէս պիտոյ է արօրադրիլ ա՟մ ոգւոյ ա՟ծային երկիւղիւն, և զսերմն բանին կենաց ընդունիլ, և ապա՛ պտղաբերել ա՟յ. Որպէս և մ՟ե լուսաւորիչն օրինակէ երկրին սերմանեաց զսերմ ա՟ծպաշտութեն. և յիշէ՛ զակօսելն և զցախելն և զայլսն. Իսկ ասէ, նո՛յնպ՟ պարտիք կակղել զանդս մտաց ձերոց, զի սերմանիքն մ՟ե և օգտակար ցանիցին ՚ի ձեզ. Իսկ թէ այսպիսի ջինից պէտք են՝ անջանքն և անվաստ՟կքն և ուր ո՛չ սերմն ա՟ծպաշտութեն ցանիցի, զիա՞րդ արդիւնարարք լինիցին. Զի եթէ ‖սերմանահանին ՚ի չորից մի մասն արդիւնացաւ, ապա անսերմնացանելոյն զիա՞րդ արմրտիք լինիցին. Բայց զի ՚ի սատանայէ խօսին որք խափան լինին դրոց լսողութե, ասացաք փոքր ՚ի շատէ. դարձեալ ՚ի կարգն դարձցուք որում սկիզբն արարաք. Զի թէ և կարև որ է ընդէմ նոցա երկայնել զբանս, և յոլո՛վ են առ այս առասացութիւնք սրբոյն ձայնից, այլ ո՛չ թողու զմեզ պատաղիլ զայսու՝

շատուն երկիս որ առաջի
կայ։ Վայ սակաւուք
պատճառաւ տուեալ ու
սումնասիրաց, ՚ի մեր
խնդրոցն լուծումն յա
ռաջեսցուք։

Յաղագս Սաղմոսին որ յետ
Լ. չօրնիչին։

Յետ կատարման
աղօթիցն՝ սկսա
նին զկանոն սաղ
մոսին է գուբղայիւք
փառուք կատարելով։
Այս սարկաւագն քարո
զէ ը ամ գուբղայի,
Այս և խաղաղութեան
զտր աղաչեսցուք։
Լ. յսինքն թէ՝ և վս խա
ղաղուե դարձլ այլ աղա
չանս այ մատուսցուք։
Զ՛ի նան այլէ, և՛ նոնան
այլ։ Զ՛ի ուսցուք եթէ
հնապազ զնր խաղաղու
թին պարտիմք խնդրել։
Այս ապա ասեն ժողո
վուրդքն, տր ողորմեա։
Լ յսու զխոնարհութ
վրդպտիմք • զի ողորմիլ

մաղթեմք • և զպարգևս
խաղաղուեն շնորհել •
զի ողորմելի՛է աղքատն
և տնանկն և աղկաղկն։
Այս զի աղքտցաւ մարդ
կայինն բնութիս ՚ի փառաց
և ՚ի կենաց և յանապա
կանուէ և յարդարուէ.
և ամիս ողորմելի եղև։
Զ՛որ և թէպէտ ողոր
մութին այ դարձեալ ՚ի
փառս էած և նորոգեց
և անապական կենս խոս
տացաւ, և արդարս և
սբս և որդիս այ զմեզ
արար։ Սակայն դիւրա
դայթ մեր բնութիս յամէ
վրիպեցուցլ զմեզ ողոր
մելիս և եղկելիս առնէ.
վասն այնր՝ և նմանութբ
անառակ որդւոյն զոչ
արժանի լինիլն այ որդի
ուեն ընդ միտ ածեալ,
ողորմութբ յայ խնդրեալ
զմեր օգնութն աղաչեմք։
Վս այնր զխաղաղութ
խնդրել հրամայեալ քա
րոզէն, ասեմք միաբան,
տր ողորմեա։
Լ՛աէ ապա և քարոզն,

կեցո՛ և ողորմեա՛ց մեզ
տ՟ր։ Զ՟ի զամենապար
գև խաղաղութ՟ի քո
ասէ տուեալ վ՟ս ողոր
մութ՟ե, նո՛յն ողորմութ՟ք և
կեա՛նս շնորհեա՛ մեզ։
Եւ միաբանեալ նմա ա՟
սեմք միաձայն, կեցո՛ տ՟ր։
ապա ասէ ա՟ռ՟ջնորդն,
Օրհնութիւն և փառք
հօր և Որդւոյ և հո
գւոյն ս՟րբ՟յ ։ Այժմ և
միշտ և յաւիտեանս յա
ւիտենից։
Նստանօր զհամագոյու
թիւն Երրորդութ՟ե՟ն
և զմիասնականութ՟ի և
զհաւասարութ՟ի պատւոյն
յայտ բերեմք. միով օրհ
նութ՟ք և փառօք զհայր
և զորդի և զս՟բ հոգին
բարեբանելով. Որ 'ի մի
ա՟ծութ՟ին երեք անձնա
ւորութիւնք միանան։
Օրհնեալ և փառաւո՟րլ
են այժմ և հանապազ
և յանբա՛ւ յաւիտենին
ամէն ։
Ա՟ս յաւիտենին ասա
ցեալ եմք, նա՛խկայ ասել։

Եւ վ՟ս յաւիտենից յա
ւիտենին, զի կոչի մի յա
ւիտեան յաւագ քան զա
րարածս։ Եւ կոչի ա՛յլ
յաւիտեան յիսկզբանցն
արարածոց մինչև 'ի գա
լուստն ք՟ի երկրորդ։
Դրձ՟լ ասի յաւիտեան,
որ 'ի գալստենէն ք՟ի ան
ըսպառ և անհատն, որ ո՛չ
ունի կատարումն ։
Եւ զի սկզբանն յաւի
տեան կոչի՝ ուսցի՛ս 'ի
մ՟րգ՟րէէն յասելն զա՟ծ,
յաւիտենից մինչև յա
ւիտեանս դո՛ւ ես ։
Եւ 'ի կուրին ասելոյն,
յի՟տենից ո՛չ ո՟ք լուա՛
բանալ զաչս կուրի ։
Եւ 'ի պօղոսէ՛, որով ըզ
յաւիտեանսն արար. վ՟ս
որդւոյն ասէ զհօրէ։
Եւ զի գալուստն ք՟ի՝
այսմ յաւիտենիս սպա
ռումն է՝ ա՟մ ուստէք դի
տելի՛ է. Նա՛խ յօրինացն.
յորում զբաղո՛ւմ իրաց
ասէ, օրէն յաւիտենա
կան քեզ և որդւոց քոց։
Եւ յայտ է, զի այսմ կե
նաց

նաց պիտոյ է օրինադրու
թիւն՝ և ո՛չ հանդերձե
լումն։ Եւ դաւիթ ասէ՝
՚ի սկզբանէ ծանեայ ՚ի
վկայութեց քոց. զի յաւի
տեան հաստատեցեր զնս։
Ըստ եպիփանու՝ զլուսա
ւորսն կոչէ վկայս. որք
հաստատեալ են մինչև
՚ի կատարումն ա՛յսց կե
նացս. և ՚ի նշանս և ՚ի
ժամանակս և յաւուրս
և ՚ի տարիս։ Եւ ըստ
միւսում բանին սոյն այս
յայտ ցուցանի. Զա
ւակ նր ասէ որ է դաւ
թի, յաւիտեան կացցէ.
և աթոռ նր ո՛պ զարգկն
առաջի իմ. և ո՛պ լուսին
զի հաստատեալ է յաւի
տեան վկայ հաւատարիմ
յերկինս։ Եւ պօղոս վս
քի չարչարանացն խօսե
լով, ‖ միանգամ ՚ի կտրծ
յաւիտենիս ասէ իւրով
պատրգաւն յայտնել է։
Այսինքն թէ մօտ ՚ի ս
պառումն կենաց աշխար
հիս։ Որպ և յառաջ ՚ի
սկզբան թղթին յայտնա

գոյն զսոյն ասէ. ‖ ՚ի վախ
ճան աւուրցս այսոցիկ
խօսեցաւ ընդ մեզ որ
դւով։ Եւ այլ բազում
գտանի ՚ի գիրս ասել
վասն վախճանի յաւիտե
նիս այսորիկ։
Որդ՝ Յաւիտենից, այս է
յաւիտեան. ՚ի սկզբանն
և ՚ի կատարածին։ Իսկ
միւս յաւիտն երրորդն՝
որ ՚ի հանդերձեալ գա
լստենէն սկսանի, յաւի
տենից յաւիտեան կոչի.
զի յետ նոցունց սկսանի
և այլ ո՛չ սպառի։
Եւ յետ օրհնութեցն
միաձայնեն ամենեքեն
զԱծն. զի հասարակաց
լիցի օրհնութին։
Կրկնէ անդրէն առաջ
նորդն զխաղաղութին տյ
առ ժողովուրդն։
Բայց կամիմ հարևան
ցի չանցանել ընդ տե
ղիս. այլ ցուցանել աստ
զգերակայութի քահա
նայութեն զանազանութ։
Զի ամձցն միաբան է
իշխանութի ՚ի սաղմոսն

և՚ի փառս գուբղայից·
և՚ի քարոզութեցն վկայու
թե· և զանարատութն՝ քա
հանայութեն հաստատել:
Զի բովանդակ եկեղե
ցին չկարէ համեմատիլ
քահանային և գլխաւո
րել զօրհնութիւն· այլ
պէտք են քահանային ըղ
նդ ասացեալ սաղմոսեր
գուին՝ իւրանձնապէս
օրհնութն՝ նյ մատուցա
նել: Յայն սակս լուէ նմ
ժողովուրդն· և սարկա
ւագն ձայնէ առաջնոր
դին թէ՝ օրհնեա՛: Որպ
թէ ասիցէ՝ մատո՛ նյ զոր
ժողովուրդդ օրհնեաց
քո օրհնելովդ·
Սա՛ դարձեալ երևի միւս
ևս այլ առանձնելութի
քահանային· զի ՚ինոցա
սաղմոսելն, և ՚ի փառս
տալն, չկարէ եպիսկպսն
տալ ժողովրդեանն զխա
ղաղութին· այլ աղաչել
միայն հրամայէին ՚ի սար
կաւագէն վս խաղաղու
թեան: Իսկ յորժամ ՚ի
քահանայից մատուցանի

օրհնութիւնն, տայ ապա
եպիսկոպոսն զխաղաղու
թիւնն· զի նա՛ է գլուխ
քահանայութեանն:
Սա՛ զօրհնութիւնն թէ
ինքեամբ և թէ քահա
նայիւքն՝ առ ած հանել
առնու զխաղաղութի առ
՚ի յնյ և տայ ժողովրդն
Զի որպ նոյն պատարա
գաց զոհանս զևտացիքն
՚ի նաւիրացն մատուցա
նէին· բայց պարգևացն
որ ՚ի յնյ՝ մովսէս և ահա
րոն լինէին առիթք:
Նոյնպէս և բանաւոր
պատարագացս թէ և այլ
ոք մատուցանող ՚իքահա
նայից իցէ, զխաղաղութին
եպիսկոպոսն յորում է
կեղեցւոջ և հանդիպի,
առնու յնյ և տայ նդ·
որ քան զնմ պարգև դե
րադո՛յն է· մանաւանդ
թէ բովանդակ պարգե
ւօք լցեալ: Սա՛ զի նմ
տուրք բարիք և նմ պար
գևք կատարեալք ՚ի վե
րուստ են իջեալ առ ՚ի հօ
րէն լուսոյ· և գլխաւոր
եկե

եկեղեցւոյն զամենեսեան
զնոսա այսու միով բա
նիւս անտեսանորէ։
Խաղաղութի ամենեցուն
ասէ։ Զի որմէ առաքեալն
ասէ, Խաղաղութիւն այ
որ ՚ի վեր է քան զամ միտս,
պահեսցէ զսիրտս ձեր
և զմիտս ՚ի քս յս։
Անհասանելի հրշտկաց
և մարդկան մտաց ու
րեմն վկայեաց զայս ասե
լով։ յաղագս այսորիկ և
՚ի վեր ասաց քան զամ
միտս։ Սորին աղագաւ՝
թէ օրհնէ քահանայն,
թէ աղօթէ, առ ՚ի յայ
զխաղաղութիս զայս բերէ
պատասխանի. որ լի՛ է ան
իմանալի պարգևօք։
Նորոգ ցուցումն քա
հանային առաւելութե
այս է, զի կրկին առնու
միով անձամբն զպատիւ
ք զժողովուրդն ամենե
քումբք։ Զի ոչ միայն
զիւրեանց փառաբանու
թիւն քահանայիցն պատար
տեան։ այլ և զի նք ասեն,
փառք հօր և որդւոյ և
գ

հոգւոյն սրբոյ։ Իսկ ա
ռաջնորդքն և զօրհնու
թիւնն ևս յաւելուն ՚ի
փառսն. և չիշխէ ոք ՚ի
ժողովրդենէն զայս առ
նել. և ոչ բովանդակ իսկ
ժողովուրդն։ Նայլ ոպ
յայլ երս կրկին պահան
ջէ առաքեալն զերիցանցն
պատիւ ասելով, թէ բա
րւոք վերակացուքն Երի
ցունք կրկին պատուոյ
արժանի լիցին։
Նոյնպէս և յօրհնութիւն
այ կրկին կարգեալ է ըզ
պատիւ երիցանցն։
Դարձեալ, զի չիք ինչ
շնորհ զոր առանց առաջ
նորդաց տայ այ. Նաև
վերստին ծննդեանն որ
՚ի հոգւոյն, և կենարար
մարմնոյ և արեան տն
բաշխման, թողութե մե
ղաց դարձելոցն ՚ի խոս
տովանութի ապաշխարու
թե. և ամուսնութե զու
գութե, և ընծայից և պա
տարագաց և նուիրաց մա
տուցմանց, և հոգւոցն
հանգուցելոց առ քս



յու

յուղարկմանց, և մարմ
նոց նց ընդ ամենապահ
աջողք քն ամրանալոյ,
և որ այլ ևս կարգ են
քրիստոնէականք՝ և օրհ
նութիք նյ, եկեղեցեաց
կամ սպասուց նր կամ
նշանի խաչին, կամ գե
րագունի միւռոնին,
կամ երկրի, կամ ջուրց,
կամ սերմանց, կամ տըն
կոց, կամ պտղոց, կամ
անասնոց, կամ ախտից
բուժելոց ածային շնոր
հին, կամ այլ ինչ ածա
տուր պրգևի միջնորդք՝
առաջնորդք եկեղեցւոյ
լինին: Նոքա առնուն 'ի
ժողովրդոցն զխոստովա
նութիւն՝ զաղօթսն՝ զօրհ
նութիւն՝ զնուէրսն և
մատուցանեն այ: Նա
դարձեալ առնուն յայ
զօրհնութիւն և զզանազան
զշնորհսն և զխաղաղու
թիւն երկնային, և տան
մարդկան. մեռելոց և
կենդանեաց:

Մ'է վայրապար զայս է
ղանակեմ բազմօրինա
կապէս. այլ զի կարացից
իմացուցանել առ հասա
րակ քահանայից և ժո
ղովրդոց:

Եւ՝ Վն այսորիկ խոստովան եղէց քեզ ՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասացից։
Եւ՝ Անանիանքն, ‖ Օրհնեալ զմեզ վասն սքանչելեաց քոց. և փառաւոր լիցի անուն քո յաւիտեան։
Գոհանամք տր զքէն ասէ վասն մեծի փառաց քոց։
Եւ այ փառացն մեծութիւն զոր ասէ, ո՛չ թէ այնպէս ասէ որպ մեծ ինչ առ փոքր համեմատելով. իբր մեծագոյն լեռն առ չնչին հատն մանանխոյ. կամ համատարած ծով առ դոյզն շիթս անձրևի. Այլ՝ զանչափութի և զանհասութի նշանակէ ըստ առաքելոյ. ‖ Ո՛վ խորք մեծութե և իմաստութեն այ. որպ զի առանց քննելոյ են դատաստանք նր, և առանց զննելոյ են ճանապարհք նր։
Զոր և եսայի յայտնապէս ցուցանէ։ ‖ Ո՛ չափեա՛ց ասէ ափով իւրով զջուրս, և զերկինս թըզա՛ւ և զերկիր ամ քլա՛ւ։ Ո՛՝ կշռեաց զլերինս կշռով, և զդաշտս կշռորդով. Եւ այն որ պատմի անկասկածելի դատաստանին սաստ. ‖ Ահա՛ասիկ տր ինքնին եկեսցէ ասէ, և ո՛վ ժուժկալեսցէ աւուր մտի նորա. կամ ո՛վ հանդարտեսցէ աւուր յայտնութն նր



Եւ

Ե՛ւ այս ա՟մ զանհամե
մատ մեծութ՟ փառացն
ա՟յ յայտառնէ․ ո՟վ և հե
տակայ բանս ցուցանէ․
Մ՛ինչև ցայս վայր առա
քելոցն ասի երգս․ և աս
տի սկսանի այս հետա
կայս բանք․

Տ՟ր Թ՟գ՟ւոր ս՟բ՟դ երկ
նային և ա՟ծ հայր
ամենակալ․

Տ՟ր ասելովն՝ զտիրելն
ա՟մի յայտ արար․ ըստ
սաղմոսին, Տ՟նե է երկիր
լրի՛ւ իւրով․ աշխարհ և
ա՟մ բնակիչք նորա․
Ե՛՝ տ՟ր տ՟ր մեր զի սքան
չելի՛ է անուն քո յա՟մ
երկրի․ Ե՛ւ Թ՟գ՟ւորի՛ է
պատժելն և պսակելն․
ըստ այնմ, տ՟ր մեռուցանէ
և տ՟ր կեցուցանէ․ իջու
ցանէ 'ի դժոխս այսինքն
'ի դուռ գերեզմանին և
հանէ․ Այլ և տ՟ր և
Թագաւոր ասելովն՝ ըզ
յաւիտենական մշտնջե
նաւորութին յայտ արար,
ըստ առաքելոյ․ ‖Երանե
լին և միայն հզօրն Թա
գաւորն Թագաւորաց և
տէրն տերանց․ որ միայն
ունի զանմահութի՟ բնա
կեալ 'ի լոյս անմատոյց․
Եւ այն զոր ասէ, ‖Ես եմ
Ես եմ․ և մինչև կարի՛
իսկ ծերացիք Ես եմ․
և ո՛վ է իբրև զիս․ յա
ռա՛ջ կացցէ, ձա՛յն տացէ․
պատմեսցէ՛ և պատրաս
տեսցէ․ Եւ զոր այլուր
ասէ առաջին, ‖Թագաւո
րին յաւիտենից միայնոյ
իմաստնոյն ա՟յ 'ի ձեռն
յի՟ ք՟ի՟ որում փառք յա
ւիտեանս, ամէն․

Սուրբ երկնային․

Ա՟ծ 'ի վե՛ր է քան ըզ
սրբութի՟․ այլ ըստ մերում
սովորութե՟ ձևացուցանէ
զբանս․ Զի ս՟բ է ա՟ծ՝
ո՛չ որպէս մեզ է հասանե
լի․ այլ որպէս ինքեան
միայնո՛ւմ է գիտելի․
Զի մեք ս՟բ կոչեմք ըզ
մաքուր հոգի և զառա
քինի անձն․ Այլ և զեր
կինս ս՟բ ասեմք յորժամ
ջինջ լինի յամպոց․
Նաև զոսկի մաքուր և


զար

զարծաթ զուտ • զպատմուճան պայծառ, զապակի և զհայելի ջինջ և յըստակ, և զայլ ինչ ՚ի նիւթականաց որ յաղթոյ մաքուր և զերծ իցէ, սովորութի̃ է մարդկան սբ̃ կոչել։ Այլ ոչ են սոքա տիրապէս սբ̃, այլ պիտռակաբար կոչին • Իսկ ա̃ծ ոչ է այսպիսի սբ̃ • այլ գերի վերոյ քան զայս ա̃մ• անիմանալի և անհասանելի։ Ոչ ո̃պ սերովբէքն սբ̃ կոչին կամ քերովբէքն բազմաչեայքն և վեցթևեանք։ զի և ոչ նոցա է հասանելի որքանութի̃ սրբութեան ա̃յ, այլ միայն ահիւ և դողութ̃ կան ՚ի պաշտամանն իւրեանց• հանապազ կարօտեալք ընդունելութ̃ յաւելուածոյ շնորհի։ Բայց ինձ թուի՝ սբ̃ ՚ի վե̃ր ա̃յ զպարզ և զյըստ̃կ և զանփոփոխ բնութի̃ն ասէ • ըստ որում և սբ̃դ երկնային ա̃ց։ Այսինքն թէ՝ ո̃պ բարձրութիւնն



երկնի երկար միջոցաւ հեռի է յերկրայնոցս և մեծութի̃ նորին գերազանց, ևս առաւել անբովանդակելի հեռաւորութե̃ք դոյդ սրբութի̃ որիշ և անհաս է ՚ի մէնջ• ա՛յս է ո̃պ կարծեմ սբ̃դ երկնային ։

Ա̃ծ և հայր ամենակալ ասի ։

Եւ այսո̃պ սբ̃ երկնային և ա̃ծ հայր ամենակալ։ Եւ վայելուչ է ։ Զի որիշ է ՚ի ստորայնոցս աստուածոց• և երկնային խոստովանի միայն ա̃ծ ո̃պ և ասէ ։ ‖ Հայր գթութեանց է և ա̃ծ ա̃մ մխիթարութե̃ց ըստ առաքելոյ։ Զի ո̃պ արարչաբար ստեղծ, նոյնո̃պ և հայրաբար գըթայ ըստ իւրում անբովանդակելի գթութե̃ցն• և մխիթարէ յիւրաքանչիւր պէտս զամենեսեան ըստ կըրկնակի վտանգից ։ Զի թէ մարմնական հարք գըթան յորդիս՝ և ձեռա

կերտի իւրեանց խնամ տանին։ Ապա որչափ և ևս առաւել որ աղբիւրն է գթութեց և շտեմարանն ամ մխիթարութեց ածային Նախախնամութին։

Բայց գթութեն տեսակ կրկին է և ոչ մեկին։

Զի զարարչական խընամն իւրոյ ամի ունի ըստ իւրաքանչիւր պատշաճ պիտոյից։ Իսկ ըզհայրական գութն արկանէ տիրապէս 'ի վր մեզ և երկիւղածաց իւրոց։ Որպ գթայ ասէ հայր 'ի վր որդւոց իւրոց, այնպէս գըթասցի տր յերկիւղածս իւր։ Այլ թէ՝ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր․ աղօթից նց լսէ և կեցուցանէ՛ զնոսա։ Պահէ տր զամենեսեան որ սիրեն զնա սրտիւ։

Ած՝ ասէ և հայր ամենակալ։ Այսինքն զամ ունող․ զգթութի և զողորմութի, զնախախնամութի և զամ պէտս բարեգործութե։ Որպ և երեմիաս ասէ, Ամենակալ մեծ անունդ տր․ ա՛չք քո բա՛ց են յամ ճանպրհս որդւոց մարդկան, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրեանց։

Այլ դարձ ամենակալ է զօրութբ և այսպէս․ զի փակէ զգութ նախախնամութեն յարարածոցս, և ոչ ոք է որ բանալ կարիցէ։ Այլ դարձեալ իւրով առատ ողորմութբն բանայ զդրունս մարդասիրութեն 'ի վր արարածոց իւրոց, և ոչ ոք է որ ընդդէմ փակել կարիցէ։ Ասաց և եղեն հրամայեաց և հաստատեցան։ Այլ յորժամ կամի փոփոխել, ունի՛ զամ․ և հրամանի նորա անսայ ամ ինչ։ Ամենակալ զօրութի է որ հաստատեաց զհաստատութին 'ի բարձունս․ և ձգեաց զվերնայարկն 'իվերոյ ջ զնա։ Տարածեաց զօդ իբրև զառստ, և հաստատեց



զեր

զերկիր 'ի վր ջուրց • և
կախեալ ունի զհիւսիս
զոչընչիւ 'ի փառս ա-
նուանն իւրոյ և 'ի գո-
վութիւն ամենազօր
տրութեն :

Տր և որդի հօր միածին
յս քս •

Ասաց յառաջագոյն վս
հօր, Տր թագաւոր •
նոյնպէս և աստ դնէ ըզ
տիրականն անունն 'ի վր
որդւոյ ասելով, Տր և
որդի հօր միածին :
Այսինքն թէ նոյն տրու-
թեն փառակից և պատ-
ուակից է : Իսկ որդի հօր
ասելով, զբնութենակցու-
թին ընդ հօր յայտ առնէ :
զի ամ որդի հարազատ՝
զնմանութի հօրն բերէ
յինքեան : Այլ 'ի մար-
մնաւոր հարց և որդւոց
միջի բազում իրօք զա-
նազանութի գտանի •
առաւելութի, կամ պա-
կասութի • Իսկ աստ ոչ
այնպէս • այլ՝ ամի հա-
ւասարակից է որդի հօր,
ծոցածին և անժամանակ
ծնունդն • անճառաբար
ծնեալ 'ի հօրէ յառաջ
քան զյաւիտեանս :
Այս յեղանակ ծննդեանն
ինքեան և հօր միայն գի-
տելի • և ոչ ումեք հետա-
զօտելի յեղականացս ըս
տրունական հրամանին :
‖Ո՛չ ոք գիտէ զորդի՝
եթէ ոչ հայր • և ո՛չ ըզ
հայր ոք գիտէ՝ եթէ
ոչ որդի •

Տր և որդի հօր միածին •

Որդի ասէ հօր • զի
առ ինչ ունակ անուն է •
որով զհաւասարութին
յայտ առնէ ընդ հօր և
զճշմարտութին ցուցանէ •
Զի որդի միշտ որդի է,
և ո՛չ երբեք եղեալ հայր :
որպ հայր միշտ է հայր,
և ո՛չ երբեք որդի լեալ :
Զի այս մարդկա՛ն է սո-
վորութի եղականի, որ եր-
բեմն որդի եղեալն, ա՛յլ
երբեմն հայր լինի •
Իսկ ածային բնութին
ո՛չ այսպէս • այլ միշտ մի
և նո՛յն է անփոփոխելի •
զի ո՛չ փոխարկեալ լինի

 հայր

Հայր յորդի, կամ որդի 'ի Հայր: Այլ թէպէտ մի՛են բնութբ Հայր և որդի, սակայն անուամբ որիշ են և զանազան:

Զի Հայր ծնօղ ասի և ոչ ծնունդ. և որդի ծնունդ ասի և ոչ ծնօղ: Այլ տիրապէս որդի, զի Հայր ոչ եղև երբէք: Որպէս և Հայր տիրապէս ասի Հայր, զի որդի երբէք ոչէ եղեալ. այլ միշտ է Հայր որպէս որդի միշտ որդի է.

Տէր և որդի Հօր միածին.

Գոնէ զմիածինն, զի յայտ արասցէ թէ այլ ծնունդ ոչ գոյ Հօր. այլ նոյն և մին միայն է միութեն Հօր և ըստ բնութեն: Այլ եթէ միածին և ծոցածին, ապա և Հօր հաւասար և ոչ ինչիւք նուազեալ: Զի թէպէտ և պատճառ է Հայր որդւոյ անճառ ծննդեամբն, և որդի յառաջ եկեալ 'ի Հօրէ անքննաբար և անժամանակապէս, սակայն ոչ կրսերութի կամ նուազութի երբէք տեսանի յորդի: Այլ որչափ Հայր Հա՛յր է, որդի որդի՛ է. զի Հայր որդւո՛յ է Հայր. և որդի Հօ՛ր է որդի:

Այլ միածին է, զի երկրորդ ոչ գոյ. որպէս ածաբանն ասէ, Հօր սահման և բան և շարժեցալ կնիք վասն միածին գոլոյն. Այլ այս մինչև ցայս վասն Հայրական ծննդեանն փոքր 'ի շատէ ըստ մերում փանաքի տեսութեան. զի 'ի մեծն յոլով և բարձրագոյն բանք գոն ասացեալ վասն այսորիկ: Իսկ Հեստակայ բանս՝ զկուսական ծննդենէն յայտ առնէ՝

Յս Քս ասելոյն.

Այլ յուն անուն, յեբրայականէն 'ի մերս փրկիչ թարգմանի ըստ հրշտկին որ առ յովսէփ: Մ՝ի՛ երկնչիր ասէ առնուլ առ քեզ զմարիամ կին քո. զի որ 'ի նմա՛յն ծնեալն է՝ 'ի Հոգւոյն սրբոյ է: ծնցի որդի և կո

չեսցեն զանուն ն՟ր Յս՟. զի նա փրկեսցէ զժ՟ղ՟վրդ իւր 'ի մեղաց իւրեանց: Զնոյն և առ հովիւսն ասէր հրեշտակն:

‖Ծնաւ ձեզ այսօր ասէ փրկիչ որ է օծեալ տ՟ր 'ի քաղաքի դաւթի.

Այսպէս և զաքարիա հայրն յովհաննու, ‖Օրհնեալ տ՟ր ա՟ծ իէլի ասէ որ յայց ել մեզ և արար փրկութի՟ ժողովրդեան իւրոյ. և յարոյց մեզ եղջիւր փրկութե՟ 'ի տանէ դաւթի: Եւ թէ՝ տալ մեզ առանց երկիւղի ըզ փրկութի՟ 'ի ձեռաց թշնամեաց մերոց:

Եւ ք՟սն անուն օծեալ կոչի. այսինքն ա՟ծ և մարդ. զի բանն մարմին եղև ըստ անետրանչին. և ա՟ծութի՟ն է օծ զմարմինն. Զի ք՟սն ո՛չ սոսկ մարդկութեանն է անուն և ո՛չ լոկ ա՟ծութե՟ն. այլ՝ ա՟ծ և մարդ ասի. այսինքն յերկուց միացեալ անշըփոթաբար և անճառապ՟

Ո՛չ ո՟պ ջուր ընդ գինի խառնեալ և շփոթեալ և յերկոցունցն զրկեալ բնութե՟ց. զի ո՛չ ջուր է և ո՛չ գինի 'ի խառնիլն իմիասին. Այլ՝ ա՟ծային բնութի՟ն 'ի միաւորիլն ը՟ մարմնոյն, զերկոցունց յատկութի՟ն անշփոթ պահեաց ո՟պ հոգի մարդոյ 'ի մարմնի. թէպէտ և տիրապէս ո՛չէ ապացոյց: Զի բանին ա՟յ մարմին լինիլն 'ի վեր է քան զհասողութի՟ մտաց. չքնաղ և զարմանալի խառնումն Ո՟պ ասէ մեծն գրիգոր ա՟ծաբան. ո՜վ նոր խառնմանս. ո՜վ սքանչելի խառնուածոյս.

Եւ 'ի բանէն և 'ի մարմնոյն՝ է մի ք՟ս ճշմարտապէս. ո՟պ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ մի մարդ. ո՟պ առաքեալն ասէ. ‖մեզ մի է ա՟ծ հայր յորմէ ա՟մ. և մի տ՟ր յ՟ս ք՟ս որով ա՟մ:

Յամօթ լիցին երկաբնակքն. զի առաքելն ո՟պ մի ա՟ծ զհայր ասաց

ուանց մարմնոյ, նոյնպէս
մի տ͞ր յ͞ս ք͞ս զորդի ա͞նց
մարմնով։ Որով յայտ է
թէ յետ անճառ միաւո
րութեն մի է և երկու
ոչ ասի։ Զի զոր առա
քեալն մի ասէ, ո՞վ է որ
յանդըգնի յերկուս բա
ժանել։ Եւ տ͞րն առ Նի
կոդիմոս ասաց, ‖ ոչ ոք
ել յերկինս, եթէ ոչ որ
էջն յերկնից որդին մար
դոյ որ էն յերկինս։
Յայտ է թէ զբանն ա͞նց
որդի մարդոյ. զի բանն
էջ յերկնից և ոչ թէ
մարմինն։ Եւ հայր վը
կայէր 'ի յորդանան և 'ի
թաբօր, դա է որդի իմ սի
րելի և ոչ թէ որ 'ի դմա.
որ զմիութին ցուցանէ
և զերկու ասօղսն յանդի
մանէ։ Զի յորժամ ա͞ծ
հայր՝ եզական անուամբ
դա ասէ որ յայտնապէս
միոյ բնութե է յայտնիչ.
Ո՞վ է որ յանդըգնի եր
կու ասել։ Եւ դիոնէ
սիոս ասէ, առ բաժանա
կանս մեր ըստ բնութե

ԺՈՒ

միոյ յառաջ եկեալ։
Եւ դարձեալ ասէ, մի
բնութի և պարզութի և
թաքնութիւն յ͞ս։
Եւ աղեքսանդրացին
ասէ, զինուորքն զպատ
մուճանն ոչ կարացին
պատառել. իսկ հերետի
կոսք զորդին ա͞յ պատա
ռել կամելով և բաժնել
յերկուս, զայն որ միայն
անբաժանելին է։
Եւ վկայութի միոյ բնու
թեն քի յոլովք են 'ի ս͞բ
գիրս ով կամիցի ուսա
նիլ. իսկ առ այժմ այս
բաւական է։ Զի ‖տուր
ասէ իմաստնոյն պօղոս
և իմաստնագոյն լեցի
'ի բարիս։
Եւ ս͞բ որդի։ 'Ի կէս
օրինակս 'իտեղիս յայս
փոխանակ որդւոյ այս͞պ
ունելով բանին, և ս͞բ
հոգի։ Եւ ապա դարձ
յորդի սկսանի, և 'ի հո
գի աւարտէ. զի սկիզբն
'ի հայր արար։ Սալ վ͞ս
դիւրահաս լինելոյ ըն
թացից բանիս, զորդի



դի

դիցուք 'ի կարգիս ոմ՟ն
սկսեալն եղև ։ Նա երե
ւի և այլ իմն պատճառ 'ի
բանիս թէ յորդի է և
ոչ 'ի հոգի ։ զի ասաց՝
տ՟ր թագաւոր զհայր ։
և 'տ՟ր և որդի հօր միա
ծին յ՟ս ք՟ս զորդի ։
Իսկ աստ տ՟ր ոչ գոյ որով
հաստատէր թէ 'ի վերայ
հոգւոյ է բանս հաւա
սար հօր և որդւոյ ։
Իսկ 'ի կատարածն յայտ
նա՟պ ասէ, տ՟ր և հոգիդ
ս՟բ որ 'ի փառս ա՟ծ ընդ
հօր ։ Ապա թէ փոխա
նակ տ՟ր ասելոյն զք՟ն
ասիցէ ոք բաւական հա
մարեալ, չկայ ինչ վնաս
զոր և կամի ոք ընտրեսցէ ։
Զոր և առաքեալն եր
բեմն ասէ, ‖ տ՟ր է հոգին ։
Եւ երբեմն ասէ, ‖ մի է
հոգի ս՟բ յորում ա՟մ,
Ըհմ աստ զք՟ն եդ 'ի
վ՟ր հ՟գւյն, և անդ զտ՟րն
յառաջն կարգեաց ։
Եւ այս բաւականն է վ՟ս
այսորիկ ։ այլ մեք 'ի կարգ
բանիդ ընթասցուք ։

Տ՟ր ա՟ծ գառն ա՟յ և որ
դի հօր ։
Գառն ա՟յ կոչէ զմիա
ծին որդին, ոչ միայն
վ՟ս անմեղութեն զի իբրև
զգառն անմեղ 'ի սպանդ
վարեցաւ, այլ և գառն
ասելովն՝ զ[illegible]աչիւ մեռա
նելն յուշ արար և զծա
նակութեամբ մահն ։
Զի թէպէտ իբրև ըզ
գառն պրկեցաւ անմեղ
մարմնովն 'ի վ՟ր խաչին,
այլ 'ի խաչողացն իբրև
զմահապարտ դատապար
տիւր ։ Եւ դարձեալ,
ա՟պ գառնն ոչ վ՟ս անձին
ինչ պատճառի մեռանի,
այլ վ՟ս այլոց օգտութե ։
Նոյնպէս և գառն ա՟յ ոչ
վ՟ս անձին ինչ յանցա
նաց զենաւ 'ի վ՟ր խաչին ։
այլ վ՟ս մերոյ փրկութե ։
Եւ որպէս ասր գառին
զգեստ լինի և ծածկոյթ
մերկութե մարդկան,
այսպէս և ք՟ս գառն ա՟յ
եղև մեզ ծածկոյթ և
զգեստ շնորհաց ։
Զի որք 'ի ք՟ս մկրտեցք

զքո՟ զգեցաք և զարդա
րեցաք լուսով։ Ա՛ն ո՟պ
մարմին գառինն յորժամ
զենանի՝ կերակուր լինի
կարօտելոց, այսպէս և
անմահ գառնն ա՟յ զե
նեալ միանգամ ի վ՟ր խա
չին և հանապազօր ի վ՟ր
ս՟բյ սեղանոյն, զմարմին
և զարիւն իւր պարգև
եաց մեզ կերակուր ու
րախութե և դեղ անմա
հութե։ Զի որք սրբութ՟
ճաշակեն հաւատով սի
րով և յուսով, զյաւիտե
նական մահն ո՛չ մեռա
նին. ըստ իւրում տ՟ն
բանին թէ, ‖ որ ուտէ
զմարմին իմ և ըմպէ զա
րիւն իմ, զմահ մի՛ տեսցէ
յաւիտեան։

Տէր ա՟ծ գառն ա՟յ ասէ
և որդի հօր։

Որդի հօր ասելովն՝ ըզ
համարձակութիւն առ
հայր յայտ առնէ։

Ունիս ասէ համարձա
կութիւն իբր որդի առ
հայր բարեխօսել վասն
մեր զի հաշտեսցի ընդ
մեղուցեալքս հեզմամբ
ս՟բ արեան քո, ‖ որ առա
ւել գոչէ առ ա՟ծ հայր
քան զհաբելին ըստ բա
նին պօղոսի։ Զսոյն և
աւետարանիչն յովհաննէս
ասէ, ‖ ունիմք բարեխօս
առ ա՟ծ զյս՟ք ս՟ զարդարն
և զանարատն, և նա՛ է քա
ւութի մեղաց մերոց.
և ո՛չ եթէ մերոցն միայն
այլ և ա՟մ աշխարհի։
Զի արդա՛րև յորժամ
տեսցէ հայրն երկնաւոր
զմիածին և զսիրելի որ
դին իւր ի վ՟ր խաչին վ՟ս
մեր, հաշտեսցի տիրապ՟
ընդ արարածս և կենդա
նացուսցէ զմեռեալքս
մեղօք վերստին։

Որ առեր զմեղս աշ
խարհէ. ողորմեա մեր.
բարձեր զմեղս ա՟րհի. և
ա՛րդ ընկա՛լ զաղա
չանս մեր։

Դարձեալ զմարդեղու
թենէն և զխաչէն ճա
ռէ. որ առեր զմեղս աշ
խարհէ, այսինքն զբո
վանդակ բնութիս մեր

 ըզ

զմ՟րմին զհոգի և զմիտս։
Եւ այս վասն ապողինա-
րի ասացաւ • զի զմարդ-
կային հոգի ոչ ասէր ք՟ն
առեալ • այլ միայն զմար-
մին • և ՚ի տեղի հոգւոյ
զա՟ծութիւն ասէր ունել։
Զոր յամօթ առնէ ա-
ռաքեալն ասելով‖ մ՟րդն
յ՟ս ք՟ս։ Եւ մարմին ա-
ռանց հոգւոյ մարդ ոչ
ասի • այլ՝ մարմին և ոգի
միաւորել իմիասին՝ այս
է մարդ կատարեալ։
Եւ ք՟ս ճշմարտապէս
մարդ կատարեալ եղև՝
զա՟մ զմերս առնլով։
Զի թէ ոգի բանական
ոչ ունէր, զիմարդ ասէր
՚ի ձեռս հօր աւանդել։
Եւ ՚ի դժոխս երթալ ո՟պ
ասի քն և զնիգս փշրել։
Զի մարմինն ոչ էջ ՚ի
դժոխս • և առանց բա-
նական հոգւոյ բանն՝ ք՟ս
ոչ ասի։ Վկայէ և պետ-
րոս բանական հոգի ու-
նել ք՟ի • ‖ ոչ թողաւ անդ
ոգի նորա ՚ի դժոխս։
Եւ վ՟ս մրտացն պօղոս

վկայէ • ‖ Մեք ասէ զմիտս
ք՟ի ունիմք։ Եւ հարցն
ս՟րբք ևս յայտնապ՟ հաս-
տատեցին ՚ի հաւատոն նի-
կիական • ունել բանին
այսպէս • ծնաւ ասէ կա-
տարելապէս ՚ի Մարիամայ
սրբոյ կուսէն հոգւով
ս՟րբով • որով էառ մարմին
հոգի և միտք • և ա՟մ որ
ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտա-
պէս և ոչ կարծեօք․
Այ՟ բան աղօթիցս զա-
մենայնն միով բանիւս
բովանդակէ՝ ասելով •
որ առեր զմերս յ՟է •
այսինքն ՚ի մարդկային
բնութենէս։ Զի սովո-
րու՟թ է գրոց և զմարդ-
աշխարհ և երկիր կոչել•
ո՟պ զհրեշտակս երկին։
զի ադամն երկիր թարգ-
մանի։ և իմաստասէրքն
փոքր աշխարհ ասացին
զմարդ։ Իսկ եկեղեցւոյ
վարդապետք մեծ աշ՟
ասացին զմարդ վասն
բանականութեն և
պատկեր գոլոյ
արարչին։

 Որ

Որ առեր ասէ զմերս
յաշխարհէ։

Նախնիքն թէ՝ յամ՟ արա րածոց զմե՛րս միայն ընտրեցեր բնութի. զոր առել միացուցեր ընդ քում ած՟ութեդ։ Զի աշխարհ կոչի որ յերկնէ՛ և յերկրէ՛ և որ 'ի մէ՛ջս են վայելչութիք։ Նախնիքն տարերք, օդ, լուսաւորք, աղբերք, ծովք, գետք, բոյսք, տունկք, փ՟ղանք, անասունք, սողունք, թռչունք. և որ այլ ևս։ Նաև հրեշտակք 'ի յերկինս։ 'Ի յայսմ ամէ ասէ ո՛չ զոք ընտրեցեր առնուլ քեզ հաղորդակից, այլ հաճեցը՟ր 'ի մե՛զ միայն խոնարհիլ և զմե՛զ բարձրացուցանել 'ի վեր քան զամ՟։ Այ՟ս փառք քեզ յաղագս ամի։ Նորդորև ո՛չ այսպէս արար ամ՟ ազգաց տ՟ր։

Ողորմեցար. բարձեր ըզ
մեղս աշխարհի. և
արդ ընկալ զաղա
չանս մեր։

Ողորմեցար ասէ։

Նախնիքն՝ ըստ քոյին մեծութեդ. զի ողորմին սեպհական և յատուկ այ՟ է. որ բնութ՟է ողորմած. որոյ անսպառ է ողորմութի՟ն. զի ողորմութ՟ արար զարարածս. և ողորմելով միշտ նախախնամէ ըստ իւր ամենառատ բարերարութեն։ Զի ամ՟ ուրեք գիրք զա՟ծ ողորմած կարդան։ Ս՟պ դաւիթ ասէ. ողորմած և արդա՛ր է տ՟ր ա՟ծ մեր։ Նաև թէ՝ ողորմի և պահէ՛ զտղայս 'ի մեղաց տ՟ր։ Նաև թէ՝ ողորմեա՛ ինձ ա՟ծ ըստ մեծի ողորմութե քում և ըստ բազում գթութե քում։ Նաև թէ՝ զողորմութի՟ս քո տ՟ր յաւիտեա՛ն օրհնեցից. Նաև թէ՝ ողորմութ՟ տն լի՛ եղև երկիր. և այլս բազումս. զոր վիպէ՛ վս՟ ողորմութեն այ՟։ Իսկ որդի Նորին սողոմոն ասէ. ‖ ա՟ծ հարց և տ՟ր ողորմութեան։

Ո՛չ այլ ումն ‖ գիտէի տր
ասէ զի ողորմած ես և
գթած, երկայնամիտ բա
զումողորմ. և զղջանաս
’ի վն չարեաց մարդկան։
Ո՛չ յոլովք են այսպիսիք
’ի գիրս տես որ անբաւ
և անպատում զողորմու
թիւնն այ քարոզեն ։
Զայս ցուցանէ աղօ
թիցս բան ասելով, Ողոր
մեցար. բարձեր զմեղս
աշխարհի։ Ըստ առաքե
լոյ որ ասէ, ‖ զմեղս մեր
եբարձ և բևեռեաց ընդ
խաչափայտին։ Զի ո՛չ
կարաց ժոյժ ունել. տե
սանելով զստեղծուածս
ձեռաց իւրոց գերեալս
’ի բանսարկուէն։ Այլ
խանդաղատեալ արարչա
կան գթութեն և յաղ
թեալ ’ի մարդասիրութե
նէն, եկն ’ի խնդիր մեզ
մոլորելոցս կամաւ հօր
և հաճութբ հոգւոյն
սբյ և փրկեաց զմեզ։
Ըստ այնմ, ‖ հովիւն քաջ
զհետ մոլեալ թափեաց
’ի բերանոյ առիւծուն.

ունդն մի դրոշմաւոր,
զևայրն զչարաչար ախ
տացեալն ’ի թունից կա
մակոր օձին։ և աքեացս
երկու, զոտսն ադամայ
’ի ծառն ընթացեալ։
Զի ամենաբաւական
ձեռինն միայն էր կարո
ղութի զվէրս զայս բը
ժշկել։ Ըստ մրգրէին
որ ասէր ’ի դիմաց տն,
‖ Հայեցայ և ոչ ոք էր որ
օգնէր. զմտաւ ածի և
ո՛չ ոք էր որ ’ի թիկունս
հասանէր։ փրկեաց զնս
բազուկ իմ, և սրտմտու
թիւն իմ միայն զդէմ
կալաւ։

Ողորմեցար ասէ և բար
ձեր զմեղս աշխհի։

Ո՛չ ասաց առեր, այլ
թէ բարձեր. այսինքն
թէ՝ վերացուցեր սրբե
ցեր ջնջեցեր մաքրեցեր
կորուսեր անյայտ արա
րեր։ Զի ո՛չ շփեցաւ
’ի նմա տեսակ ինչ աղ
տոյ զի մաքրիչ է ամի.
և անմեղ մարմնով զամե
նեցուն մաքրեաց զմեղս


և

և ջնջէց զանօրէնութիս։
Զի մեղանչական մե-
ղանչականի օգնական լի-
նիլ ոչ կարէ ։ այլ անա-
պականն և անմեղն զմե-
ղանչականացս քաւեաց
զպարտիս։
Բարձեր ասէ զմեղս աշ-
խարհի։
Այսինքն ոչ միայն զա-
դամայ կամ որք յետ նո-
զդարուցն առաջնոց,
այլ զամ հաւատացելոց
որք զկնի գալոց են մինչ
'ի կատարած աշխարհի
և հաւատան 'ի հեղումն
արեանն քո որ լուաց զգ
տիեզերս 'ի մեղաց, և զա
հաւտոցն գործս բարիս
ցուցանեն, ազատեսցին
'ի մեղաց շնորհօքն քո։
Սա խուռն ամն հրա-
մանին որ առ հրէայսն,
Եթէ որդին ասէ զձեզ
ազատեսցէ, ճշմարիտ ա-
զատք լինիջիք։ այսինքն
զյաւիտենական ազատու-
թիւնն ժառանգիցէք ։
Զի եթէ ոչ էր աշ
ապականեալ մեղօք, ոչ

լինէր հարկ գալստեան
որդւոյն այ։ Այլ զի ա-
պականեաց ամ մարմնա-
ւէր մարդ զընթացս ճա-
նապարհի խւրոյ մեղօք,
վասնորոյ հարկ եղև գա-
լստեան բանին այ զի
բարձցէ զմեղս ամցուն ։
զի ոչ էր հնար այլ ումեք
զայս առնել։
Բարձեր ասէ զմեղս աշ-
խարհի ։ և արդ ընկալ
զաղաչանս մեր։
Սա այսպիսի ասէ զբ-
թութեց և մարդասի-
րութեց համարձակութի
առեալ աղաչեմք զողոր-
մած տրդ զբարձօղդ մե-
ղաց աշխի ։ զի դարձեալ
վիրաւորեցաք 'ի չար թըշ-
նամւոյն կենաց մերոց
և 'ի դաւաճանողէն զգ
մեզ ։ տկարացեալ մարմ-
նով ոչ ժուժելով կալ
ընդդէմ մեքենայից նո-
րին։ Վասն որոյ դարձեալ
վստահացեալ 'ի քոյին
անբաւ մարդասիրութիդ
և յանեզրական գթու-
թիւնդ, աղաչեմք տր,



որ

որ բարձեր զմեղս աշխի,
և արդ ընկալ զաղաչանս
մեր։ Զի որչափ ’ի մար
մնի գոլով մեղանչեմք և
տկարանամք մեղօք, դար
ձեալ զղջամք և առաջի
քո անկանիմք խոստովա
նութե՟ և աղաչեմք ող՟
ուսաք ’ի մ՟եց քոց պատ
ուիրանաց․ զոր հրամայե
ցեր մարգարէիւ՟ն թէ,
Ասա՛ դու զմեղս քո զի
արդարասցիս։ Ա՛յ թէ՝
Յորժամ դարձցիս և
հեծեծեսցես, յայնժամ
կեցցես։ Այլ աղաչեմք
կեցո՛ զմեզ ըստ ողոր
մութե՟ քո։
Ա՛րդ՝ ընկա՛լ զաղա
չանս մեր։
Ա՛յժմ ասէ՝ տէր ըն
կալ զաղաչանս մեր և
ըստ հրամանի քում ըղ
խոստացեալն կատարեա՛
զոր ուսուցեր մարգա
րէիւ՟ն։ Կարդասցես դու
առիս ասէ յաւուր նե
ղութե՟ քո՝ ես փրկեցից
զքեզ և դու փառաւոր
արասցես զիս։

Ա՛յ թէ՝ կարդասցէ ա
ռիս և ես լուայց նմա․
և առ նմա եղէց ’ի նե
ղութեան։ Բայց զկար
դալն՝ հաւատով կամի
և ո՛չ երկմտութեամբ։
Խնդրեսցէ ասէ առա
քեալն հաւատովք և ո՛չ
երկմտեսցէ։ Ա՛յ տէրն,
զամ զոր ինչ աղօթս ա
րարեալ հաւատով խնդ
րիցէք, եղիցի ձեզ։
Տեսանե՞ս զի մեծի հա
ւատոյ պէտք են մեզ յա
ղօթս և զգուշաւոր խըն
դըրուածոց և միամտու
թե՟ սրտի․ զի մի՛ հողմն
երկմտութե՟ ’ի ներքս ան
կեալ, զնաւ հաւատոյն
խախտեսցէ, և փոխանակ
պարգևի դատապարտու
թի՟ կրեսցէ երկմիտ խըն
դրողն վ՟ իւրոյ թերութե՟ն
Այլ որք զղեակ հաւա
տոյն պինդ ունիցին՝ ո՛չ
երբէք սասանին․ այլ
լսեն ’ի տ՟նէ թէ՝ ըստ
հաւատոց քոց եղիցի քեզ։
Զի չէ՛ ինչ մեծ կամ
փոքր յերկինս կամ



յերկ

յերկրի զոր հաւատով
խնդրեցէ ոք՝ թէ ո՛չ առ
նուցու անդէն փաղփա
ղակի զպատշաճաւորն։
Ապա թէ յամիցէ յառ
նուլն, մի՛ կասեսցի 'ի յու
սոյն, այլ առաւել ժրաս
ցի երկայնամիտ լինելով
և զմրտաւ ածելով թէ՝
այնպէս են կամք տն զի յա
մելով առցէ։
Եւ արդ ընկա՛լ զաղա
չանս մեր։
Այլ և զխոնարհութի
ևս ուսուցանէ բանիւս
աղօթողին և զհեզութի
բարեմտութ հանդերձ։
Որպ թէ ասիցէ, այսօր
մի՛այն է զոր եկեալ կամ
առաջի քո յաղօթս. և
այսօր սկիզբն արարեալ
եմ աղօթից։ Ըստ մե
ծին եղիայի որ ասէր,
‖կենդանի է տր որոյ կա
ցեալ եմ առաջի այսօր.
և սկիզբն արարեալ բա
րեպաշտիլ առնա.
Զսոյն և առաքեալն
յայտ առնէ ասելով,
‖զյետոյսն մոռացեալ եմ,
և յառաջադէմսն նըկըր
տիմ։ զհետ մտեալ եմ
թէ հասից։ Այսինքն
թէ զյառաջագոյն գոր
ծեցեալ բարիսն ոչինչ
անձին համարիմ. այլ
միայն առաջիկայիս ուշ
եդեալ ընթանամ թէ
կարասցի՛ց զընթացս իմ
բարւոք կատարել։
Այս է ըստ իմում բա
նիս որ ասէ։
Եւ արդ ընկա՛լ զաղա
չանս մեր։
Եւ այժմ ընկա՛լ ասէ
զոր այսօր մատուցա
նեմ պաղատանս առաջի
քո տրունդ։
Սուրբդ որ նստիս ընդ
աջմէ հօր՝ ողորմեա՛ց
մեզ։
‖Սբ է տր ած մեր որ
բնակեալն է 'ի բար
ձունս ըստ մարգարէին
եսայեայ։ Որոյ ո՛չ ոք գը
տանի համեմատ սրբու
թեն. զի ո՞վ իցէ 'ի մարդ
կանէ որ ամենևին սբ
իցէ. ‖թէ և միօրեա՛յ իցէ
'ի վր երկրի ըստ յոբայ։

‖ զի և երկինք չե՛ն ս՟բ
առաջի ն՟ր ըստ գրեցե
լում. այսինքն երկնայինն
հրեշտակք. այլ նա միա՛յն
էանց ը՟ ա՟մ կիրս մարդ
կայինս բաց ՚ի մեղաց:
Ո՟պ ասէր առ հրէայսն
ինքն տ՟րն յաւուրս մար
մնոյ իւրոյ, ‖ ո՞վ յանդի
մանեսցէ զիս ՚ի ձէնջ վ՟ս
մեղաց: Եւ թէ՝ ‖ գայ
իշխան աշխարհիս այսո
րիկ և յիս ինչ ո՛չ գտա
նէ յիւրոց չարու
թեանցն:

Սուրբ որ նստիս ընդ
աջմէ հօր՝ ողորմեա՛ց
մեզ:

Ընդ աջմէ հօր ասելովն՝
զորդիական պատիւն
յայտ առնէ. զի որդի
նստի ընդ աջմէ հօր, և
հոգի ընդ աջմէ որդւոյ
՚ի փառս փառաւորելոյ
որ յառա՛ջ է քան զյաւի
տեանս: Զի նստիլն ըղ
մշտնջենաւորութիւն յայտ
առնէ և զտ՟րութի փա
ռացն հայրենի: Իսկ ընդ
աջմէ հօր ասելն, զյաս

կութի անձանցն ցուցա
նէ բաժանեալ յանբա
ժանելի ա՟ծութեանն:
Եւ զի որդի նստի ընդ
աջմէ հօր՝ և առաքեալն
վկայէ, ‖ որ ելն ասէ ՚ի վե
րոյ քան զա՟մ իշխանու
թիւնս և զպետութիւս.
և նստաւ ընդ աջմէ մե
ծութեն ՚ի բարձունս:
Զսոյն և դաւիթ ևս
յայտնագոյն ցուցանէ,
ասաց տ՟ր ց՟տր իմ նիստ
ընդ աջմէ իմմէ, մինչև
եդից զթշնամիս քո պատ
ուանդան ոտից քոց:

Սուրբ որ նստիս ընդ
աջմէ հօր՝ ողորմեա՛ց մեզ:

Զի ո՟ղ մեք միշտ մեղան
չականք եմք և զղջ՟ինք,
դու միշտ ողորմած:
Վասն որոյ զնոյն հայցեմք
զոր միշտ սովո՛ր ես
առնել:

Զի դու միայն ս՟բ դու
միայն. բարձրեալ ես
դու միայն. տ՟րդ մեր
յ՟ս ք՟ս:

Զի դու միայն՝ այսինքն
դու միա՛յն միածին որդի



բնու

բնութենակից, աթոռա
կից փառակից և պատուա
կից հօր։ Զի մի՛ է միա
ծին որդին այ հօր, և
երկրորդ ո՛չ գոյ նմա.
վն զի ոչ մի է ծնօղն,
մի է և ծնեալն ՚ի նմանէ
բանն ։

Զի դու միայն սուրբ,
դու միայն։

Դու միայն ասէ երևե
ցար մարմնով որբ ՚ի վր
երկրի և ճշմարտապէս
յսմ կրից ազատ. որով
զամենեսեան սրբեցեր
քոյին սրբարար տընօրէ
նութեդ։ և կամիս մեզ
՚ի նոյն մնալ մաքրութե
և սրբութե. Որդարև՝
միածինն այ հօր և միայն
սրբարար որն՝ նա ինքն է
մաքրութին ամենայնի։
Քանզի՝ ‖ ճաճա՛նչ է այ
զօրութեն ոչ ասէ սողո
մոն. և ծագումն ճըշ
մարիտ փառաց ամենա
կալին. Վն այնորիկ և
ո՛չ մի ինչ պղծեալ խառ
նի ՚ի նա. քանզի նշո՛յլ է
մշտնջենաւոր լուսոյն և
հայելի անարատ այ ազ
դեցութեն և պատկեր
առատութե նր. Մի է և
ամի կարօղ. կայ յինքեն
և զամ նորոգէ։
Նաև աւետարանիչն յով
հաննէս զսոյն վարդապե
տէ՛ այլով եղանակաւ։
‖ Մի՛ տըրտմեսցի ասէ
վն ձեր բարերարն ամ.
գըթածն, ողորմածն,
սբն, յստակն, անարատն,
անհիւթն, միայնն, մին,
անփոփոխն, ստոյգն, ան
նենգն, անցասումն. որ
՚ի վե՛ր է քան զամ ասելի
և իմանալի անուն՝ ամ յն։
Որդա՛րև՝ ո՛չ զօրեն
միտք իմանալ կամ ասել
ինչ վն այ. զի ՚ի վեր է
քան զամ իմացումն.
Որպ ըստ կարողութե
ումեք ճառելն, միայն
ամսիրութե է բացայայ
տիչ, և մտերմութե ցու
ցակութի. զի մի՛ անշնոր
հակալու ստացուածք
երևեսցուք։

Զի դու միայն սուրբ
դու միայն. բարձրեալ


ես

ես դու միայն, տ̅րդ մեր
յ̅ս ք̅ս ։

Բարձրեալ ես ասէ դու
միայն ։ Այսինքն ոչ ե
ղականացս համեմատէ
բարձրութ̅ քո․ այլ միայն
ես գերազանցեալ․ և 'ի
վեր քան զա̅մ բարձրա
ցեալ անսահման միջո
ցաց․ 'ի հրեշտակաց և
'ի մարդկանէ․ 'ի փառս
հայրենի մերով բնութ̅ս
միայն դուս բարձրացեալ՝
տ̅րդ մեր յ̅ս ք̅ս։

Որպ̅ առաքեալն ասէ․
|| որ ելն զինչ է, եթէ
ոչ զի էջ նախ 'ի ստորին
կողմն երկրի ։ որ էջն
նոյն է և որ ելն 'ի վերոյ
քան զա̅մ երկինս։

Բարձրեալ ես դու միայն
տ̅րդ մեր յ̅ս ք̅ս։

Ա̂ այսու առաւել ևս
յոյս դնէ հաստատե
լոց և վստահութ̅ տէրա
պէս․ զի թէ բարձրեալ
ես ասէ մերով բնութ̅ս
ը̅ աջմէ հօր, և մեզ խոս
տացար ընդ քեզ բարձ
րանալ յարքայութեան

ժբ

քում ասելով, || ուր եսն
եմ, անդ և պաշտօնեայն
իմ եղիցի։ և այսու յու
սով առաւել ևս վստա
հացեալ կարդամք զա
նուն քո։

Տ̅րդ մեր ասէ յ̅ս ք̅ս ։

Աստ՝ աւարտէ զբա
նիս դիտաւորութ̅ն որ
առ որդին՝ տընօրինական
անուամբքս․ պատմելով
զմեծագոյն բ̅րեգործու
թ̅իւն որ առ ազգս մարդ
կան․ զի մի՛ մոռացմամբ
ապերախտք լիցուք․ այլ
միշտ յիշելով գոհացուք
զշնորհացն ա̅յ։

Տ̅ր և հոգիդ ս̅բ որ 'ի
փառս ա̅ծ ընդ հօր
ամէն։

Դնէ այժմ տէրական
անուամբ կնքեալ և ըզ
հոգւոյն փ̅ռբանութ̅ն․
յայտ առնելով զհաւա
սարութ̅ն և զփառակ
ցութիւնն ընդ հօր։

Զի յառաջագոյն ճա
ռեաց ճշմարտապէս վ̅ն
հօր ա̅ծութ̅ն և որդւոյ
անճառ տընօրէնութ̅ն



որ

որչափ հնա́ր էր տըկար
բնութեան մարդկան յա
ղագս այ՟ վկայել բանիւք։
Իսկ այժմ անարատութն՟
առնէ բնիխս 'ի Հոգին մր՟.
տր՟ զնա ասելով և ած՟
խոստովանաբար ճշմար
տապէս փառակից ընդ
Հօր որպ՟ որդին սիրելի
այսպ՟ ունելով բանին։
Տր՟ և Հոգիդ մր՟ որ 'ի
փառս ած՟ ընդ Հօր։
Այսինքն՝ որպ՟ Տր՟ թա
գաւոր Հայր և ած՟.
Տր՟ և որդի Հօր միածին
օծեալն այ՟ և փրկիչն
մարդկան յա՟ջն աթոռա
կիցն Հօր որդի։ այսպէս
Տր՟ և Հոգին մր՟ ած՟ 'ի
փառս ընդ Հօր արարչա
կից և պատուակից. և
ներգործօղ 'ի տնօրէ
նութեն որդւոյ։
Տր՟ և Հոգիդ մր՟ որ 'ի
փառս ած՟ ընդ Հօր։
Ան որ 'ի փառս այ՟ Հօր
ասեն, մի և նոյն է. զի
որ 'ի փառս այ՟ Հօր է,
ած՟ է ճշմարտապէս և
Հաւասար այ՟։

Տր՟ և Հոգիդ մր՟ որ 'ի
փառս ած՟ ընդ Հօր։
Այսու ոչ միայն զՀա
ւասարութի՟ և զպատիւ
յայտ առնէ ընդ Հօր և
ընդ որդւոյ զՀոգւոյն
մրյ՟. այլ և զերիս անձ
նաւորութիւն 'ի միում
ածութեն ճշմարտապէս
քարոզէ. և զուգէղ Հա
ւասս և զանբիծ խոստո
վանութի՝ ամենեցուն
ծանուցանէ՛։
Յամօթ լիցի սաբէլ և
Համախոհք իւր. որ ոչ
խոստովանին զերիս անձ
նաւորութիւն Հօր և որ
դւոյ և Հոգւոյն մրյ՟։
Ամաչեսցէ արիոս և նր
մանիք նորին. որք ոչ
խստ՟ին զորդի Հաւ՟ր
փառակից և պատուակից
Հօր։ այլ՝ նուաստ ասե
լով ոչ զարՀուրին։
Կարկեսցի բերան նես
տորի և Հետևողաց նո
րին. որք յետ անճառ
միաւորութեն՝ յերկուս
բաժանեն զմարմնաւո
րութի՟ որդւոյն այ՟։


Գա

Պապանձեսցին եւ որկքէս՝
ապողինար եւ համախոհք
իւր · որք բանական հո
գի ոչ առեալ ասենքն ·
կամ միտս մարդկայինս ·
կամ որ առաջօք ասեն
երեւեալ քն ·
Զ ըմբռեսցի մակեդոն
եւ հոգեմարտքն ամ ·
որք զտրութի հոգւոյն
ուրանան եւ ոչ դողան ։
Մ այէ նոցա եւ եղուկ է
'ի նոսա · զի կորիցեն եւ
ոչ կեցցեն ։ Ա յլ մեք 'ի
բան աղօթիցս դրձցուք ·
եւ զտրուի հոգւոյն վե
րաձայնելով խստվանես
ցուք հաստատ ընդ
հօր ասելով ։
Տր եւ հոգիդ նբ որ 'ի
փառս ած ընդ հօր ։
Ա յնինքն ոպ հայր ած
տր է եւ ած · անեղանելի
բնութի · անսկիզբն եւ
անժամանակ · արարիչ
եւ հաստիչ բոլորից ·
Ա յսպէս եւ հոգին նբ
ընդ հօր այսմ ածի զու
գակից է եւ պատուակից ·
փառացն հաղորդ , եւ
տրութեանն կցորդ եւ
ածութին գոլով մի ։
Ո՞չ թէ ընդէր ասա զոր
դի ոչ յիշէ , այլ միայն
զհոգին ընդ հօր տր եւ
ած 'ի փառս ասէ ·
Պ՚ճառն ինքեան միայնէ
գիտելի հոգւոյն նբյ ·
որ քննիչն է ամենայնի
ըստ առաքելոյ որ ասէ ,
‖ հոգին զամ քննէ եւ զխ
խորս այ , եւ ինքն յում
քէ ոչ քննի ։ Զ ի ինքնէ
ամի լցուցիչ եւ բացա
յայտիչ · եւ կամ որոց
ինքն յայտնէ զգաղտնիս՝
եւ զծածուկս իմաստութե
իւրով ծանուցանէ նբց
իւրոց եւ հոգիընկալ ա
ռանց ոպ ասէ մրգրէն ·
Ա յլ մեզ վերջացելոցս
'ի գործոց բարեաց եւ
վրիպելոցս 'ի հոգւոյն
շնորհաց , զիարդ լիցի
յայս համարձակիլ եւ ա
սել թէ Ճշմարտութե 'ի
վր հասաք բանիս կամ
ա՛յս է զոր ստուգիւ իմա
ցաք · Զ ի զայս եւ ոչ
սրբոցնէ համարձակելի

ասել. Թո՛ղ թէ մերումս նուաստութե։ Այլ միայն այսչափ թելադրութի տացուք փափագողաց բանիս, թէ նախ քան զայս զորդւոյ համապատուութիւն ընդ հօր ծանոյց Ճշմարտապէս, մի խոստովանելով 'ի փառս տրութե՛ն զհայր և զորդի։ Այ՛ աստ ա՛ւելորդ համարեցա՛ դարձեալ երկրորդել և որոշաբար զորդի ևս ընդ հօր յիշել յայսմ վայրի։ այլ միայն 'ի կամս լսողացն ապաստան արար իմանալ, թէ ա՛մ որ ինչ հօ՛ր է՝ նոյն և որդւո՛յ է ըստ տրունին հրամանին. և որդւոյն՝ հօ՛ր է։ Այսպէս և զայս պարտէ իմանալ թէ որ 'ի փառս ընդ հօր աստ զհոգին, նոյն և ընդ որդւո՛յ կոչեսցի։ Այ՛ զի տր է հոգին և պարգևատու և շնորհաբաշխ. և գիրք մեք վկայեն։ Որպ և սողոմոն յաճախապէս ցուցանէ ասելով այսպ։

Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութի. զի դոյ 'ի նմա հոգի մտաւոր, սբ, միածին, բազմաբաշխ, նուրբ դիւրաշարժ, պարզ, անարատ. և ա՛յլն ևս զոր ասէ ըստ կարգի։

Տր և հոգիդ սբ որ 'ի փառս ած ընդ հօր։

Սուրբ ասելովն՝ զած հոգին յայտ արար. զի հոգի կոչին և հրեշտակք. նա և մեր հոգիս հոգի անուանի. բայց սբ ո՛չ ասին սոքա։ Այլ սուրբ հոգի միայն նա՛ ասի որ ածութե՛ն փառակիցն է հօր և արարչակիցն որդւոյ։ որ տր հոգին է. որ անեղանելի բնութե 'ի վե՛ր է քան զամ եղականքս. միայն ընդ հօր և ընդ որդւոյ հաւասարեալ։ Որ աղբիւրն է ամ բարութեանց, և պարգևիչն շնորհաց։ Որ մրգրէս յարդարէ, և առաքլս ձեռնադրէ, և քհնայս և թագաւորս օծա

օծանէ։ Որ յորդէգրու
թիւն հօրն երկնաւորի
զամենեսեան պատրաստէ
վերըստին ծննդեամբ սբ
աւազանին. Ինքեամբ և
Ջրով նորոգել. Որ ‖ բա
րեխօսն է 'ի հեծութիւ
անմռունչս ըստ առաքե
լոյ վասն հաւատացելոց
իւրոց առ հայր։
Որով և յմ վկայեալ լի
նէր 'ի հօրէ ճշմարտամ
որդի սիրելի 'ի թաբօր
և 'ի յորդանան. Նա վա
րիւր յանմպտ 'ի հոգւոյն
և յաղթէր փորձողին։
Որոյ զօրութեն դառնայր
'ի գալիլեա և զմեծամեծ
նշանսն և զսքանչելիսն
հրաշագործէր. և համ
բաւն տարածիւր յամե
նեցունց լսելիս. Նա ա
մենեքեան գային և բը
ժշկեին յիւրաքանչիւր
ախտից, և փառաւոր առ
նէին զած։ Օ որոյ ըղ
հայհոյութին անթողլի
ասէր տրն ասա և 'ի հան
դերձեալ աշխարհին։
Նա վճիռ հատանելով
ասէր առ հրեայսն. ‖ եթէ
հոգւովն այ հանեմ ես
զդևս, ուրեմն հասել է
'ի վր ձեր արքայութին
այ։
Տր և հոգիդ սբ որ 'ի
փառս ած ընդ հօր։
Նմ և ասա յոմանց հա
կառակութե կրի թէ՝
ընդէ՞ր հմռօտ և սուղ է
եդեալ զբանս որ յղփս
հոգւոյն. և ոչ երկայնա
գոյն ոմ վասն հօր և որ
դւոյ պերճաբանեաց։
Օ որ ոչէ իրաւացի զայս
քննել. այլ միայն հաւա
տով ընդունել. Օ իյե
րեսինն մի է ածութին.
և երեքինն մի՝ յորս ածու
թին ըստ սբյ ածաբա
նին գրիգորի. Օ ի հօր
փառաբանութին և որ
դւոյ՝ և հոգւոյն համա
րեալ է. և հոգւոյն պա
տիւն՝ որդւոյ և հօր։
Նա զհօր այ երերարու
թին պատմեաց բանիւն,
և զորդւոյ զորնօրէնու
թիւնն. Իսկ հոգին զի
մարմին ոչ զգեցաւ, այլ

միայն ներգործեաց 'ի տը
նորէնութի̄ որդւոյն։
Ա̄յ երկայնապատում
ոչ արար • այլ կարճ և
համառօտ բանիւ էանց։
Բա̂ւական համարելով
աւ 'ի հա̂ւատարմութի
ա̄ծ ընդ հօր դաւանել
զհոգին ճշմարիտ։
Զի թերևս վ̄ս ձանձ
րութեա̄ն ոչ երկայնեաց
զբանս • այլ խնայելով
յաղօթի̄նսն կարճեա̄ց ։
զի հանպզօրեա̄յ է բանք
աղօթիցս • և յետ բ̄զում
աշխատութեց օրհնաբանի
յառաւօտին ժամուն ։
Զի թէ կամեցեալ էր
երկարել զբանս , գոյր
տեղի ընդարձակութե ։
Յիշելով զիջումն հո
գւոյն 'ի յորդանան և
'ի դաս առաքելոցն 'ի
վերնատունն • և զերե
ւումն 'ի թաբօրական լե
րինն լուսաւոր ամպով։
Նաև զշրջիլն 'ի վերայ
ջուրց և արարչագործել
'ի սկզբանն ։ Նա̂ զիջա
նելն մինչ 'ի ջուրս աւա

զանին • և զշնորհս և ըղ
պարգևս ամենեցուն տի
րապէս բաշխել ըստ ար
ժանւոյն։ Բայց զի ոչ
արար , վայելուչ է զոր
պատշաճ համարեցաւ
եդեալ համառօտ և լիա
պէս , ո̄պ ասէ ։
Տէր և հոգիդ ս̄բ որ 'ի
փառս ա̄ծ ընդ հօր
ա̄մէն ։
Ամէն ասելն իմն եդեալ
հաստատութի է և կնիք •
զի յեբրայականէն 'ի մերս
ամէնն՝ եղիցի թարգմա
նի • ասի և՝ է • և ստոյգ •
և ճշմարիտ ։ Նաև համա
ձայնութի̄ է ժողովրդա
կանացն մանկանց եկեղե
ցւոյ • զի ամէն ասելովն
կցորդ լինին ժողովուրդ
քըն քահանայիցն ։
Ո̄պ առաքելն յայտ առ
նէ ասելով վասն այլա
լեզուա̂ցն թէ , Զիա̄րդ
ասիցէ զամէնն 'ի քում
գովութեն որ կայցէ 'ի տե
ղի տգիտին • յորժամ հա
մաձայնութի ոչ իցէ միով
բարբառով և լեզուա̂ւ ։

Վասն այսորիկ և մերն թարգմանիչք աշխատեցան վասն գիւտի գրիս մերոյ և աղօթիւք խնդրեցին յԱյ մինչև առին. զի ժողովուրդն 'ի խաւարի մի' մնասցէ. որոց յիշտկն օրհնութբ եղիցի:

Եւ այս մինչև ցայս վայր որպէս յառաջին ասացաք՝ մեզ արանց իսկ է աղօթք և դաւանութիւն 'ի մեր Երրորդութեն կարճ և համառօտ բանիւք. առ 'ի հաստատուն ուղղափառ դաւանողաց, և զկնի եկելոց վստահութի և հաւատարմութիւն:

Վերոյ և զամենն 'ի վեր եդեալ կնքէ զբանս. որով աւարտ բանիս ամենեցուն յայտ լիցի: Որպէս թէ ասիցէ, փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն մեր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ աստ հնգերորդ պրտ է առնել. և երկար միջոցաւ դադարել. որպէս 'ի մէջ դուբղայից սաղմոսացն յորժամ զօրհնութի և զփառս մատուցանեն:

Զի մի' ոք յանդգնեսցի տգիտաբար խիզախելով. որպէս տեսանեմք յանուսումն և յանհոգայ մարդիկ. որ զվերջին բանս աղօթիցս 'ի հեռակայ բանիցդ սկիզբն խառնեն:

Եւ զայն որ ոչ է յայսմ աղօթից, այլ՝ անջրպետաւ որոշեալ և զատել, 'ի սոյն յարելով շփոթեն զճշմարտութիւնն:

Զի լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք:

Զի կոյր մտօք՝ զմարմինն ոչ վնասէ. այլ ըզհոգին 'ի խաւարի և 'ի ըստուերս մահու միշտ ընկղմէ. և որպէս թէ 'ի լոյս իցէ՝ զբօսնուլ յորդորէ. որպէս և լսեմք այժմ 'ի տըգիտաբարոյ և յանձնահաճ մարդկանէ զի ասեն: Տր և Հոգիդ մեր որ 'ի փառս ած որ ընդ Հօր և ընդ Որդւոյ օրհնիս այսօր և յամ ժամ:



Եւ

Եւ կամ որ այլ իմաս-
տունքն ձևանան, իբր
քերելով իմն ասեն. Տ՟ր
և հոգիդ ո՟բ 'ի փառս ա՟ծ-
ը՟ հօր ամէն և յամ ժամ։
Եւ ամենեքեան տընա
բաժին կէտ և հանգիստ
զայս առնեն անմտու՟բ.
Ո՛ւ հետակայ աղօթիցդ-
սկիզբն, առաջնոյ օրհնու-
թեանցս վերջ և անարտ
դնեն ոգիտաբար և ոչ
ամաչեն։ Առ որս ասել
պարտ է անող ոգիտու-
թե՟գ, եղուկ կուրութե՟գ-
վայ անուսումնութե՟գ.
Ո՛ւ ի այնչափ հոգս ոչ
առնէք զի 'ի գիրս նայիք
և դոնեայ մարմնական
աչօք զգրեալսն տեսա-
նէք։ զի իբր զյաւանակ
ընդ մարբ գալով, զճըշ-
մարտութ՟ին ճանաչիցէք։
Այլ իբրև զագդ կապ-
կաց զմի ինչ ծանուցե՟լ,
սովորաբէր զնոյն պապա-
ջէք։ Ո՛ւ ի բաց յայնմ
օրէ յորում 'ի սախտա-
կոչ ընթերցեալ են ըղ
գիրս աղօթից կամ ըղ

սաղմոսաց, բնաւ այլ
ոչէ փոյթ լեալ 'ի գիրս
նայելոյ զի զճշմարտու-
թիւնն ուսցին։ Այլ
թէ ուր ուրեք զոք տե-
սանեն զի սաղմոսարան
կամ աղօթամատոյց ըն-
թեռնուն, զարմանալով
ասեն, զոր 'ի բերան ու-
նիս՝ վա՜ էր գրովք վար-
ժիս. ընթերցիր զայն
զորս ոչ գիտես 'ի բերան։
Եւ ոչ իմանան թէ առա-
ւել այնր է պարտ հոգ-
վարել յաճախ ընթեռ-
նուլ և ստուգել զոր 'ի
բերան մատուցանեմք ա՟յ
երգելով 'ի տուէ և 'ի
գիշերի առանձին և հա-
սարակ։ Ո՛ւ ի զոր 'ի գիր
ընթեռնուք, թերևս
զսխալեալն կրկնեալ ա-
չօք ըստուգեսցէ. իսկ
առանց գրոց ասացեալն
ընդ տարակուսանօք մը-
նայ սըխալանքն, եթէ
միշտ առանձինն իվերայ
գրոցն ոչ ստուգեսցէ։
Ա՟ւ որոյ առանձինն 'ի
գիրսն պարտ է նայել

և զճշմարիտն ստուգել.
զի կարող լիցի ՚ի ժամ
աղօթիցն զուղիղն եր
գել բերանով առանց
գրոց։ Նաև զայս վ̃յնո
րիկ աստ երկարեցաք ըզ
բանս, զի զբազմաց սխա
լանս յաղօթիցս բան՝ ծա
նուսցուք. զի մի՛ ոք որ
գիտաբար զերկոսեան
աղօթս առանց միջոցի ՚ի
միմեանս յարելով՝ շփո
թեսցէ զճշմարտութի̃ն։
Նաև որ̃պ ասացաք՝ ՚ի
վերջ առաջնոյ աղօթիցս
յորժամ տ̃ր զհոգին ս̃բ
և ՚ի փառս ա̃ծ ընդ հօր
դաւ̂անէ և զամէնն ասէ
միջոց և հանգիստ առա
րեալ փոքր ինչ լռութե̃
դադարեսցէ։ Զի բա
ժանեսցի առաջին աղօթ
քըս միջոցաւ̂ն և յամե
նեցուն յայտ լիցի թէ որ
յառաջն իսկ էր ասա̃ցլ
օրհնութի̃ւ՝ աւ̂արտեցաւ
աստ։ Նաև ապա երկրոր
դումն աղօթիցդ որ ըզ
կնիք է՝ սկիզբն արարեալ
իբրև նոր իմն երգոյ և

նոր սկզբան։ Զի այդ
որ զկնիք է, յետո՛յ է ա-
սացած յեփեսոսի ժողո
վոյն, իբր վկայութի̃ և
ձեռնարկ առաջնոյ օրհ
նութե̃ցդ որ ՚ի ս̃բցն էր.
Ապ̃ այն որ ՚ի հաւ̂ա̃տմքն
են յաւ̂ելեալ ՚ի վ̃ր նիկի
ական ժողովոյն որ ասէ։
Իսկ որք ասեն՝ էր եր
բեմն յոր̃ժմ ո՛չ էր որդի։
և զիսկ մեք փառաւ̂որես
ցուքն։ Զի և այն յե
տոյ է անդ եդած։ որ̃պ
աստ ՚ի յայսմ օրհնութե̃ս
այս երկրորդ բանքս յե
տոյ աղօթական ձևով
՚ի վերայ է յօդած։
Նաև այս բաւ̂ականն է որ
միտս ունի և կամիցի լը
սել և հաւ̂անիլ կամ ՚ի
միտ առնուլ։ Զի յան
լուր ականջս ո՛չ է օգուտ
ինչ երկայնաբանելն ,
այլ զուր աշխատանք։
Իսկ ‖ իմաստնոյն պատ
ճառս սուղ ինչ ասէ
տուր, և իմաստնաս
ցի առաւ̂ել ևս
ա̃մի̂ւ։



Նաւ̂

Յորդորակ։

Եւ արդ՛ եկայք այժմ
և մեք միաբան հա
ստատեալքս ուղղափառ
դաւանութեն ճշմարիտ
խոստովանողքս սրբոյ
Երրորդութեն՝ փառաւո
րեսցուք զհայր և զորդի
և զհոգին սբ. ո՛չ միայն
բանիւք այլ և գործովք
ևս և խորհրդով։ Զի
իմանալի բնութի է ած,
և զգաղտնիս մարդկան
տեսանէ. և ոչ եղեալքն
և ոչ գործեցեալքն առ
՚ի մէնջ, բացայայտ են
առաջի նր. ‖Եւ կար
գեաց օր յորում դատէ
զգաղտնիս մարդկան. և
ո՛չ առնու ակն ամցուն
տրն. և ո՛չ խորշի յումե
քէ. զի անաչառ է դա
տաւոր, և իրաւացի առ
նէ զդատաստանն.
Ողորմածացն է խոստա
ցեալ զողորմութիւն։
Իսկ անողորմիցն տան
ջանք և դատապարտութի
ոպ ‖ մեծատանն։ Եւ զաղ
քատացեալսն հոգւով
մխիթարէ՛ յարքայութեն
որպէս ‖ զղազարոս։
Եւ որք ՚ի սուգ ապաշ
խարութե տխրեցին,
ըսփոփանս խոստացաւ
և անվախճան խնդութի։
Որք սրբեն զսիրտս յախ
տից մեղաց, տեսեալ ըզ
քս հայրականն փառօք
բերկրեալ ցնծան ՚ի յա
ւիտենիցն ուրախութիւն։
Ոչ սիրողաց զեղծարս՝
մարդասպանութե սպառ
նայ պատիժս. Իսկ սի
րողացն և զպատուիրանն
պահողացն՝ զհայրական
սէրն խոստանայ և զիւրն
երևումն հնդերձ քաղց
րագոյն սիրովն որ ո՛չ
սպառի։
Եւ դու ո՛վ մարդ,
զայս ած գիտելով պատ
րաստեա զքեզ ՚ի պատե
րազմ ՚ի կենցաղումս.
զի ՚ի կեանս յայս՝ ՚իջանս
մուծաւ մարդ և յաշխա
տանս։ Եւ թէ կամիս
՚ի կեանսն յաւիտենից
հանգչել, աստ հանդիստ
մի՛ խնդրեր. այլ մարտի՛ր

զբարուոք մարտն զի պը
սակեսցիս։ ‖ Ո՛չոք պսա
կի ասէ առաքելն, եթէ
ոչ ըստ օրինին մարտիցէ։
Եւ թէ՝ ‖ Ո՛չէ մեզ պա
տերազմ ընդ մարմնոյ և
ընդ արեան. այլ ընդ իշ
խանութիս և ընդ պե
տութիս չարագայն դի
ւացն և օդայինն այսոցն
պղծոց։ Այս նախ ուղ
ղափառ հաւատով զքեզ
զօրացո՛ ով սիրելի որդ̃ի
ուսար 'ի սրբոց հարցն
և 'ի հոգէկիր արանցն։
Եւ թէ իվր յառնէ պա
տերզմ ինչ՝ մի՛ երկիցես.
այլ մարտի՛ր հաւատով
և յուսով իվր ճշմարտու
թեն ող̃ջ և հարքն առա
ջին. զի ո̃ր ընդ քեզ է
ող̃ջ և էր ընդ նոսա։
Նաև թէ արքունական
սպառնալեաց պատահիս
և թշ̃նորական սաստից
և իշխանական ատենի,
մի՛ զարհուրիր և մի՛
թիւրեր զճշմարտութին։
Մի՛ ակն առնուք երե
սաց. մի՛ ամաչեր. մի՛
պատկառիր և մի՛ զանգի
տեր։ Այլ համարձակու
թ̃ ընդ դաւ̂թայ խօ
սեա՛ց զվկայութիս ճշմար
տութին ա̃յ առաջի թագաւ̂ո
րի առանց ամօթոյ։
Ատեա՛ զփառս մարդ
կայինս, զի յա̃յ ընկալցիս
զյաւ̂իտենականն փառացն
վայելս։ Եթէ հալածա
նաց հանդիպիս յաղագս
ճշմարտութեն, յօժարու̃թ
հալածեցի՛ր ընդ քի, զի
ընդ նմին հանդիցես։
Եթէ նախատեցիս կամ
յընչից զրկիցիս, նոյն̃պ
սիրով յանձն առցես.
զի զանսպառ բարիսն 'ի
քո̃է ընկալցիս։ Իսկ եթէ
մահ հասանէ գլխովին
վս̃ հաւ̂ատոց, մեռի՛ր
սիրով ընդ քի. զի ընդ
նմին յաւ̂իտենական թա
գաւ̂որեսցես։ ‖ Զի ոչ
են արժանի չարչարանք
ժամանակիս առ հանդեր
ձեալ փառսն որ յայտնե
լո՛ց են 'ի մեզ ասէ առա
քեալն։ Եւ թէ՝ ‖ Զոր ակն
ո՛չ ետես և ունկն ո՛չ

լուաւ. և ո՛չ ել 'ի սիրտ մարդկան, պատրաստեաց ա̃ծ այնոցիկ որ սրտին սիրեն զնա 'ի բոլոր սրտէ.

'Ի վե̃ր ա̃մի և նախ քան զա̃մ մի' յանձն ապաստան լինիր. այլ 'ի տ̃ր պարծեցիր և տ̃րամբ գործեսցես զա̃մ և տ̃ն շնորհ ունիցիս. զի առանց ա̃յ եղև և ո՛չ ինչ և ո՛չ այլ լիցի. Ա̃րոյ միշտ զխոնարհութի̃ սիրեսցես և զհեզութի̃ և զողջախոհութի̃ և զանստացուածութի̃ և զկարեկցութի̃ և զողորմածութի̃ և զսէր և զգութ առ աղքատս և առ տնանկս. Ն̂ թէ 'ի հալածանս իցես և 'ի տանջանս և 'ի նահատակութեան, զպահս և զաղօթս և զճգնութիւս մի' մոռանար.

Լաւ է թէ մերձ ես 'ի մարտիրոսութե̃ մեռանել, և կամ նշանս և ըսքանչելիս գործիցես և մեռեալս յարուցանիցես, այսմ ա̃մի առնել պէտք են հանդերձ խոնարհութե̃ և սիրով վճարել. Զ'ի առանց սիրոյ և խոնարհութե̃ 'ի զո՛ւր է ա̃մ բարեգործութի̃ զինչ և գործեն ազգք մարդկան. ‖ Թէ ունիցիմ մարգարէութի̃ ասէ առաքեալն և գիտիցեմ զա̃մ գիտութի̃, և նշանս և ըսքանչելիս գործիցեմ, և զա̃մ ինչս իմ աղքատաց բաշխիցեմ. և այրիցիմ ես հրով վ̃ն ա̃յ, և զեղբայրն ո՛չ սիրիցեմ ըստ պատուիրանին տ̃ն, ոչինչ օգտիմ յայսմ ա̃մէ.

Ն̂ սողոմոն ասէ. ‖ տ̃ր ամբարտաւանից հակառակ կայ. և խոնարհաց շնորհս պարգևէ.

Ն̂ հայր սուրբն, պատարագ ա̃յ ասէ հոգի խոնարհ, զսիրտ ն̃բ, և զհոգի խոնարհ ա̃ծ ո՛չ անգոսնէ. Ն̂ տէրն մեր հրամայէ, ‖ որ խոնարհեցուցանէ զանձն վ̃ն իմ, ես բարձրացուցից զնա փա


ռօք

ւոք յերկինս և յերկրի։ Արդ ես յո՞ բնակեցայց. եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և որք դողան 'ի բանից իմոց։ Արդ այլ ինչ բարձրագոյն փառա՛ք քան այս ընդունակ և տաճար հանգստեան լինել և տեղի և բնակարան։

Որ փառք այսմ համեմատի, կամ ո՞ր մեծութի այսմ հանգունակ լիցի։ Զի թէ զաւուրս մաթուսաղայի ոք լցցէ 'ի վերայ երկրի, և զամենայնն 'ի բարութեան վայելեսցէ, և 'ի մեծապայծառ ճոխութեան զուարճասցի, և գլխովին զթագաւորական ունիցի պատիւ, և 'ի փառացն այս զրկեսցի յետ աստեացս վճարելոյ, ողորմելի՛ է այնպիսին և քան զանբանսն ևս՝ և քան զանշունչսն։ Զի նոքա թէ և յարութեան յոյս ո՛չ ունին, և ո՛չ տանջանաց երկիւղ։ Իսկ սա՛, որ զաւուրս 'ի բարութեան վայելեաց, և 'ի մարդկանէ փառաւորեցաւ ըստ մարմնական պատուոյ. կամ կեղծաւորութեամբ ձևացաւ բարի և իբրև զսուրբ պատուեցաւ, և այս ո՛չ պտղաբերեաց ճշմարտապէս բարի ինչ որ զծածուկ սրն տեսանէ. արդարև մեծաց տանջանաց արժան կալցի այնպիսին և դատապարտութեան։

Արդ մի՛ ոք խաբեսցի որպէս ասեն ոմանք անմիտք. թէ գո՛յ տեղի որ միջոց է արքայութեան և դժոխոցն. որ թէ ոք որ յարքայութեան ո՛չ է, նա և ո՛չ 'ի դժոխսն է, ապա 'ի միջոցի անդ լիցի։ Արդ սուտ է այս կարծիք. մի՛ ոք հաւատասցէ։ Որպէս ընդ մահն և ընդ կենաց մէջ ո՛չ գոյ, այսպէս և ընդ դժոխքն և ընդ արքայութեան մէջ ո՛չ կայ։ Որ 'ի ցամաքի հանգիստ ո՛չ գտցէ, 'ի ծով ընկղմեսցի. և որ յարքայութեան չէ, 'ի տանջանսն է։ Յիմար կուսանքն որ արգելան յար

քայութենէն, ա՛յլ տեղի
ո՛չ գտին կալոյ. այլ լը
ռան 'ի տնէ թէ երթայք
յինէն անիծեալք 'ի
հուրն յաւիտենից։
Որոց փրկեսցէ քս ած
զհաւատացլքս անուանն
իւրոյ. և արժանի՛ արաս
ցէ ողորմութե իւրոյ.
Իսկ ինքն եղիցի օրհնեալ
ընդ հօր և սբ հոգւոյն
մբ. այժմ և միշտ և
յաւի՛՛։

Իսկ այս 'ի Պաւղոսի Առաքելոյն Իսկ
ասէ Մացասու։



ն յամ ժամ օրհ
նեմք զքեզ տր.
և գովեմք զանուն
սբ քո յաւիտն և յաւի
տեանս յաւիտենից։
Եթէ ո՛րքան մեծ են
բանքս ասացեալ, որք
մրտօք նայիցեն՝ նոցա՛ է
յայտնի. այլ զի աղօթա
կան բանիւ յօդեալ է
յօրհնութիս հարցն առ 'ի
վկայութի հաստատութե։
Բայց պա՛րտ է անձն հոգ
յանձին ունել և ուսու
ցանել զանձրապետութի
և զորոշումն աղօթիցս.
զի մի՛ ոք տգիտաբար մի
աղօթք կարծիցէ զերկո
սինս. ոպ տեսանեմք 'ի
յոլովս որ յասելն զիա
ւաբանական և զբազմ
օրհնեան աղօթս, զվերջ
նոյս սկիզբն յառաջնոյն
վերջն միաւորեն. և զեր
կոսին շփոթեն. զի ո՛չ
առաջնոյն վերջն ճանաչի
և ո՛չ վերջնոյս առաջքն։
Այլ միաւորելով յի
րեարս առնց հանգիստ
առնլոյ զանխուլ անցա
նեն։ Ո ի ոմանք ո՛չ գի
տեն բնաւ թէ երկո՛ւ են
աղօթք և ո՛չ մի. և յայլ
և յայլ ժամանակս ասա
ցած յայլոց և յայլոց ա
րանց. Իսկ ոմանք ո՛չ զա
ռաջինն ճանաչեն թէ
որո՛ց է, և ո՛չ զվերջինս
թէ այլոց ևս է և ո՛չ 'ի
նոյն կարգէ։ Վասն որոյ
աղաչեմ զամենեսեան,
զի յաղօթելն միջոց և
հանգիստ առնիցէք 'ի
մէջ

մէջ երկուց աղօթիցս
ոչ ասացեալ եմք յառա
ջագոյն զի յայտ լիցի
ամենեցուն։
Եւ յամ ժամ ասէ օրհ
նեմք զքեզ։
Զմարգարէին առնու
զբանն որ ասէ, օրհնեցից
զտր յամ ժամ. յամ ժամ
օրհնութի նր 'ի բերան իմ։
Այսինքն 'ի տուէ և 'ի
գիշերի միշտ գոհացայց
զքէն ։
Եւ գովեմք զանուն տր
քո յաւիտեան և յաւի
տեանս յաւիտենից։
Թէ զինչ է օրհնելն
կամ գովելն' ասացեալ
եմք յառաջին աղօթիցն
տեսութն։ Իսկ զյաւի
տեանսն' մեծին Սոսրո
վու յայտ արարեալ է եր
կայնապատում բանին ։
Այլ աստ համառօտի
զայս ծանուցանեմք թէ'
յաւիտեան է ներկայս։
և յաւիտեանս' սկիզբն
հանդերձելոյ աշխին։
և' յաւիտենից' անսպառ
և անծերանալի յաւի
տենին ։

Արժանի արա տր զօրս
զայս խաղաղութբ, և
առանց մեղաց պահեա
զմեզ. օրհնեալ ես տր ած
հարցն մերոց. գովեալ
և փառաւորեալ է անուն
տբ քո յաւիտեանս
ամէն։
Արարածապետութն մով
սէս զտիւ և զգիշեր 'ի
մի համար առնու և օր
մի կոչէ. ոչ ասէ, երկու
երեկոյ և երկու վաղոր
դեան օր մի։ Այլ զի սո
վորութ է մարդկան հա
մառօտիւ բաժանել. և
որչափ արեգակն 'ի վերին
կիսագունդս կայցէ, որ
կոչել զերկոտասան ժամն
միայն։ Նաև տրն պըն
դէր զմիտս աշակերտացն
'ի հրաժարեցուցանելն
գնալ 'ի հրէաստան. ասէ'
ոչ երկոտասան ժամ է
յաւուր։ Այսպ և աղօ
թիցս բան ասէ։
Արժանի արա տր զօրս
զայս խաղաղութբ, և
առանց մեղաց պահեա
զմեզ։

Զի ՚ի տուընջեն առա
ւել սխալէ՛ դիւրագայթ
բնութիս մեր, և անար
գել լինի ՚ի մեղանչելն:
Վասն որոյ մաղթէ՛ զխաղա
ղութիւն անցուցանելն.
զի ՚ի գիշերի է զոր քնով
անցուցանեմք և նահան
ջիմք ՚ի մեղաց: Եւ է՛
զոր նսեմութի խաւարին
առագաստէ՛ զբնութիս
մեր և կաշկանդեալ կա
պէ՛ իբրև շղթայիւք ո
մամբք: Զի ո՛չ զօրեն
ներգործել զգայարանքն.
այլ խափանին վն լու
սոյն պակասութե: Իսկ ՚ի
տուընջեան զամենայնն
պատրաստ ունին ՚ի գործ.
և յոլո՛վս մեղանչեն մար
դիկ յորժամ զերկիւղն
այ պհպան ո՛չ ունիցին:
Վասն այսորիկ ասէ:
Արժանի՛ արա տր զօրս
զայս խաղաղութբ, և
առանց մեղաց պահեա՛
զմեզ:
Այլ և որ կոչի կենդա
ղոյս ընթացք որ արե
գական բերմամբ չափի

ըստ հասարակաց մինչև
՚ի կատարած առանձին
իւրաքանչիւր ումեք կե
նացն չափ: Զի յառաջ
քան զմարմնով երևիլն
քն, գիշեր կոչէր կեն
ցաղս: Որպէս ցուցանէ
եսայի. ՚Ի գիշերաց կան
խէ հոգի իմ ասէ առա
ւօտ առնել առ քեզ ած:
Իսկ յորժամ ծագեաց
արեգակն արդարութե
քն ՚ի խաւարեալ բնու
թիս մեր և լուսով դի
տութե ելից զտիեզերս,
տիւ կոչեցաւ կենցաղս
այս ըստ իւրում տն բա
նի: Ինձ պարտ է ասէ
գործել զգործս այնո
րիկ որ առաքեացն զիս
մինչ դեռ օր կայ:
Եւ թէ մինչ յաշխի եմ
լո՛յս եմ աշխարհի:
Վկայէ և առաքեալն.
Որ խորհի ասէ՝ զօրն
տն խորհի. և որ ո՛չն խոր
հի՝ զօրն տն չխորհի այ
անձնիշխան կամացն:
Եւ յայսմ առաւր կենդա
ղոյս միշտ որոգայթադիր
ու

ունիմք զսատանայ. որ
հանապազ ջանայ որսալ
զմեզ 'ի կորուստ։
Ո՟պ գրէ գլուխ առաքե
լոցն պետրոս. Արթուն
կացէք հսկեցէք, զի ո
սոխն ձեր սատանայ իբ
րև զառիւծ գոչէ. շրջի
և խնդրէ թէ զո՞ կլանի
ցէ։ Ա՟յ խնդրէ աղօ
թիցս բան՝ խաղաղութ՟ե
և առանց մեղաց անցու
ցանել խնամոցն ա՟յ.
Ո՛չ միայն զաւաջիկայ
հասեալ օրս յորում եմք,
այլ և զա՟մ ժամանակս
պանդխտութ՟ե մերոյ իվ՟ր
երկրի։ Եւ ընդ մեծա
գոյն պահպանութ՟ե խնա
մոցն ա՟յ փոխարէնս մա
տուցնէ զհետակայ բանս
գոհութ՟ե։
Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ
հարցն մերոց. գովել
և փառաւորեալ է անուն
մ՟բ քո յաւիտեանս
ամէն։
Զերից մանկանցն առ
նու զօրհնաբանութ՟ի.
որ յիշատակաւ նախնեացն
ժգ

'ի գութ ածէին զա՟ծ։
Օրհնեալ ես ասէ տ՟ր
ա՟ծ հարցն մերոց։
Այսինքն նահ՟պտացն
աբրահամու իսահակայ
և յակոբայ. որոց հա՟ւա
տոցն և մեք որդիք և
ժառանգք կոչիմք։
Եւ նոցին միջնորդու
թեամբն աղաչեմք թէ՝
թէպէտ և ո՛չ վ՟ս մեր բա
րի ինչ գործոց, այլ գո
նեայ վ՟ս նոցին ողորմեա՛
մեզ տ՟ր. որոյ անունդ քո
մ՟բ գովեալ է և փառա
ւորեալ. ո՛չ այժմ միայն,
այլ և յաւիտեանս
ես.
Օրհնեալ տ՟ր՝ ուսո՛ ինձ
զարդարութ՟իս քո։
Երիցս կրկնէ զբան
օրհնութ՟ես ըստ սրով
բէիցն սրբասացութ՟ե որ
միշտ օրհնաբանեն.
Եւ 'ի դէմս որդւոյ ասէ
զերիս օրհնեալսն. ո՟պ զե
րիս սրբասացութիւնսն
սրովբէքն. Զոր վկայէ
յովհաննէս եթէ Եսայի
ետես զփառս որդւոյ՝
և

և խօսեցաւ վասն նր։
Նաև և կիւրեղ աղէք-
սանդրացի և դաւիթ ան-
յաղթն՝ 'ի դէմս որդւոյ
ասացեալ։ Նոյնպէս և
աստ աղաչէ բանսողորդի՝
լուսաւորել զաչս մտաց՝
կարող լինիլ նայիլ 'ի լոյս
գիտութե օրինացն այ։
Նաև 'ի խորհուրդ անօ-
րէնութեն քի որ արդա-
րութի մեզ եղև և ար-
դարացոյց զընութիս ձրի
շնորհօք ողորմութե իւրոյ
'ի ձեռն խաչին իւրոյ։
Նաև ճանաչէ զմեծագոյն
երախտիսն և գոհանայ
զառատ ողորմութէ նր։
Քանզի շնորհօքն քի
եղաք արդարացեալք և
ոչ անձին քաջութբ։
Զոր և մրգրէն ասէ ·
արդարութի քո ով լե-
րինք տր ած մեր · և իրա-
ւունք քո ով խորք բա-
զումք։ Քանզի ոչ բը-
նութբ, այլ արդարութբ
յաղթեաց թշնամւոյն
մերոյ և արդարացոյց
զմեզ։

Տր ապաւէն եղեր մեր
յազգէ յազգ։
Նախամարգարէն մով-
սէս կարդաց զանուն
տն այ մերոյ՝ ‖ տր ապա-
ւէն։ Նաև ածահայրն
դաւիթ առեալ դնէր
յերգս սաղմոսին իւրոյ։
Խորհրդաբար զսոյնս
պարզատեալ և աստ աղօ-
թիցս բան, ապւէն կար-
դաց հաւատացելոց ըն-
տրուե ամենակալին այ։
Զի ապաւէն եղև բը-
նութես, և 'ի խաւարէ
անգիտութե առաջնոր-
դեաց 'ի լոյս ճշմարիտ
ած գիտութե · յազգացն
առաջնոց որ 'ի սկզբանէ՝
մինչև 'ի վերջինս որ քի
լուսաւորեցաք, ապւէն
եղեալ մարդասիրապէս
արարչական խնամօքն
տրն իւր արարածոց իւ-
րոց · և միշտ լինի մեզ
'ի կատարած ·
Ես ասացի՝ տր ողորմեա
ինձ · բժշկեա զանձն
իմ ես մեղայ քեզ։
Զսաղմոսին առնու-

զբաւն․ և հայցէ՛ ողոր
մուԹի յողորմած տ՟նէ․
և զբժշկուԹի ոչ մարմ
նոյ խնդրելով, այլ զհո
գւոյ։ Նո՛ւ ուսուցանէ
ամենեցուն, զանձն օրի
նակ բարեց տալով այսպ՟
աղօԹել միշտ։

Ցո՛յց մեզ տ՟ր զողորմու
Թիւնս քո, և զփրկու
Թիս քո տո՛ւր մեզ։

Արժանի արա ասէ մը
տաց աչօք նայիլ 'ի սքան
չելարար ողորմուԹիս քո․
ո՟պ աբրահամ իսահակ
և յակոբ և մարգարէքն
՟ամ։ Նո՛ւ մեծա՛ գոհու
Թե՟ 'ի քէն միշտ զփրկու
Թի ընդունել հոգւոյ
և մարմնոյ, ո՟պ սովոր ես
պարգևել որոց խնդրեն
'ի քէն։

Տո՛ր ողորմուԹի քո յա
ւիտեան, զգործս ձե
ռաց քոց մի՛ անտես
առներ։

Անսպա՛ռ է ողորմուԹի
քո ասէ․ և ես զի՛ ստեղ
ծուած ձեռաց քո՛ց եմ,
արարածս արարչիդ միշտ
կարօտ գոլով ողորմուե՟։
Ա՟րոյ խնդրեմ, ո՛չ առ
նել անտես այլ կեցու
ցանել միշտ զկարօ
տեալս։

Տո՛ւր իմ զքեզ ապաւէն
ինձ արարի․ ուսո՛ ինձ
առնել զկամս քո զի դու
ես ՟ած իմ։

Զոր յառաջին ասաց
և աստ երկրորդէ․ յիշա
տակելով զապաւէն առ
նելն յօգնականուԹի,
շարժէ տկարացեալ բը
նուԹս զամենազօրն ՟ած։
Զքե՛զ ասէ արարի ա
պաւէն և ո՛չ զայլ ոք․
վ՟յ պա՛րտիս խնամարկել
միշտ։ Նո՛ւ ապաւէն կոչի՛
որ տեղի ապաստանի՛ է
սարտուցելոցն և կարո՛ղ
է 'ի Թշնամեացն փրկել․
վ՟յ ամենեքեան դիմեն
առնա։ Այսպէս և ես
զքեզ միայն ինձ ապ՟ւէն
արարի ասէ․ և խնդրեմ
զի ուսուսցես ինձ զեր
ծանիլ 'ի հընարից բան
սարկուին, և հետևիլ
միշտ կամաց տ՟նդ իմոյ

և այլ։ Զայս և աւետա
րանիչն յովհաննէս ասէ՝
Ո՛ որ գիտես զամ ուրէք
զչարախօսին մերոյ զմե
քենայս։ Դու ծածկեա՛
զմմն ընդ հովանեաւ
խնամոց քոց։

Ուսո՛ ինձ ասէ։ Միշտ
զուսանիլն խնդրէ.
զի անյագ է բնութի
մարդկին ըստ սողոմոնի.
Ո՛չ յագեսցի ասէ ակն
տեսանելով և ո՛չ ունկն
լսելով։ Նո՛ւ թէ ՚ի զգա
լիս այսպէս, որչափ ևս
առաւել յիմանալին։
Ի քէն է տր աղբիւր կեն
դանութե և լուսով քո
տեսանեմք զլոյս։

Զայս մարգարէն յա
ռաջագոյն ասաց ՚ի սաղ
մոսի անդ հոգւովն սբվ,
և զանձառ ծնունդն որ
դւոյ ՚ի հայրական ծո
ցոյ՝ և զանհաս բղխումն
ամենասբ հոգւոյն յայտ
արար, այսպէս ունելով
բանին. ՚Ի քէն է տր աղ
բիւր կենաց և լուսով
երեսաց քոց տեսանեմք
զլոյս։

Հաւատացեալքս ՚ի քս
ընդունիմք զլոյս գի
տութեան ածային շնոր
հացն, պայծառանամք ՚ի
շնորհացն մկրտութե աւա
զանին, և երեսք մտացս
պայծառանան ՚ի շնոր
հաց երեսացն այ։ Ըստ
որում ասէ երեմիաս,
Հոգի երեսաց մերոց տր
քս։ Նա և կենդանական
զօրութի հոգւոյն սրբոյ
միշտ ներգործէ յարժա
նաւորս և զանազան
շնորհօք լնու։

Ձգեա՛ զողորմութիս
քո որք ճանաչեն զքեզ
տր։

Ընդ լուսոյ առաւօտու
և զգութ ողորմութե քո
և զլոյս իմանալի մարդա
սէր կամաց քոց ՚ի հա
ւատացեալքս ծագեա՛.
տարածելով յամենեսեն
որք ճանաչեմք զքեզ տր
մեր և թագաւոր։

Ձգեա՛ ասէ զողորմու
թիւնս քո։

Այսինքն զորօրինակ ՚ի
ժամ առաւօտուն նշոյլք
ճա

Ճառագայթից արդականն ծագեալ՝ զնսեմուն խաւարին հալածական առնէ. Նոյն ողորմութե քո լոյս ճառագայթեալ ՚ի բնութե մերում, իբաց մերժէ զխաւար մեղաց և զանգիտութեան:

Նաև մեք ծանուցեալ զբարի տրդ մեր և զարարիչ, գոհասցուք զառատ ողորմութե քումմէ.

Որ ես օրհնեալ գովեալ և փառաւորեալ, այժմ և միշտ և յա":

Զկնի տոնելոյ զՓառս ՚ի բարձունս:

Փառք պատիւ և գոհութի ՚ի բարձունս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. այժմ և":

Ե[illegible]:

Փառաւորեալ իւր անճառ փառօքն. և պատուեալ ՚ի հրեշտակաց. և գոհացեալ ՚ի մարդկանէ մրշտընջենաւորականս: Նոյ և մեք զնոյնս նմա վեր առաքեմք:

Յովհաննու Իմաստասիրի վասն Նստաւորին երգոյն:

Երկու շաբաթին՝ ըստ առաւօտին պաշտաման խորհրրդեանն կարգեալ է. Յորում ժամու միւս անգամ գալուստ փրրկչին պատմի. Նոյնորին յառաւօտին աւուրն աղաղակեն ողբերգական ձայնիւ եթէ, Լոյս տուր տր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ ըստ յիմար հինգ կուսանացն. Մի՛ ասասցէ թշնամին կենաց թէ յաղթեցի նոմա. կամ նեղիչք իմ ցընծասցեն թէ ես սասանեցայց ՚ի հուրն յաւիտենից որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նր:

Իսկ Երեք շաբաթին՝ ըստ երրդ ժամու խորհրրդեանն կարգեալ է. Յորում ժմու գալուստ հոգւոյն հեղաւ յառաքեալսն. Որոյ զկենա

րար գալստեանն զմորձ
առեալ մանկունք եկե
ղեցւոյ՝ առաջի անկանե
լով աղաղակեն եթէ,
Ի քէնն է որ աղբիւր կե
նաց • և լուսով երեսաց
քո գալստեանդ տեսա
նեմք զլոյս։ Այլ թէ՝
Ծագեա տր զողորմու
թիւն քո՛ ի պաշտօնեայս և
յերկրպագուս ամենասբ
Երրորդութեդ•

Իսկ Չորեք շաբաթին
ըստ վեցերորդ ժամու
պաշտամանն խորհրդոյն
կարգեալ է• Յորում
ժամու հիւանդութիւն
նախահօրն պատմի։
Այլ 'ի նմին ժամու բը
ժշկուն իւրացն չարչա
րանօք խաչին տն մերոյ
յի քի ըստ պիտառուն
յովհաննու աւետարա
րանագրի յասելն եթէ՝
‖Էր ժամ վեցերորդ և
ուրբաթ զատկին, և հա
նին զնա 'ի խաչ։ Այլ զայս
պիսի զփրկական տնօրէ
նութե խորհուրդ ծանու
ցեալ մանկանց եկեղե
ցւոյ, աղաղակեն գոհա
նալով եթէ, Այս աղա
չեմ տր ողորմեա ինձ• և
բժշկեա զանձն իմ ես
մեղայ քեզ։

Իսկ Հինգ շաբաթին՝
ըստ իններորդ ժամու
խորհրդեանն կարգեալ է։
Յորում ժամու 'ի խաչին
աղաղակէր զելիէլին ա
սելով միածին որդին այ։
Այլ 'ի նմին ժամու ընդ
երեկս աւուրն զլուսա
ւորսն 'ի խաւարէն փա
րատէր ըստ մարգարէա
կան ձայնին Նոր առա
ւօտ ծագելով ‖Նստելոցն
'ի խաւարի և 'ի ստուերս
մահու։ Ուստի լուսաւո
րեալ մանկանց եկեղե
ցւոյ՝ աղաղակեն յառա
ւօտին յասելն թէ՝ Այս
առ քեզ տր աղաղակեցի•
առաւօտու աղօթք իմ
ժամանեսցեն առ քեզ•
և որ 'ի կարգին։

Իսկ Ուրբաթին՝ ըստ
տասներորդ ժամու պաշ
տամանն կարգեալ է։
Յորում ժամու 'ի գե

րեզման իջեալ տե՛րն արա
րածոց. և իւրո՛վ անա
պական մահո՛ւամբն զա
նապականութի մեզ շնոր
հելով, ազատեաց ՚ի դը
ժոխոց և ՚ի գերութե
նէն սատանայի: Յորմէ
փրկեալ մանկանց եկեղե
ցւոյ՝ աղաղակեն գոհա
նալով յասելն թէ՝ Տէ՛ր
ած փրկութ իմոյ ՚ի տը
ւէ կարդացի և գիշերի
առաջի քո: Նո՛ւ թէ՝
Մտցեն աղօթք իմ առա
ջի քո տր. և որ ՚ի կար
գին յարմարի պաղատա
նաց բան:

Իսկ Շաբաթին՝ ըստ
հանգստեան աղօթից
խորհրդոյն կարգեալ է.
Վս զի շաբաթն հան
գիստ ըստ եբրայեցւոց
ձայնին է և կատարումն
յա՛ւիտենից: Յորում
և մարտիրոսացն հանգի
սից յիշատակն պատմի.
‖որք զմարմինս իւրեանց
՚ի խաչ հանին կարեաք
և ցանկութբ հանդերձ
ըստ առաքելոյ. Խաչա
կից լինելով առաջին վը
կային ՚ի խաչ ելելոյն և
զիս ժողովողին: Յոր
ապաւինեալ մանկանց ե
կեղեցւոյ ՚ի նց կարող
‖բարեխօսութիւնն՝ ա
ղաղակեն ողբերգագին
ձայնիւ՛ եթէ՝ Առաքեա՛
տր զլոյս քո և զճշմար
տութիւնս քո, զի նոքին
առաջնորդեսցեն ինձ մո
տելոյս ՚ի դիտութի ճշմար
տութեն. և հանցեն զիս
՚ի լեառն սբ և ՚ի յարկս
քո. զանապատացեալս ՚ի
գերակայ բնակութենէն
՚ի սորին նո՛ւաստու
թիւս:

Նո՛ւ տաղ աւր Մասայուսի,
կամ այլն ըստ պատշաճի
աւուր:

Խորհրդոյ ժամն Երրորդին
Նախ ժամ զՄէ ածն:

Փառա՛ւորեսցուք
զամենակալն ած
զհայր տն մերոյ
յի քի. գոհանա
լով զնմանէ որ պահեաց
զմեզ խաղաղութբ ՚ի գի
շերիս:

Տես զի գոհացաւ նախ
կին, և դարձ այլ ևս
գոհանալ հրաման տայ։
Ուսուցանելով թէ վս̃
այսորիկ գոյացաք, զի
հանապազ̃այ գոհութի̃
մատուսցուք. և մի՛ եր
բէք մոռասցին 'ի մէնջ
երախտիք նր̃։ Զսոյն
զայս և մարգարէն ասէ,
օրհնեա՛ անձն իմ զտր̃ և
մի՛ մոռանար զա̃մ տուրս
նորա։

Փառաւորեսցուք զամե
նակալն ա̃ծ։

Ամենակալ ասի. զի զա̃մ
արարածս ունի ընդ իշ
խանութ̃ իւրով. և չիք
ոք որ կարէ ապստամբել
'ի նմանէ։ Թէպէտ թոյլ
ետ հրեշտակաց և մարդ
կան անձնիշխան լինել,
այլ ո՛չ եթէ յորժամ կա
միցի արգելուլ զնս̃ 'ի
կամակորութէ իւրեանց՝
զօրասցին առնել զոր կա
մին։ Որ և հա՛յր է ա̃ն
մերոյ յի̃ քի̃։ Այն որ
բնութբ̃ որդին էր ա̃յ,
կամեցաւ վս̃ ողորմութ̃
լինիլ որդի մարդոյ.
և այսու հետև եղբայր
մեր է։ Նա՛ որ նր̃ բնութ̃
հայրն է, շնորհօք և մեր
հայրն է։ Նա՛ արդ՝ ո՛չ
միայն արարչական գթու
թբ̃ն խնամէ զմեզ, այլ
և հայրականաւն։

Վս̃ այսորիկ ասէ՝ փա
ռաւոր արարէք զնա։

Զի ո̃չ զիւր ծնունդս
ընդ հովանեաւ իւրով
ամրացոյց զմեզ և խաղա
կալ զաղաչանս
մեր. զհամբարձումն ձե
ռաց մերոց և զբանս
աղօթից.

Օ այս այսպէս համա
րիմ թէ ըստ սաղմոսին
մտացն որ յերեկոյսն՝ ա
սել կարդեցաւ 'ի սկզբան
աղօթիցս։ Օ 'ի անդ
ասէ, տր կարդացի առ
քեզ և լուր ինձ. նայեաց
'ի ձայն աղօթից իմոց։
Այլ թէ՝ ուղիղ եղիցին
աղօթք իմ որպ խունկ
առաջի քո տր. համբար
ձումն ձեռաց իմոց պա
տարագ երեկոյի։ Իսկ
յաղօթս ասէ։
Լուր ձայնից մերոց տր
ած մեր. ընկալ զա
ղաչանս մեր զհամբար
ձումն ձեռաց մերոց և
զբանս աղօթից. սրբելով
զերեկոյին պատարագս
մեր 'ի հոտ անուշից 'ի
հաճոյս քեզ պատ
րաստել։
Արդ ցայս վայր զսաղմո
սին ունի զիմաստ բանքս
Այլ գեղեցիկս ասացեալ
երանելւոյն յովհաննու
ոսկեբերանի թէ՝ ձայն
և կարդացումն՝ է ջերմա
գոյն սրտին առ ած պա
ղա

ղատուժն։ Բուրվառ հո
գևոր առնել զբերանն,
և մ՟բ ունել յ՟ամ աղտոյ։
Որ՟պ հրով բորբոքել
զսիրտն ՚ի սէրն ա՟յ՝ հո
գւովն. և զաղօթսն ըղ
խունկն անոյշ՝ դնել իմ՟ն
զի բուրեսցէ առաջի ա՟յ։
Նաև զի թէ սրբեալ իցէ
ձեռն յագահութ՟է ՚ի զըր
կանաց ՚ի կոփելոյ զան
աւագն և յայլ մեղաց
սպասաւորութ՟է, համբար
ձումն այնպիսոյ ձեռբնն
պատարագ ա՟յ լինի։
Ապա թէ պղծեալ իցեն
մեղօք, փոխանակ ոսոխի
ձգեն յերկինս՝ բարկութ՟ի
անդուստ իջուցանել։
Վ՟ն այնորիկ նախ զանի
րաւութ՟ին ՚ի ձեռացն թօ
թափել արժան է, և ապա
լուանալ զաղտեղութ՟ի
նորա ողորմութ՟բ։
Նաև այնպէս առ ա՟ծ ամ
բառնալ և խնդրել ՚ի
նմանէ լսել ձայնի աղօ
թիցն, և ընդունել զա
ղաչանսն և զհամբառնալ
ձեռացն և զբանս աղօ
թիցն. և սրբել զպատա
րագն երեկոյի. որ սրբի
հոգւովն սրբով։
Որ՟պ ասացն պօղոս, ‖ զի
եղիցի պատարագն հեթա
նոսաց ընդունելի. սըր
բեալ հոգւովն ս՟բվ։
Այնպ՟ լինի պատարագն
հաճոյ ա՟յ և մ՟բ և անու
շահոտ։ Ապա աղաչէ
յետ զպատարագն անու
շահոտ ա՟յ պատրաստելոյ՝
այսպիսի ինչ փոխադար
ձել։
Յաւել ՚ի մեզ տ՟ր մեր
զհաւատ՝ զյոյս՝ զսէր
և զ՟ամ գործս առաքի
նութ՟ե։
‖ Յաւէտս խնդրեցին
յաւելուլ առաքելքն.
և մեք ՚ի նմանէ խրատելք
զնոյն աղաչեսցուք յու
սով. որ ‖ լի՛ ասաց առա
քեալն լինիլ համայնե
ցուոցն. յորմէ ամ՟ խըն
դութ՟ի և խաղաղութ՟ի
լինի ՚ի հոգւոյն ս՟բյ։
Վ՟յս և մեծաւ պաղատա
նօք խնդրեսցուք զայն
քան զբարեաց պարգևին։

 Իսկ

Իսկ սէրն ընդ ա՟յ և ընդ մարդկան՝ միաւորէ. և քո աշակերտութեն տայ ծանօթս: Զոր մեծաւ առաւելութբ՟ հաստատել մաղթեմք:

Սա՟ զա՟մ գործս առաքինութե՟:

Ա՟մ գործք առաքինութե՟ ՚ի հաւատոյ և ՚ի յուսոյ և ՚ի սիրոյ բղխեն: Զի թէ զհաւատս և զյոյս և զսէր արժանաւ ցուք ստանալ, դիւրաւ զա՟մ առաքինութիս ուղղեցեմք և կամարարք ա՟յ լինիցիմք. զոր և աստ իսկ.

Ո՟պ զի ըստ կամաց քոց բարեսիրաց միշտ կրօնաւորեալք բարեպաշտութբ՟.

Քո կամքդ աստ զբարին սիրէ: արդ զի տ՟ր մեր և ա՟ծ ես՝ հարկաւ ծառայիցս և արարելոցս ՚ի քէն՝ ըստ կամաց քոց լինել պիտոյ է. Նա՟ յայս մեք թէ և յօժարիմք, առանց քո ոչինչ կարեմք առնել: Ամենորեք պաղատիմք ո՟պ զի հաւատով և յուսով և սիրով լըցեալք ըստ բարեսէր կամաց քոց կրօնաւորեացուք բարեպաշտութբ՟:

Կրօնք՝ վարուցն և կարգացն կոչէ. Բարեպաշտութբ՟ զվարս աշխարհիս վարել միղթէ: Պաշտելն՝ ծառայելն և սպասաւորելն է. Բարի ծառայութի՝ ըստ կամաց տ՟րն պաշտելն է. Իսկ որ չէ ըստ կամաց տ՟ն, չէ բարեպաշտ. այլ դառնացուցիչ: Արդ հայցելով ը՟ կամաց երկնաւոր տ՟ն բարեպաշտել՝ յեւս համարձակութի ելանել աղօթէ: Նա՟ որ է այն: Ծառայք աստ կամարարք տերանց՝ վստահութի ունին զցայգ և զցերեկ ՚ի տերանց իւրեանց խնդրել զիւրեանց պէտս և զայլոց:

Արդ՝ եթէ լինիցի մեզ կամարարս և բարեպաշտս լինել քեզ,

՚Ի տուէ և ՚ի գիշերի



ար

արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութեն և վն հոգևոր կենաց աղաչել ըզ քեզ տր։

Նոյնպիսի եղիցուք եղ բարք, որպ զի համարձա կապէս զտիւն և զգիշեր առաջի նյ կացցուք. և փրկութի անձանց և ընկե րաց խնդրեսցուք։

Իսկ վասն հոգևոր կե նացն զի՞նչ է. Եթէ ոչ զի մի՛ ըստ մարմնոյ կեց ցեմք և մեռանիցիմք որպ ասէ առաքեալն։ այլ զի հոգւով զգործս մարմնոյ սպանցուք և կեցցուք զի որդիք այ լիցուք։ Զի որ հոգւովն այ վա րին՝ նոքա են որդիք այ։ Նոյնպիսիքն իբր ՚ի հօրէ վստահաբար զիւրեանցն և զեղբարցն խնդրեն և առնուն զպէտս։

Եւ գտանել ՚ի քէն ըզ շնորհս և ողորմութի։ Զի թէպէտ և բիւրա պատիկ համայք իցեմք, նկայն տուրքն այ շնորհք են և ողորմութի են. այսինքն ձրի և ողորմելով։

Եւ գոհանալով յաւ անդադար փառաւորել զհայր և զորդի և զհո գին սբ. այժմ"։

Հանապազ զամենայնին յարէ ՚ի գոհանալն. ու սուցանելով թէ ըն ամն գոհացողք պարտիմք լի նիլ այ. թէ ՚ի բարեկրու թեան՝ և թէ յոչախոր ժելի կեանս իցեմք։

Եւ հայցեմք ո՛չ միայն յայս կեանս լինիլ փառա բանիչս այ, այլ և ՚ի հան դերձեալսն ։ Քանզի զայս նշանակէ ասելն ՚ի փառս տալն, այժմ և միշտ և"։

Խոստովանութիւն Ս. Գնէ ցուն։

Քեզ երկրպագանելով տր ած մեր։

Ո՜վ բերկրարար ձայնիս որք միտս ունին. քանի՜ հեշտալի է զամենեցունցն ած մեզ ընտանեբար կո չել սրտի մտօք. նմա եր կիր

կիր՟պագանել մտացատես
առաջի նորա կալով և
ասելով.
Քեզ երկիրպագանելով
տ՟ր ա՟ծ մեր, գոհանամք
զքեն յաղագս խաղա
ղութե՟ անցուցանել ՚ի
մէնջ զերկայնութիւն
տունջեանս։
Արդարև մեծ գոհութ՟ի
երկրպագութե՟ պարտիմք
ա՟յ մատուցանել խաղա
ղութե՟ յերեկոյն հասելք.
Քանզի անթիւ ՚ի բազ
մութենէ են խռովութիք
վտանգիչք մարդկան որք
ըստ հոգւոյ և ըստ մար
մնոյ պատահին. Այլ թըշ
նամին կենաց մերոց ամե
նայնիւ ընդ ամենեսեան
պատերազմի. գործակիցս
իւր ՚ի մարդկանէ առնել.
Բազում անգամ և զան
դամս մարմնոց մերոց ը՟դ
դէմ վառէ մեզ ՚ի հոգւոց
և ՚ի մարմնոց վնասս. յա
ճախակս և խորհրդովք
մերովք մարտ եդեալ
կռուի ընդ մեզ.
Արդ մինչ ա՟յ օգնելովն
և պահպանութե՟ն յերե
կոյն հասանիմք խաղա
ղութե՟ ընդ առուրն եր
կայնութի անցելալք, սերտ
սիրով շնորհակալութք մե
րում տ՟ննն լիցուք. որ
պահէն և փրկէն և զօրա
ցուցանէն և յաջողէն ՚ի
գործս բարիս և լնու
զպէտս մեր. և ՚ի նաւա
հանգիստ գիշերոյն մեր
հեցուցանէ խաղաղութե՟.
Ապա իբրև վասն անցե
լոցն գոհանամք արժա
նապէս, վ՟ն առաջիկայիցն
խնդրել վստահանամք.
Վ՟այնորիկ և յարէ ՚ի
գոհութիւն.
Տուր մեզ տ՟ր աղաչեմք
զքեզ՝ զերեկս և զառա
ջիկայ գիշերս առանց մե
ղաց և առանց գայթակ
ղութե անցուցանել.
Արդարև յոյժ աղաչե
լի է զերծանիլ ՚ի հաղ
բից սատանայի և ՚ի դայ
թակղութեց նր՟ յերեկո
րին և ՚ի գիշերին ժամա
նակի. Վ՟որոյ և ոչ լոկ
ասէ թէ տուր մեզ տ՟ր,

այլ յաւելու թէ, աղաչեմք զքեզ։ Նաև ապա աղաչէ հաստատուն կալ 'ի սէրն Աստուծոյ և 'ի պատուիրանացն նորա պահպանութեան այսպէս ասելով։

Հաստատուն կալ մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութեան քում։

Սոքա իրերօք կազմին. քանզի երբեմն ասէ Տէրն, ‖եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ Նաև երբեմն՝ ‖եթէ պահեսջիք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ։ Զի սէրն քո յորդորէ և ժրացուցանէ 'ի պատուիրանաց նորա պահպանութեան։ Նաև պատուիրանացն քո պահպանութեան՝ սիրոյն նորա հաստատութիւն առնէ։ Ըստ ասացելումն թէ՝ ‖հաստատուն կացջիք 'ի սէր իմ։ Նաև 'ի նոյն յարէ եթէ պահեսջիք զպատուիրանս իմ, կացջիք 'ի սէր իմ։

Յայս միտս աղօթիցն բան մաղթէ։

Հաստատուն կալ մնալ 'ի սէր և 'ի պատուիրանապահութեան քոյ։

Ո՛չ մի ժամ կամ օր կամ ամսի, այլ հանապազ 'ի նոյին կալ և մնալ։

Խնդրելով զխաղաղութիւն ամենայն աշխարհի. եկեղեցւոյ քոյ զհաստատութիւն, և անձանց մերոց զփրկութի։

Որդարև որ հաստատեալ է 'ի սէրն քո և պահէ զպատուիրանս նորա, նա հանապազ հոգայ վասն աշխարհի խաղաղութեան և վասն սրբ եկեղեցւոյ հաստատութեան, և վասն անձին և ընկերաց փրկութեան. և զնոյն հանապազ խնդրէ 'ի քէն։ Վասն զի որ սիրէ զԱստուած 'նման նմին զամենայն մարդոյ կամի զկեանս.

Զի ընդունելով 'ի քէն զհայցուածս մեր, ըղձ վայելչական փառաբանութիս միշտ 'ի բարձունս առաքեսցուք ամենազօր Տէրութեանդ քո Աստուած մեր. այժմ և "։

Չիք մեր կար ըստ արժա

ժանեաց փոխադարձել
բարեացն Ա̃յ անկարօտին.
բայց միայն զի գոհաս
ցուք և փառս տացուք
Նմա և այնու մեք փառա
ւոր լիցուք։ Ո՛չ եթէ
Նմա ինչ յաւելումն ա-
ռասցուք որ փառաւո
րեալն է յամենեցունց։
«Քանզի գրեալ է, ‖ զփա
ռաւորիչս իմ փառաւորեցից
Իսկ զի՞նչ է վայելչականն
Ա̃ն զի վայելէ Ա̃յ ա̃մ
գոհութիւն և փառաբա
նութիւն բանք։ Որ արժա
նի՛ է փառաբանութեան
այժմ և''։

Յովհաննու Օձնեցւոյ վ̃ն
Երեքսրբեան Երգին։

Հետ որոյ և խոր
հրդաբար կար
գեալ է երից սըր
բասացութեանցն երգ.
ըստ տեսլեան մրգրէին
և մեկնութեան ա̂տրնչէին։
Զի զփառս խաչին ‖ ե՛
տես եսայի և խօսեցաւ
վ̃ն նր̃։ Զ նոյն և հայրա
կանն յայտնեաց բարբ̃ռ.

‖ փառաւոր արարի, և
դրձ̃լ փառաւոր արարից։
Եւ ինքն յաղագս իւր
վկայէ յասելն, ‖ այժմ փա
ռաւորեցաւ որդի մար
դոյ։ Ա̃յ ո՛չ վայրապար
մեք 'ի կիր առնումք ըղ
խաչեցարն 'ի գլուխ սըր
բասացութեանցն։
Եւ քանզի ս̃բ է որդի և
հզօր և անմահ . և կա
մօքն հօր և հաճութ̃ հո
գւոյն եկն նա՛ 'ի չարչա
րանս խաչին . և նովաւ
իսկ ծանեաք զհայր և
զհոգին։ Եւ մի՛ պախա
րակեսցեն այլապէս խոր
հեցողքն զերից սրբասա
ցութեանս երգ, որք և ամօթ
ևս վարկանին զփրկու
թեանն մերոյ անօթ։
Այլ մեզ յա՛յլ ինչ մի՛
լիցի պարծիլ ըստ առա
քելոյ, ‖ բայց միայն 'ի
խաչն Տ̃ն մերոյ Յ̃ի Ք̃ի։
Եւ մեզ առկայս ցի այս.
զի և ո՛չ ժամ իսկ է։
Այլ այսքան, զի ծանի
ցուք զսա՛ հրեղէն պա
րիսպ եկեղեցւոյ։


Եւ

Եւ շուրջառեալ է 'ի գլխաւորական աղօթս առաւօտի, և խորհրդական ժամուն երրորդի, և երեկոյի ։ Երիցս անգամ յաւուրն ըզնոյն եռակի կրկնելով ։

Եւ զի զխաչին երախտիքն ծանեաք, ընդ նըմին և զմայրն լուսոյ յիշատակեմք և աղերսեմք 'ի բարեխօսութի առ այն որ հաճեցաւ բնակել յորովայնի նր և խաչին սրբով փրկել զմեզ ։

Եւ այսպ փոխանակ օրինաւոր գառանցն առաւօտնոյ և երեկոյնոյ մատուցելոց, յեկեղեցւոյ աստի մատուցանի խոստովանութի մեզ անուան նր 'ի պտղոյ շրթանց, և յանբիծ վարուց ուղղութի ։

Եւ առ Մովսէսի փոխել զմեզ, և Յակոբայ Մ լսելի լինելոց ։ Եւ այսպ փոխա ։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս ։ և այլն ։

Զի պահպանիցիմք տէրունական աջովն այ ։

Ուստի և ակն ունիմք զօգնութի ընդունել յարարողէն երկնի և երկրի ։

Եւ զի յարևու փորձութեանց մի' խորշակահար լիցիմք ։ այլ պահելով զմեզ 'ի մեղանաց ապրեցիմք և յամ որոգայթից հոգւով և մարմնով ։

Տր պահեսցէ զմուտս քո ծննդեամբ յաշխարհ, և զել քո մահուամբ ։ Յայսմ հետէ մինչև յաւիտեանս ։ Յաւիտեացս մինչև 'ի հանդերձեալ յաւիտեանն ։

Աղօթս զկնի Համբարձման ։

Հայր գթած՝ բարեխնամօղ՝ արարիչ ամ արարածոց ։

Հայր ասելով՝ զվերընտին ծնունդն որ յաւազանէն՝ առաջի արկանելով 'ի

'ի գութ զա՟ծ խոնարհե
ցուցանել կամի. վ՟յնորկ
և զգթածն յաճել և
զխնամօղն։ Զի հայր
և գթած և խնամօղն՝ ո՛չ
անտես առնէ զորս յոր
դէգրութիւն ընկալաւ։
Մանաւանդ զի ո՛չ հայր
միայն է, այլ և արարիչ.
Եւ վ՟ն զի ա՟մ աշխարհի
զողորմութ՟ կամի հայցել,
վ՟յնորիկ յարէ զայն թէ,
Արարիչ ամենայն արա
րածոց։
Ընկա՛լ ըզ պաղատանս
մեղուցեալ ծառայից
քոց։
Որ հայրական և արար
չական գթոյդ թէ և մե
ղուցեալ իցեմք, ընկա՛լ
զպաղատանս մեր. զի և
ծառայք քո՛ եմք և հայր
զքե՛զ կոչեմք։
Ողորմեա՛ ի վ՟ր ա՟մ աշ
խարհի. հիւանդաց՝
վշտացելոց՝ ճանապարհոր
դաց՝ նաւորդաց՝ խոստո
վանողաց՝ ապաշխարողաց,
և հոգւոցն հանգու
ցելոց։

Ս՟ զի կամի ա՟ծ զամե
նեցուն փրկութ՟, և
սիրէ՛ զի մեք խնամածի
ցեմք և զիրերաց զօգուտն
հայցիցեմք, վ՟ն այնորիկ
մաղթեմք ա՟մ աշխարհի
ողորմութ՟ և կարգ ըստ
կարգի ամենեցուն զոր
թուեցաքն։ Եւ տե՛ս,
միայն զի ողորմիս ասէ՝
պաղատիմք. այլ զինչ
պէտք են հ՟րակաց մեզ՝
զայն դու ինքնին գիտես
առաւել քան զոր խնդ
րեմքն և իմանամքն։
Արդ զի առա՛տ ես պար
գևօք բարերարութե՟՝
և զպէտս գիտես առա
ւել քան զմեզ՝ ողորմիլ
հայցեմք և գթա՛լ հայրա
բար. և յամենայնի քեզ
փառս մատուցանեմք.
Քանզի յարէ 'ինոյն,
Եւ քեզ Հօր արարչի
և Որդւոյդ միածնի
հանդերձ կենդանարար
և ազատիչ ս՟բ Հոգւովդ
վայելեն փառք իշխա
նութ՟ և պատիւ.
այժմ և՟։

## Յովհաննու Օձնե ցւոյ.

Ե̂ ապա սաղմո
սօղքն հասարակ
մաղթեն՝ ընդ հո
վանեաւ բարձրելոյն լի
նիլ. և յերկինս հանդըս
տեանն արժանաւորիլ։
և աստէն յորսողին փըր
կիլ որոգայթից զինու
ճշմարիտ պահպանութեն։

Ե̂ զի թաքնաբար ընդ
խաւար շրջի որոգայթա
դիրն, զօր̄ց՛ առեալք զըն
թացս սրտից մերոց՝ կո
խել զգլխաւորական չա
րութի̄ չարասիրին.

Ա ս̄րոյ և յայսմ գիշերի
առ քեզ համբառնամք
զմտաւորական աչս իբր
ծառայ առ տր̄, զի 'ի ծը
փական տառապ̄նաց զեր
ծուսցես զմեզ. և ըն
դունիցես զոգիս մեր
անխարդախ կանխել առ
քեզ 'ի մէջ գիշերոյ և
յառաւօտի. և զկամա
ւորն մատուցանել քեզ
պատարագ բանաւոր.

Ե̂ քարոզն միաբան
խնդրել զայսօրիկ յոր
դորէ.

Իսկ քահանայն միջ
նորդէ աղօթիւք առ
կենացն անմահից յոյսն
յս̄ քս̄, կատարել 'ի բա
րի զաղօթսն՝ բարեխօ
սութեամբ սրբուհւոյ
ա̄ծածնին և հաճոյա
կան վկայիցն.

Ե̂ ժողովուրդն զքա
հանայն տր̄ անուանե
լով աղաչէ յիշել յա
ղօթսն զպաշտօնեայսն
ըստ հոգւոյ և մարմնա
պէս, և զծնօղսն, և զայլն
ևս միըստմիօջէ.

Իսկ նա համառօտելով
ասէ, Յիշեա զմս̄ հա
ւատացեալս և փրկեա
յիւրաքանչիւր վըտան
գից և 'ի փորձութե̄ց.
զի յամենեցունց արժա
նապէս փառաւորի
ամենաս̄բ Երրոր
դութի̄դ. այժմ
և միշտ և
յաւի՛՛։

Քարոզ Ապաշխարողաց։
Խոստովանու։

Եկեալքս ՚ի խոստովանութ ապաշխարութե հաւատով զայս միածնի որ դւոյն այ դիցուք ՚ի սիրտս մեր։

Տեառնեմս, զի չասէ լոկ զապաշխարութիւնն․ այլ նախ զխոստովանութիւնն և ապա զապաշխարութի․ զի առանց խոստովանութե չիք ճար քաւութի գտանել։

Վասորիկ պարտ է փութալ ՚ի խոստովանութի․ քահանային խոստովանիլ միանգամ․ և այ հանապազ․ և այնպէս պաղատել հաւատով և յուսով։ Թէպէտ և բիւր չարեօք և սաստիկ մեղօք վիրաւորեալ իցեմք, հաւատացուք ՚ի մարդասիրութեն քի քաւութի և թողութի առնուլ․ քանզի հրամայէ քարոզն։

Հաւատով զայս միածնի որդւոյն այ դիցուք



՚ի սիրտս մեր խնդրելով ՚ի նմանէ զքաւութի և զթողութի յանցանաց մերոց։

Առ ՚ի հաստատել զայսն՝ զբարերարութեն քի ըղ գործս և զբանս որպէս առհաւատչեայ առաջի դնէ։

Ս̃ զի նա ինքն է նախախնամօղն ամ յաւէտ տենական որ եկն կամաւ հօր ՚ի փրկել զարարածս․ և ասաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց՝ յոյս ապաշխարողաց․ շնորհելով հանգիստ աշխատելոց․ ընդունելով զծանրաբեռինս և զտաժանեալս մեղօք յապաշխարութի քաւութե։

Նախախնամօղ այն է որ յառաջախնամօղ լինի առ հոգս ուրուք․ քանզի և արուեստ իսկ այ բարերարութեն այս է՝ նախահոգամ լինիլ առ իւր արարածս․ Քանզի յառնելն զմարդն՝ նախ զեր կինս և զերկիր ՚ի սմինօքս

արար, և ապա զմարդն
գոյացոյց։ Նա՛ յառաջ
զդալարին, և ապա զա
նասունս ստեղծ։
Նա՛ ցարդ ևս՝ նախ քան
զելանել մանկանն յար
գանդէն՝ և կամ անաս
նոց ծննդոց, լնու զըս
տինսն կաթամբ առ նո
ցայն սնունդ։ Այլ և
զստինսն կանանց և զո
րէնս նշ երբ ժամանակ
լինի ծննդականութեն՝
նախակարգէ։ Իսկ զՀո
գւոյն նախախնամութ՝
նախ արարածովքս եցոյց
զի ծանիցի արարիչն ստ
քօք։ Յետ այսր սրբովք
իւրովք արդարովք և
մարգարէիւք։ Ապա իւ
րով մարդանալովն։
Յետ այնր՝ առաջնորդովք
և գրովք սրբովք ազգի
ազգի օրինակս ուղղու
ցուցեալ ինքեամբ և
ընտրելովք իւրովք։
Նա՛ մեղաւորացն և սօրի
նակ քաւու ցուցեալ
՚ի հնումն և ՚ի նորումն։
Այլ և մարգարէիւքն

կոչեալ զամ մեղաւորս
յապաշխարութի՝ և ՚ի քա
ւութի յուսադրեալ։
Նա՛ զիւր գալուստն՝ մե
ղաւորաց վն ասէ. և եր
թողացն առ ինքն՝ յապաշ
խարութե մեղաց և՚իբեե
ռանց նշ հանգիստ խոս
տանայ։ Այսէ զոր ասէն
Շնորհելով հանգիստ
աշխատելոց։
Իսկ՝ ընդունելն զծան
րաբեռինս և զտաժա
նեալս յապաշխարութի
քաւութե՝ այսէ, որ ոչ
բանիւք միայն, այլ և ար
դեամբք եցոյց ընդու
նելութի մեղաւորաց։
Որպ զմաքսաւորն առա
քեալ և աւետարանիչ
արար։ Նա՛ միւս մաքսա
ւորին՝ տամբքն փրկու
եա։ Զ պոռնիկն արժա
նացոյց յամենասը ոտն
իւր մերձիլ. և պղծեալ
շրթամբքն համբուրել.
և ՚ի պատրօղ աչացն ար
տասուաց լուանիլ. և
վարսօր գլխոյն հերովն
մաքրել։ Որում ոչ մե
ղացն

ղացն միայն Թողուլի եւտ
այլ և աշխարհաքարող
զնորա ուղղութիւն անե
տարանաւն արար։
Նաև զանազանն յառաջե
ցոյց քան զամենեսեան
'ի դրախտն։ Ո՛ պետրոս
ոչ միայն յուրացութեան
գլորմանէ կանգնեաց,
այլ և գլուխ առաքելոց
և հիմն եկեղեցւոյ և փա
կող արքայութեան լինել
պատրաստեաց։ Ո՛ սոսա
և զայլս բազումս զտա
ժանեալս'իմն զս'այսինքն
զաշխատեալս 'ի չարեաց
ծանրբեռինս, յայս և'ի
սոյնպիսի բարեաց հան
գիստ շնորհեաց քա
ւութե։
Արդ եկայք ամենեքն խո
նարհեալ անձամբ՝ բե
կեալ սրտիւ՝ անկցուք
և լացցուք առաջի տն
արարչին մերոյ։
Այս է դեղ մեր վէրաց
չարաց՝ խոնարհ միտք և
բեկեալ սիրտ. զոր չէք
ձեռար արհամարհել այ.
այլ պատարագ հաճոյա

կան է այ խոնարհն.
Սոյն է որ զհայրն 'իմե
ղաւորն այ առնէ.
Որդի ասաց ինքնին մար
գարէիւն՝ յո՞ հայեցայց
ես. եթէ ոչ 'ի հեզս և
'ի խոնարհս և որք դո
ղան 'ի բանից իմոց։
Յայնպիսին ոչ հայի և
եթ, այլ և հուպ կայ 'ի
նոսա և կեցուցանէ։
Մերձ է ասէ տր առ այ
նոսիկ որ մաշեալ են սրր
տիւք, և զխոնարհս հո
գւով՝ կեցուցանէ։
Նաև թէ յանձն բեկեալ
մերձ է ած՝ որ այնպիսի
խոնարհի՝ մտօք և բեկա
նի՝ սրտիւ, նա յարտաս
ւաց ոչ երբէք դադրէ.
այլ համակ 'ի սուգ է.
հանապազ անկանի առա
ջի այ արարչին իւրոյ.
յորմէ և մխիթարի և ե
րանելի՝ լինի։ Բայց ոչ
վայրապար յաւել մար
գարէն զասելն, անկցուք
և լացցուք առաջի տն
արարչին մերոյ. յորմէ
քարոզս գբանն էառ։


Այլ

Արդ զի 'ի միտ առցուք
թէ ո՛րչափ մեղաք։ ա՛րդեն
որ արարն զմեզ բարի.
վ՟ նմանող իւր լինելոյ.
վ՟ հաճոյ իւր լինելոյ.
վ՟ ծառայելոյ ըստ կա
մաց հաստչին։ և վ՟ այսր
ամ՟ի եղեալ 'ի նմանէ։
Փոխանակ այսոցիկ դառ
նացուցիչք լեալ, յիրա
ւի լալ և ողբալ պար
տիմք առաջի նր՟։

Զի որ թէ արասցուք,
գրթայ վ՟ արարչական
սիրոյն և ներէ. և ո՛չ
խնդրէ զվրէժ։

Բանզի և քարոզն 'իսոյն
յօդէ զայս։

Զի անցուսցէ 'ի մէնջ
զցասումն պատուհասի
յանցանաց մերոց։

Մեք յիշելովն զարար
չին երախտիս և զմեր
ապերախտութիւն, 'ի լալն
այնու գամք եթէ իցեմք
երկիւղածք 'ի անէ։
Այլ արարիչն 'ի գթոյն
չկարէ ըզլացեալսն պատ
ժել. այլ և մխիթարա
լից ևս առնէ։

Ապա յաղօթս զբանն
փակէ. ամենակալ տր ած
մեր կեցո՛ և ողորմեա՛
մեզ։

Աղօթք Խոսրո
վու։

Տ բարձրեալ գո
վեալ և փառա
ւորեալ.

Ի սկզբան աղօթիցս ուշ
առնեմք անձանց զայ
մեծութիւն և զմեր յան
դգնութիւն։ Այլ դար
ձեալ զայ ներողութիւն
առ մեզ. զի ած է, և զի
բարձրեալ է 'ի վր՟ երկնի
և երկրի, և զի գովեալ է
'ի բնութէ և 'ի գործոց
և յերախտեաց իւրոց, և
փառաւորեալ է յամենե
ցունց։ Այլ մեր արհա
մարհեալ զնա և զպատ
ւիրանս նորա. և նա եր
կայնամիտ է և ներէ. և
անսայ ապաշխարութէ։
Այլ 'ի դառնալն' գիրկս
տարածանէ և ընդունի
խնդութեամբ. վ՟ որոյ
և ասէ,

 Որ

Որ երկայնամիտդ ես
քաղցրութբ քո։
Յայն սակս ներողութեդ
մինչ դեռ 'ի մեղսն
իցեմք։
Բազումողորմ և բազ
մաշնորհ ես առ ամենե
սեան որ կարդան առ
քեզ և խնդրեն 'ի քէն
զքաւութի և զթողութի
յանցանաց։
Նոյն առ դարձեալսն
յապաշխարութի։
Որպ կանխաւ խօսեցար
'ի ձեռն մարգարէին
և ասացեր, ‖ դարձարուք
առիս և ես դառնամ առ
ձեզ. զի ոչ կամիմ զմահ
մեղաւորին, այլ զդառ
նալ նր 'ի չար ճանապար
հէն և զկեալն։
Զայս եզեկիէլ մարգա
րէ որպ յերեսաց այ ասէ
յապաշխարութի յորդորե
լով զմեղուցեալսն։
Նա դարձեալ իսկ ասա
ցեր բերանովդ քով
սրբով եթէ՝ ‖ ոչ եկի կո
չել զարդարս, այլ զմեղա
ւորս յապաշխարութի։
ԻԲ

Զայս ասաց տրն յոր
ժամ բանբասեցաւ 'ի
փարիսեցւոցն թէ ուտէ
և ըմպէ ընդ մեղաւորս
և ընդ մաքսաւորս։
Քանզի վասն բժշկելոյ
զնս՝ յանձին կալաւ ընդ
անիրաւսն զանիրաւաբր
ժողովեալսն ուտել։
Արդ մեք զայսպիսի մար
դասիրութիւն յիշելով
ասեմք թէ՝ որ մարդա
րէիւն խոստացար դառ
նալ 'ի դարձեալսն 'ի քեզ,
և քոյին ամենասբ բերա
նովդ ասացեր յապաշխա
րութիւն ընդունել
զմեղաւորս։
Արդ ողորմեա՛ց ած իմ
ապաշխարողաց. և ընկա՛լ
զսոցա զաղօթս զխնդրըր
ւածս զպաղատանս ըղ
խոստովանութս։
Թէ և արժանի ինչ գործս
չունիցին, զի ողորմա՛ծ
ես՝ ողորմեա՛ և ընկա՛լ
զաղօթելս և զաղաչելս
և զպաղատելս և զխոս
տովան լինելս զմեղս։
Աղօթք է աղերսել ինչ։


և

և խնդրեալք է կարևոր
պիտոյից յայտնութեան։
Պաղատանք է՝ վս պա
տուհասի սպառնման եր
կիւղալից աղաչանս մա
տուցանել և տագնապա
ստիպել առ ներութն։
Գթութե քո թող սոցա
զմեղս և զյանցանս և
զպարտիս։
Դարձեալ 'ի գթութին
ապաւինի գթալ և թո
ղուլ զմեղսն։ Մեղք և
յանցանք և պարտիք՝ ա
մենեքեան անօրէնութե
անուանք են։ Բայց թէ
զանազանէ ոք, զմեղսն
ասաց և զյանցանսն՝ ըղ
պատուիրանաւն այ ան
ցանել։ Իսկ զպարտիսն՝
զոր պարտիմք տանջանաց
եթէ ոչ ապաշխարի
ցեմք։
Մարդասիրութե քո բը
ժըշկեա զվէրս զհար
ուածս զբեկութե որ եղև
'ի նենգութե թշնամւոյն
և 'ի մոլար խաբէութե
նորա։
Տէր՝ և աստ 'ի մարդա
ԻԿ.

սիրութիւնն յուսայ բը
ժիշկ լինել վիրացն։
Զանազանէ զանուանսն
և աստ. զի ոմն սաստիկ
վիրաւորի և ոմն նուազ
հարուածելէ և ոմն խոր
տակութն ընկալեալ։
Նա պատճառ ամցունց՝
նենգութին սատանայի է
որ խաբէ և մոլորեցուցա
նէ զոչ զգուշացեալսն։
Որպէս զի սոքա միւսան
գամ առողջացեալք հո
գւով՝ մնասցեն յեկեղեցի
քո սբ։
Պաղատանս մատուցա
նէ քահանայն զի զամ
հիւանդութիւն բժըշ
կեսցէ և 'ի սբ առողջու
թիւնն հասուսցէ։
Զի միւսանգամ յեկե
ղեցի մտանել արժանաս
ցին և ժողովրդեանն այ
փառաբանակից լինիցին։
Քանզի ամենեքեն որք
'ի քս մկրտեցան, քի ան
դամք և մարմինք եղեն։
Իսկ մեղուցեալքն ըստ
ասելոյն 'ի պօղոսէ ոչ կա
րեն անդամք քի լինել·
զի

զի որ մերձենայ 'ի պտու-
նիկն՝ նորա մարմին է։
Այլ ինքն իսկ տէրն ասէ,
իբրաց կացէք յինէն ա-
մենեքեան ով գործէք
զանօրէնութիւն։
Վասն այնորիկ և յեկե-
ղեցւոյ արտաքսեն զանօ-
րինեալն. զի եկեղեցին
տուն այ է. և 'ի նմա ոգ
յառաջաստի՝ միանան ը
քի ոգիքն. և յանցաւորքն
յերեսաց նր ընկեցեալք
են։ Մինչև ստոյգ խոս-
տովանութե և ապաշխա-
րութե վերըստին առող
ջասցին. սրբեալք 'ի մե-
ղաց՝ արտասուաց ան-
զանաւ. որով մաքրա-
ցեն դարձեալ յեկեղե-
ցի յոգւոցն հարսանարան
մտանել և 'ի ժողովուրդ
այ խառնիլ. և ը հրեշ-
տակս և ընդ սբս այ՝ մա-
տուցանել գոհութի այ։
Բանզի յեկեղեցիս այ
միաբանութի լինի հրեշ-
տակաց և մարդկան և
սբցն ոգւոց. Սորդ՝ ար
տաքսեալքն խոնարհ հո

գւով և բեկեալ սրտի-
սուգ առցեն և ողբասցեն
զայնպիսի վրիպանան.
զի հասցեն 'ի գթութեցն
այ քաւութի. և առողջա-
ցին և 'ի սբսն խառնես-
ցին, և 'ի ժողովուրդան
միասցին։ Որպէս և
ասէն թէ՝
Այ ընդ ժողովրդեան
քում հանցեն զօրհնու-
թիւն և զփառս հօր և
որդւոյ և հոգւոյդ սբյ
այժմ և։։

Ասյն Այրոնէր Մալթանման Մ. գօրհնոց։

Թագաւոր խաղա
ղութե՝ օգնական
և փրկիչ անձանց մերոց
քս այծ մեր, պարըսպեալ
պահեա զհաւատացեալ
ժողովուրդս քո ընդ հո
վանեաւ պատուականն և
սբ խաչի քո 'ի խաղա
ղութի։
Օ մարգարէին առեալ
զբանն. զոր կանխագու-
շակ եսուցեալ պատմաբա
նեալ ասէր 'ի դէմս քի
ես

Ապա կացի Թագաւոր 'ի
նմանէ իվր սիօնի լերին
սբյ նր։ Ապա դրձլ ասէ,
Թագաւորեաց ած իվր
հեթանոսաց։ Ապա թէ՝
ասեմ զգործս իմ Թա
գաւորի։ Ապա այլ ուր
յայտնապ ասէ, որ Թա
գաւորեաց՝ վայելչուն
զգեցաւ խաչին։
Զի թէպէտ և ածութե
էր Թագաւոր յառաջ
քան զյաւիտեանս 'ի վր
ամի, այլ զմարմնով Թա
գաւորելն ասէ։ Ապա զի
արար խաղաղութի արեամբ
խաչին իւրոյ, վսրոյ և
Թագաւոր խաղաղութե
կոչէ։
Օգնական և փրկիչ ան
ձանց մերոց քս ած
մեր։
Օգնական եղև բնու
թեա որ տկարացեալ
էր 'ի մեղաց, և փրկեաց
'ի ծառայութէ սատա
նայի. ըստ առաքելոյ,
Ոչ ապականացու արծա
թեղինօք և ոսկեղինօք
փրկեցայք. այլ՝ պատուա
կան արեամբն քի։
Այս տիրապէս ցուցաւ
մեզ որ և Թագաւոր և
օգնական քս ած մեր։
Որն ըստ մարմնական տը
նօրէնութեն որով փրկե
ցաք։ Ապա ած ըստ արար
չական որութեն։
Պարըսպեալ պահեա՛ ըզ
յուսացեալ ժողովուրդս
քո ընդ հովանեաւ պատ
ուական և սբ խաչի քոյ
'ի խաղաղութի։
Ասեծ է խնամք բարե
րարին այ առ արարածս
բայց և ս առաւել առ հա
ւատացեալ ժողովուրդս
և առ երկիւղածս իւր
ցուցանէ զխնամական
գթութիւնս իւր։
Ըստ այնմ, բնակէ հրեշ
տակաց տն շուրջ է զեր
կիւղածովք իւրովք և
պահէ զնոսա։ Ապա թէ՝
զկամս երկիւղածաց իւ
րոց առնէ տր։ Ապա դար
ձեալ թէ՝ եղիցի ձեռն
քո 'իվր առն. աջ քո 'ի
վերայ որդւոյ մարդոյ.
Ո՛չ է զոր բան աղօ

Թէցս խընդրէ պարիսպ
և պաՀպանութի։
Իսկ զի ասէ, ընդ Հովա
նեաւ պատուական և
սբ̃ խաչի քոյ։
Սաչդ անուն յառաջ
մինչ չև էր քո̃ ՚ի նմա
բևեռեալ՝ նախատանաց
էր անուն և չարագոր
ծաց պատժարան։
Ա̃ որոց և անօրէն Հրէ
այքն այլազգ մաՀուամբ
ոչ կամեցան զտր̃ն սպա
նանել, բայց միայն խա
չիւ. զի յամենեցունց
մաՀապարտ և չարագործ
կարծիցի որպէս զաւա
զակսն. վասն որոյ և ընդ
նոսա խաչեցին։
Իսկ տր̃ն որպէս մարմին
զգենլով զմեղանչական
մարմինս սրբեաց և մաք
րեաց, այսպէս ՚ի խաչին
բևեռելով պատուական
և սբ̃ արար զխաչն։ և
ետ պարիսպ ամրութե
և զէն անվթար Հաւա
տացելոց իւրոց։
Ա̃ զորօրինակ որք ընդ
Հովանեաւ ծառոց կամ
այլ իմիք տաղաւարին՝
անվնաս մնան ՚ի տապոյ
արեգականն։ Ըստ այսմ
օրինակի որք ընդ Հովա
նեաւ պատուական և
սբ̃ խաչին պաՀպանին՝
ամրացեալ և խաղաղա
ցեալ մնան յամ̃ մեքե
նայից սատանայի. իբր ըզ
քաղաք ամուր եօթնեկի
պարըսպօք զօրացեալ.
զոր և միշտ ՚ի մեզ լինիլ
մաղթեսցուք. Ա̃ զի
միշտ դարանամուտ լինի
չարն. և ջանայ որսալ
՚ի կորուստ զորդիս մարդ
կան. ոչ միայն զՀոգիս
վիրաւորելով, այլ և ըզ
մարմինս չարաչար վտան
գօք լնու. Ո̃ ոմանս
՚ի զանազան մեղս գթե
ցուցանէ. և յոմանց վե
րայ զաունս փլուցանէ։
Ո̃ այլ ոմանս գ.Հավէժ
կամ̃ բքախեղդ գետա
կուր և ծովամոյն առնէ։
Ո̃ կէսս դազանակուր
և աւազակախողխող առ
նէ։ Աիսոց ‖զիւրովին տայ
երթալ և անձնամատն

լինիլ։ Զ որոց ընդ մար-
մնոցն և զհոգւոյն կորու-
սանէ և բաժին խաւա-
րին առնէ։ Թողից ա-
սել և զորս կախարդա-
նօք դիւթութեամբ և դե-
ղատուութեամբ և այլ զա-
նազան չարեօք սովոր է
կորուսանել զձօնիչսն
և զձօնեալսն։

Նա՛ արդ յայսմ ամե-
նայնոքիկ զերծանին որք
միշտ ընդ հովանեաւ պա-
տուական և սբ խաչին
պահպանին․ և զօրութեամբ
նորին՝ յերևելի և յան-
երևոյթ թշնամեաց ճո-
ղոպրին։ Ո՛վ և մեծին
կոստանդիանոսի երևէր
նշան խաչին և յաղթու-
թիւն շնորհէր․ և ամե-
նեցուն նոյնպէս լիցի։
Ա՛յո և արժանի՝ լինին
ասա և ՚ի հանդերձեալ
երկրին հաստատեալք
անդադար փառաւորել
զսբ զԵրրորդութին․
այժմ և միշտ և
յաւի''։



Յորդորակ։

Եւ՛ արդ՝ զայս ամ գի-
տելով սիրելիք բա-
զում փոյթ յանձին կալ-
ցուք ընդ հովանեաւ կեն-
սատու Խաչին պահպա-
նիլ յերևելի և յաներե-
ւոյթ թշնամեացն․ զի ար-
ժանի լիցուք արժանապ
փառաւորել զարժանին
ամ փառաց և պատուոյ
զՀայրն ամենակալ և
զՈրդին միածին և ըզ
Հոգին ճշմարիտ։

Նա՛ այս որպէս լինի։
Յորժամ արժանի լինիմք
ամ արթնութեամբ պահել
զպահպանութին ոգւոց
մերոց․ և զպատուիրանն
որ յաւազանէն՝ ոչ աղտե-
ղացուցանել։ Յորժամ
զգուշասցուք գործոց
բարեաց և առաքինասէր
վարուց․ և պաքնութ և
աղօթիւք արժանի՝ լի-
ցուք բերել յանձին ըզ
նմանութին անմարմնոցն
դասուց։ Յորժամ մի-
մեանց հնազանդեսցուք․
զմիմեանս լաւ՛ համարել

քան զանձինս. և աղօթից
ըստէպ կացցուք. և 'ի
պէտս սրբոց հաղորդես
ցուք. և օտարսիրութե՛
զհետ երթիցուք. զաղ
քատս կերակրելով. ըզ
մերկս զգեցուցանելով.
'ի տես հիւանդին ոչ
դանդաղելով. որբոց և
այրեաց ունկնդիր լինե
լով: Նեղելոց զրկելոց
և կարօտելոց օգնակա
նութի՛ և կարեկցութի՛ առ
նելով և զպէտս լնլով:
Եւ զպաղատանս վտան
գելոց անտես ոչ առնե
լով. յընտանեաց զա՛նա
կի զակն ոչ դարձուցա
նելով: Ո՛չ հատուցանել
չար փոխանակ չարի. կամ
բանբասանս ընդ բան
բասանաց: Ո՛չ տալ թոյլ
մտանել արեգական ի վե՛ր
բարկութե՛. այլ թէ հը
նա՛ր իցէ ընդ ա՛մ ումեք
զխաղաղութի՛ ունել. և
զանձն օրինակ տալ գոր
ծոց բարեաց և անարատ
վարուց առ ա՛մ ոք:
Լալ ընդ լացօղս և խըն
դալ ընդ խնդացօղս:
Եւ գթալ առ ա՛մն. և
սէր մ՛բ ունել ընդ ա՛մ
ոք. և սրտի՛ սիրել և
գթալ ի վե՛ր վտանգելոց.
և զմիմեանց բեռն բառ
նալ: Ո՛ ի՛ բանիւք և եթ
սիրելով, այլ՝ արդեամբք
և գործովք կարեկից լի
նելով առ ա՛մն, և բաշ
խելով զկարև որ պէտս
գթով և սիրով:
Որպիսի ոք աբրահա՛մն
էր աղքատասէրն՝ օտա
րասէրն: Որ ուխտ դնէր
անձինն առանց հիւրի
ոչ ճաշակել: Որ ընդ
օտարացն և զա՛ծ ընդու
նէր. որ զսէրն ա՛յ առ սի
րելիսն ա՛յ ցուցանէր.
մանաւանդ թէ առ նը
մանսն և փոխանորդսն:
‖ Որով հետև արարիք
ասէ միում՝ ի փոքրկանցս՝
ինձ արարիք.
Որպիսի ոք յո՛բն էր որ
զինչսն ո՛չ անձին և եթ
ունէր, այլ հասարակաց.
Որ աչք էր կուրաց և
ոտք կաղաց, հանդերձ

մեր

մերկոց և կերակուր կա
րօտելոց։ Որ յո՛րկ էր
հանգստեան աշխատելոց,
և յանձանձիչ վշտացելոց
Որ ողորմութե՛ աղբիւրն
էր և համբերութեան
ապացոյցն։ Որ զինչսն
յորժամ ունէր ո՛չ իւր
ունէր, այլ իբր զտ̃րունի
բարւոք մատակարարէր։
Նա՛ յորժամ յընչիցն վրի
պէր, իբրև զբեռն ծանր
'ի բաց եդե՜լ համարէր.
որ ընդ ընչիցն և զանձն
ևս տայր սիրոյն ա̃յ փո
խարէն. և համբերութբ̃
տանէր եօթնամեայ վըշ
տացն և նեղութեանցն։
Նա՛ զի ոչինչ պատուա
կան ա̃յ սիրոյն փոխանա
կեաց, ո՛չ զինչս, ո՛չ զոր
դիս, նաև ո՛չ զանձն ևս։
Ս̃րոյ վերստին այսրէն
կրկին ընդունէր զա̃մ.
և 'ի հանդերձեալսն ըզ
յաւիտենական կեանս
ժառանգէր։

Որպիսի ոք մովսէսն էր
հե՛զն և հանդարտն յա
մենայնի. որ և յա̃յ բերա
նոյն վկայէր ‖ Ծռ̃յն իմ
մովսէս հե՛զ է քան զա̃մ
ոք։ Ընդ որում և բե
րան 'ի բերան խօսէր ա̃ծ
Որ և յայտնի ցուցանէր
զհեզութիւնն ասելով,
‖ Տ̃ր՝ եթէ թողուս զյան
ցանս ժողովրդեանս թո՛ղ.
ապա թէ ո՛չ, և զիս ջըն
ջեա՛ 'ի դպրութէ քումմէ
յոր գրեցեր. Որ և ‖ վ̃ս
անձին արհամարհանաց
ո՛չ ցասնոյր, այլ խոնար
հութեամբ տանէր.
Իսկ ‖ վ̃ս փառացն ա̃յ՝
բազում բարկութեամբ
վրէժխնդիր լինէր։
Մինչ զի ‖ զտախտակսն
որ յա̃յ՝ խորտակէր. և
‖ զյանցաւորսն սատակէր։
զբարւոք նախանձն ա̃յ
նախանձէր. և արարչին
հաճոյ գտանէր. և ‖ առ
նոյր վերստին զօրէնսն։
Ո՛ հիւանդացեալ ժողո
վուրդն կազդուրեցու
ցանէր. և յերկիր աւե
տեաց առաջնորդէր յօ
րինակ փրկչին
մերոյ ք̃ի։



Որ

Որպիսի ուրախ Դաւիթն էր Թագաւորն և Մարգարէն և Ածահայրն կոչեցեալ. Որ համարձակութեամբ ասէր ցԱծ, յիշեա՛ Տր զԴաւիթ և զամ հեզութի նր. Ո՛չ զմի կամ զերկու կամ զէս աւելի, այլ զամ. Զի ո՛չ ոտէր որ ասէրն կորուսանէ Տր զամենե սեան որ խօսին սուտ. Եւ՛ յայտ յիրացն Սա ւուղէ և Աբիսողոմ մայ և ՚ի Նաթանայ Յոր ժամ յանդիմանէրն. Զի ո՛չ ընդդէմ դառ նայր իբր զթագաւոր և հակառակէր ասելով՝ ո՞վ դու և ուստի՞ յորոց արժանաւորաց. և կամ թէ քեզ զի՞ փոյթ է. Որպ սովորութի է մարդ կան ասել ՚ի ժամու յան դիմանութե որ անմտաբր վարին յայնպիսի իրս. Այլ ի՞նչ. Զանձն օրի նակ բարեաց տայր ամ զղջացելոց. յոգւոց հծե լով և ասելով, մեղայ Տն. Որով Թողութի գտանէր

Զի ասէր մարգարէն, և Տր անցոյց զքե ըզ մեղս քո. Բայց ո՛չ յան հոգս լինէր վյսորիկ, այլ հանապազ տրտում գրնայր և արտասուօք զանկողինսն թանայր. ՚Ի մէջ գիշերի խոստվան լինէր իրաւանցն Այ. Աստակէր ՚ի հեծու թեանն, և ՚ի մահիճս հանգստեանն լայր դառ նապէս. Զի մոխիր փո խանակ հացի ճաշակէր, և զըմպելին արտասուօք խառնէր. և անմխիթար միշտ լինէր, մինչև յի շումն Այ ուրախ զնա առ նէր. Թէ որ ստեղծն, նո՛յն և գթասցի հայրաբար. Որոյ ՚ի դառնագոյն վըշ տամբերութէն նեխէին վէրքն և փտէին յինքեն. և ոգին նորոգէր ՚ի ցա ւոց մարմնոյն և լոյս մի տացն վերստին արծար ծէր. և շնորհք մարգա րէութեն ՚ի նմին մնայր. և օրինակ բարի ամ զղջ ջացելոց լինէր որպէս


ա

ստացաւ ։ զի ած հաշ
տէր. և ընդ աստեացս
և հանդերձելոցն լինէր
ժառանգաւոր ։

Որպիսի ոք և պօղոսն
էր, անօթն ընտրուե̃
տեսօղն դրախտին փափ
կուե̃. փո́ղն տարսոնացի.
քարո́զն հեթանոսաց ։
Որ ընդ ամի ամ լինէր.
որ ասէր յայտնապէս,
Ո՞ հիւանդանայ և ես
ո́չ հիւանդանամ. ո՞
գայթակղի և ես ո́չ տա
պանամ ։ Որոյ զայրա
նայր հոգին յորժամ յան
ամուե̃ զոք տեսանէր.
և 'ի զանազան ճնարս մը
տանէր զփրկուե̃ մարդ
կան շահել ։ Նաե̃ սկսեալ
յեէմէ մինչև 'ի լիւրի
կէ լի՛ առնէր զաւետա
րանն. աշխատասէր ո̆
տիւքն անձանձիր միշտ
ընթանալով. Որ և գորո
վագութ սիրով դողայր
միշտ 'ի վերայ աշակերտե
լոցն, և 'ի ձեռն գրոյ
զյօղդողդեալսն վերըս
տին միշտ հաստատէր և
կազմէր ժողովուրդ սեպ
հական այ, նախանձաւոր
գործոց բարուե̃ ։
Նաե̃ զայլապէս աւետա
րանօղսն արտքոյ իւրոցն
քարոզէց՝ Նզովէց մատ
նէր, թէ և երկնային ոք
լինէր հրեշտակ ։ Որ և
ըղձիւք ես Խնդրէր նը
զով լինել 'ի քէ վս մար
մնաւոր ազգականացն
թէ ճնար լինէր փրկուե̃
հասանել. Նոյն՝ զոր երկ
նի և երկրի և աստեացս
և հանդերձելոցն և թէ
այլ արարածք լինէր՝
անճնա́ր էր մեկնել 'իսի
րոյն քո̃. Յաղագս որոյ
'ի հրէից ճնգիցս քառա
սուն՝ միով պակաս գա
նէր. երիցս ձաղկելով
և մի անգամ քարկոծ լի
նելով. և զտիւ և զգի
շերմի՝ յանդունդս ծո
վու տառապէր. Որ ըզ
քրիստոսին վս քո սի
րէր և վս նոցին չարչա
րիւր. և զպակասութի
չարչարանացն քո 'ի մար
մնի իւրում միշտ լնոյր ։

Որոյ աշխարհ 'ի խաչ
ելեալ էր և ինքն ծի.
և քի՟ միշտ խօսէր և
զհոգին սբ՟ յայտնապէս
յինքեան ասէր. և զա
մենեսեան կամէր զի հան
դոյն ինքեան ժուժկա
լեսցին: Այս՟ կուսանաց
զհաճոյից տն՟ միշտ հո
գալ ասէր. Որ կապիւր
վս՟ քի՟ յեղէմ, և'ի մեծա
գանձս հոգոյ արձակիւր.
Այս՟ հրէից ահագին
տագնապ արկանէր, և
խընդութի՟ մեծ հաւա
տացելոց ընձեռէր:
Նաև զյոլովս ևս անդ
շահէր. և յառագաստն
վերին հրաւիրէր. յառա
գաստ սբ՟ փեսային և 'ի
հարսնարանն անմահ բա
նին: Ընդ որս և զինքն
անդ կապողին ընդ մար
մնոյ ընծայէր. Որ յա
ռաջ քան զլինիլ աշխար
հի ընտրեալ զինքն ասէր.
Այս՟ յաւէտ ևս արձակո
ղին ըստ նախահօրն պար
տեաց. և դարձել բարձ
րադոյն կապողին անա

պականն մարմնով յանե
րեկի աւուրն:

Որպիսի ոքէր և գլուխ
առաքելոցն պետրոս.
փակողն երկնից արքայ
ութե՟ն: Որ ոչ 'ի մարդ
կանէ կամ 'ի հրեշտակաց
առնոյր զտեղեկութիւն
որդւոյ. այլ 'ի հօրէն
լուսոյ: Այս՟ յիրաւի ե
րանութե՟ արժանացաւ
'ի քս՟է: Այն որ կա
րէրն ասել համարձակ,
մեք թողաք զամենայն
և եկաք զկնի քո:
Այս՟ փոխարէն զդատողա
կանն աթոռ ընդունէր.
Որ և զվէմ անուանեցաւ
'ի տն՟է և հիմն եկեղե
ցւոյ եդաւ: Այս՟ ջերմ
եռանդն փափագմամբ
խանդակաթ էր 'ի սէրն
քի՟. և միշտ փափագէր
երևմանն տյ՟. Որ զսի
մոնն սատակէր վս՟ նա
խանձու տն՟ իւրոյ. և
'ի հոգոյ խաչիւր գլուխ
'ի վայր, և զընթացս յեր
կինս ուղղէր ասելով,
մի թէ զոր սիրեցի անձն
իմ

իմ տեսի՛ք ։ Նա՞ ճշմար
տապէս ՚ի սէր դառինն
վառէր․ և փութանակի
առնա՛ հասանէր զանըս
պառ բարիսն ժառանգե
լով և զկեանս անվախ
ճանս ընդ ա՟ն իւրոյ։
Սոցի՛ն նմանեսցուք և
մեք․ սոցին հաղորդես
ցուք վարուց․ զի և պր
սակացն արժանասցուք։
Ո ի թէ ո՛չ աշխատի մր
շակն՝ ո՛չ հնձէ զպտուղն
՚ի դէպ ժամանակի․
Նո՛յս է ժամանակ գոր
ծոց և աշխատութե՟ ։
Նո՛յս է ժամանակ սեր
մանելոյ։ Սերմանեսցո՛ւք
զբարիս մինչ դեռ ժա
մանակս ՚ի ձեռս է․ զի
հնձիցեմք յապագայսն
զկեանսն յաւիտե
նից ։
Պետրոս խաչիւր վասն
ք՟ի․ և դու փոքր ինչ
յանձն առ զնեղութիւն
մարմնոյ և զարհամ՟րհանս
վս՟ սիրոյն ա՟ն։
Պօղոս ճընշէր զմար
մինն և չարչարէր ։

դու գտ՛նեայ չափաւոր
մի՛ աղօթեա՛ ։
Դաւիթ լո՞ւանայր զան
կողինն արտասուօք և
մոխիր ճաշակէր․ դու
սակաւուք բաւականա
ցիր․ և թա՛ց զաչս քո
արտասուօք և հեծե
ծեա՛ ։
Մովսէս իվերայ թշնա
մեացն աղօթէր և թո
ղութի՟ խնդրէր։ դու
գտ՛նեայ մի՛ ունե՛ք չա
րի չար հատուցանէր․
կամ փոխարէն բան
բասէր ։
Յոբ հասարակո՛րդ առ
նէր զաղքատսն ըս
տացուածոցն, և նեղու
թեանցն և վշտացն ու
րախութեամբ տանէր ։
դու գտ՛նեայ սակաւ ինչ
կարկառեա՛ կարօտելոցն,
և ՚ի վիշտս մի՛ տըր
տընջար։
Աբրահամ ընդ հաւա
տոցն և զգործքն ունէր
բարի՝ զօտարասիրութի՟ և
զհիւրընկալութի՟, և հող
և մոխիր զինքն կոչէր ։

Դու և զեկեալ հիւրոն մի՛ դարձուցաներ․ և մեծամտութ̃ մի՛ ամբարտաւ̂աներ․ այլ ընդ խոնարհս զիջանիջիր։

Եթէ զայս առնիցես և զսոցին նմանս, ճշմարտապէս ծառայ ա̃յ գտանիցիս և ՚ի բարւոյ մասին լինիցիս․ և ընդ սրբոցն դասուց զանըսպառ բարիսն և զանվախճան կեանս ժառանգիցես։

Որոց լիցի ամենեցուն մեզ հասանել, Շնորհօք և մարդասիրութ̃ տ̃ն մերոյ և փրկչին յի քի․ Ընդ Որում Հօր միանգամայն և Հոգւոյն ս̃բյ վայելէ փառք իշխանութի և պատիւ̂․ Այժմ և․․

Կարգաւորուն̃ Հասարակաց Աղօթից Խաղաղական ժամուն, Որ կատարի ՚ի դէմս Հ̃ցյն ա̃յ․ Նաև ասի, Օրհնեցից զտ̃ր յա̃մ ժամ․ Նաև այլն որ ՚ի կարգին․

### Յաղագս Խաղաղականին Աղօթիցն․

Իսկ հանգստենն ժամու աղօթքն վասն զի կարգեալ է առ ՚ի զմեզ զգաստացուցանել, և պատրաստիմք ուշիմ մտօք առ ՚ի խորս նայիլ․ զի կարօղ լինիցիմք օգտել առ ՚ի գրելոցն յիշատակէ։

Նաև արդ՝ հանգստեան կոչի աղօթք, և խաղաղական ասի, վ̃ն զի օրինակ է իջանելոյն ՚ի գուբ գերեզմանին։ Նաև ոպ̃ ՚ի մահիճ իջանելով հանգ



չիմք

չիմք յաշխատութեեց և
խաղաղանամք ՚ի խորհրդ
դոց • զնմանութի բերեմք
զմահուն հանգստեան
և զխաղաղանալն ՚ի բղղ
բաղմանց կենցաղոյս ։
Վն որոյ և յորժամ ՚ի
մահիճս ննջիցեմք, պար
տիմք զմտաւ ածել ասե
լով, ո՞ գիտէ թէ օրի
նակս ՚ի ճշմարտութի փո
խեսցի • և այլ ո՛չ յառ
նեմ յանկողնոյս, այլ
փոխիցիմ ՚ի ննջմանէս ՚ի
ննջումն մահու ։
Նոյնպէս և ՚ի յառնելն
յիշել զմահն ասելով՝ ո՞
գիտէ թէ յերեկոյն հա
սանիցեմք թէ ոչ ։
Բայց և զայսմանէ ո՛չ է
պարտ զանց առնել •
զի յեկեղեցիս մեր այսօր
զարևագալին աղօթսն ՚ի
յառաւօտին յարեն և
միայն տողեն միջոց ո՛չ
առնելով • Եւ շատք և ս
ա՛յն են՝ որ ՚ի գիշերոյն
սաղմոսն յարեն ։
Յառաջ քան զօրհնութին
և զթագաւորքն՝ ասեն՝
Եղիցի անուն տն օրհ
նեալ • և յարևելից • և
զառաւօտու աղօթս ։
Եւ ապա՛ սկսանին զօրհ
նութին և զթագաւորքն
և զհարցն ։ և յո՛յժ անմը
տաբա՛ր է այս և անկարգ ։
Իսկ զխաղաղականին ա
ղօթքն՝ յերեկոյին ժամն
յարեն, կամ յառա՛ջ ա
սեն քն զերեկոյին ժամն
զկնի սաղմոսին ասելով՝
՚Ի տէ կարդացի և
գիշերի առաջի քո ։
Եւ թէ՝ շնորհեա՛ ան
խռով զգիշերս ։
Եւ թէ՝ խաղաղացո՛ ըզ
միտս ՚ի գիշերիս ։
Եւ թէ՝ պահեա՛ յեր
կիւղական գիշերիս ։
Եւ թէ՝ փարատեա՛ զխա
ւարային խորհուրդս ։
Եւ ապա՛ ասեն, ես առ
ած կարդացի և լուաւ
ինձ յերեկոյս ։ որ յո՛յժ
ծաղո՛ւ է արժանի •
Նա և այս ամ ՚ի տարտա
մութե լինի և յանփոյթ
առնելոյ ։ ՚Ի հոգոց և ՚ի
զբաղմանց կենցաղոյս •

և 'ի միշտ զերկրաւորս
խորհելոյ քահանայից,
և աշխարհական վարուք
վարելոյ։ Զի շատք են
այն են, որք ոչ գիտեն
թէ յետ խաղաղականին
աղօթից՝ այլ չէ արժան
ընդ ումեք խօսիլ։
Նոյնպէս ահիւ և դողութեամբ
պարտ է ննջել, և յան
կողնին հանդէս առնել
մտացն թէ 'ի մանկութենէ
մինչև 'ի նոյն ժամն ինչ
մեղքէ գործեալ. կամ
յանցեալ աւուրն ինչ է
սխալեալ բանիւ կամ
գործով և կամ խորհրդ
դով, և զղջալ յանկող
նին։ Նոյնպէս մեք յառա
ջիկայս դարձուցուք բան
զոր հանդերձեալ եմք
տեսանել եթէ որ ուղ
ղեսցէ 'ի շահ և յօգուտ
լսողաց. և ոչ թէ 'ի պար
ծանս անձին, կամ յար
ժանաւորութիւն ինչ ապա
տան լինելով։
Եւ արդ՝ կարգեալ է 'ի
սկիզբն խաղաղականիս
աղօթից բան ըստ պատ
շաճի որ ասէ ։

Տէր Աստուած փրկութեան իմոյ 'ի
տուէ կարդացի և
գիշերի առաջի քոյ։
'Ի սկիզբն բանիս խոս
տովանի զիշխանական
տէրութիւն Աստուծոյ. զի տէր է
փրկութեան և Աստուած ողորմու
թեան. որ միշտ խնամէ՛ զա
րարածս իւր, և ունկըն
դիր լինի պաղատանաց
որք կարդան առ նա 'ի
տուէ և 'ի գիշերի։
Ապա ասէ, 'ի տուէ կար
դացի և գիշերի առաջի
քո։ 'Ի տունջեան ասէ
կարդացի վասն քաւութեան
մեղաց իմոց, և այժմ 'ի
մուտ գիշերոյս զնոյն պա
ղատիմ։ Եւ թէ ոք տիւ
զբարեգործութեան ժամա
նակն ասէ՝ և գիշեր յոր
ժամ 'ի մեղս ինչ շաղա
խիցի՝ ոչ մեղանչէ։
Զի թէ ոք յօրժամ ա
ւուրց իցէ հոգւով՝ վըս
տահութեամբ կարդայ. ապա
և 'ի մեղանչելն չէ պարտ
յուսահատիլ և կասիլ
յաղօթից. այլ միշտ պա
ղատիլ առ տէր զի թողութեան



հաս

հասցէ։ Թէպէտ և մե
ղաւորին տաց ած, ըն
դէր ընաւ պատմես զար
դարութի իմ․ այլ այս վն
զարհուրեցուցանելոյ է
և յապաշխարութի կոչե
լոյ։ Եւ զի բերանն է քա
հանայն ժողովրդեանն՝
ընդ ամենեցուն աղօթէ
և վն ամենեցուն պա
ղատի․ և ասէ։

Մատչեն աղօթք իմ առա
ջի քո տր․ խոնարհես
ցի ունկն քո ՚ի խնդրո
ւածս իմ։

Որպէս տու կոռնելիոս
ասացաւ թէ Աղօթք քո
և ողորմութիք ելին յի
շատակաւ առաջի այ։
Եւ մրգրէն ասէ, զհե
ծութի կոպելոց լուաւ տր
Եւ թէ՝ ՚ի նեղութե կար
դացի առ տր և լուաւ ինձ
և եհան զիս յանդորր։
Զայս հայցէ բան աղօ
թիցս․ և ընդ փառաբա
նութեն և զօրհնութի մա
տուցանէ մբ Երրոր
դութեն։

Եւ ապա սկսանին սաղ
մոս չորք ըստ քառանիւ
թեայ բնութեն։ Իսկ
ոմանք հինգ սաղմոս ա
սեն ըստ հինգ զգայու
թեցս մաքրութե․ և ըստ
նախադրութե գիշերային
սաղմոսացն։ Եւ է առա
ջին որ ասի այս, Ի կար
դալ իմում լուաւ ինձ
ած՝ յայսմ կենցաղոյս։
ըստ արդարութե, զի սա
տանայի չեմ ինչ մեղու
ցեալ։ Եւ թէ՝ մատու
ցէ՛ք պատարագ արդա
րութե զքանականն պաշ
տօն։ Տր մի՛ սրտմտութե
քով յանդիմաներ զիս
վասն մեղաց իմոց։ և
Մինչև յերբ տր մոռա
նաս ՚ի կենցաղս յայս
որ է ժամանակ ապաշխա
րութեան։ Եւ այ մոռա
ցօնք ո՛չ է․ այլ վասն ան
տես առնելոյն ասէ։
Մինչև ցերբ բարձրա
նայ թշնամին ՚ի վր իմ։
զի յորժամ դու վրէժ
խնդիր ո՛չ լինիս չարին,
նա մեծաբանէ ՚ի վր իմ։
Ա այ Դատ արա ինձ ած

 փրբ

փրկելով յաղգէ որ ո՛չ է
սուրբ 'ի բանս իւր ։
Եւ զմեզ աստ՝ իրաւ
պարտ է իմանալ։
Նուաքեա՛ տէր զլոյս քո
որով զերծայց 'ի յորդո
մութեանց և խոստովանե
ցայց զքեզ փրկիչ ։
Մի՛ յօգնել ինձ նայեաց,
զի առանց քո չեմ բա
ւական յաղթել չարին։
իսկ թէ դու օգնեսցես՝
թշնամին ամաչէ. և որք
զքեզ խնդրեն՝ ցնծաս
ցեն՝ զանուն քո մեծա
ցուցանելով 'ի փրկեն
քո ։ Իսկ են ոմանք որ
աստ՝ և տա՛ւր զօրութի
ասեն, և պտղաձաւո՛ր է։
զի խաչին մշտատակ յա
ձախ աստ լինի ։
Եւ պա՛րտ է ասել զի
երախտիք նշանին յայտ
նին և տէր փառա
ւորի փառաւո
րեալն յաւի
տեան ։



Յաղագս Նշգոյն. Զ որ ըղ
ջնի Աստուածոյ Նշանա
ջնն ։

Շնորհեա՛ մեզ տէր
'ի գիշերի զերկ
նային զխաղաղութի քո.
և պահեա՛ զմեզ 'ի պատ
րանաց թշնամւոյն ամե
նայաղթ զօրութբ տէ
խաչի քոյ ։
Զ որ խոստացաւ առա
քելոցն ‖ զխաղաղութի
զիմ տամ ձեզ ։ Եւ խա
ղաղութիւն այ 'ի վեր է
քան զամ զմիտս և զիմա
ցումն . զոր խնդրէ բան
աղօթիցս տալ մեզ ո՛չ
իբր զփոխարէն կամ ըղ
վարձ, այլ իբր զձրի պար
գևք շնորհել ։ Եւ 'ի
գիշերի ասէ . Զ ի'իգի
շերի առաւե՛լ վնասէ՝
զմեզ չարն ըստ հոգւոյ
և ըստ մարմնոյ քան 'ի տը
ւընջեան ։ Ըստ որում
և տէրն յայտ առնէր ասե
լով առ հրէայսն . ‖ ա՛յս է
ձեր ժամ և իշխանութի
խաւարի ։ Նայլ և գիշեր՝
զկենցաղս կոչէ . յորում



առա

առաւել զօրանայ չարն
առ 'ի մարտնչել. օժան
դակ ունելով զմարմնոյս
մերոյ տկարութի և ըզ
վայրաքարշ բնութի.
Վասն որոյ բազում արթ
նութե պէտք են մեզ.
բազում տքնութե և աղօ
թից. զի խաղաղութբն
այ պահպանեալ լիցուք
'ի պատրանաց թշնամոյն.
զզօրութի սրբոյ խաչին
ունելով զօրավիգն և
ամրութի.

Տր ած փրկութե իմոյ 'ի
տուէ կարդացի և
գիշերի առաջի քոյ.
Մտցեն աղօթք իմ առա
ջի քո տր. խոնարհեցի
ունկն քո 'ի խնդրը
ւածս իմ.

Օ որ վերադոյնսկիզբն
եդ բանիս, զնոյն և ասա
երկրորդէ. զառաջինն
իբրև զնախադրութի և
զհիմն շինուածոյս. իսկ
զերկրորդս իբրև զհաս
տատութի և զենթակայ
գործոյս.

Լկեսցէ առ մեզ տր



պահապան 'ի քէն և պա
հեսցէ զմեզ յամ ժամ.
Առաքեա առ մեզ տր ըզ
զօրութի այդ խաչին որ
պահեսցէ զմեզ յամ
ժամ.

Օ որ օրինակ կնիք թա
գաւորական' զգուշութի
և ամրութի է ընչից և
երկիւղ գողոց և աւա
զակաց, պահելով յամ
դաւողաց. Այսպէս և
նշան երկնաւոր թագա
ւորին' դողումն և եր
կիւղ է սանդարամետա
կանաց. և զէն անբթելի
միշտ ընդ դէմ դիւաց
գնդին. աներկիւղ պա
հելով զհաւատացեալս
յամ վտանգից հոգւոյ
և մարմնոյ. Որպէս և կայ 'ի
վարս սբց հարցն եթէ'
հրեայ ոմն' միայն ադա
նէր ըստ դիպուածոյ ճա
նապարհի յանմարդաբը
նակ տեղիս. և զարհու
րեալ երկնչէր 'ի խաւա
րաշրջօղ դիւացն.
Ապա զմտաւ ածեալ եթէ
քրիստոնեայքն կնքեն

զինքեանս խաչին և
պահպանեալ լինին․ և
տնագրեալ զինքն խա-
չին՝ ննջէր։ Այն ահա
զարհուրեցուցիչ դևքն
ամնդր հասեալ լինէին
արհաւիրս առնելով․
Այն հուպ եկեալ ընշան
խաչին տեսանէին և ձիչ
բարձեալ ասէին, եկայք
'ի զարմացումն․ անօթ-
ունայն՝ կնքեալ մատա-
նեաւն։ զի հրեայն ոչ ու-
նէր զմկրտութի սբ աւա-
զանին։ և անդէն չէք լի-
նէին դևքն։ Իսկ հրեայն
տեսեալ զզօրութի սրբոյ
խաչին սխրանայր։
Այն յարուցեալ յառա-
ւօտուն ընթացեալ պատ-
մէր եպիսկոպոսի քաղա-
քին և մկրտիւր։
Իսկ 'ի մարմնական Թըշ-
նամեաց զի փրկէ նշանն
տէրունական՝ յայտ 'ի մե-
ծէն կոստանդիանոսէ է
և յալոց բազմաց․ որք զօ-
րացան նովաւ և յաղթե-
ցին․ և Երևելի և հզօր
եղեն խչւ Թշնամեաց։

Սորոյ զայս գիտելով՝
յամ ժամու և յամ իրս
խաչին ամրացուսցուք
զանձինս․ 'ի նստիլ 'ի
տան և 'ի գնալ 'ի ճանա-
պարհի․ 'ի ննջել և'ի յառ-
նել․ 'ի բանս և'ի գործս․
'ի կերակուրս և յըմպե-
լիս․ և յամ շարժմունս։
զի միշտ պահպանեալ լի-
ցուք փրկական սբ
խաչին։
Արժանաւորեա տր զե-
րեկս զայս խաղաղութ
և առանց փորձութե ան-
ցո զմեզ․ արժանի արա
տր զգիշերս զայս խաղա-
ղութ և առանց մեղաց
պահելով։
Օ ի հոսանուտ ունիմք
բնութի և փորձիչն միշտ
դարանամուտ լինի առ
'ի գայթակղեցուցանել
զմեզ 'ի զանազան փոր-
ձութիւնս և 'ի մեղս։
Ըստ այնմ, ‖ ոսոխն ձեր
սատանայ իբրև զառիւծ
գոչէ․ և խնդրէ թէ զո՛
կլանիցէ։ Այն մեք թէ
միշտ պաղատիմք առ տր
խնդ-

խնդրելով զօգնականու-
թիւն, փրկիմք 'ի մեքե-
նայից ն՟ր և 'ի խաղաղու-
թե՟ն վայելեմք։

Ընդ մեզ տ՟ր ա՟ծ, գիտա-
ցէ՛ք հեթանոսք և պար-
տեցարուք. զի ա՟ծ ընդ
մե՛զ է։ և լուարո՛ւք զայս
'ի ծագաց մինչև 'ի
ծագս երկրի. զի ա՟ծ
ընդ մե՛զ է։

Հեթանոսն ազգ կոչի
եթէ դիւաց և եթէ
մարդկան։ Եւ յորժամ
զա՟ծ ընդ մե՛զ ունիցիմք
հաւատովք և բարեգոր-
ծութե՟ք, ա՟մ հակառա-
կորդ թշնամիքն 'ի պար-
տութի՟ մատնին։ և 'ի ծա-
գաց մինչ 'ի ծագս երկ-
րի լսելի լինին սքանչե-
լիք բարերարին ա՟յ։

Եւ ծանիցեն ճշմարտա-
պէս թէ մերձ է տ՟ր առ
այնոսիկ որ մաշեալ են
սրտիւք. և զխոնարհս
հոգւով կեցուցանէ՛։
Եւ թէ՝ զկամս երկիւ-
ղածաց իւրոց առնէ տ՟ր.
աղօթից ն՟ց լսէ և կեցու-
ցանէ զն՟ս։

Եւ հզօրացեալքդ պար-
տեցարո՛ւք զի ա՟ծ ը՟ն
մեզ է. Եւ զի թէպէտ
և դարձեալ զօրանայք,
դարձեալ 'ի պարտութե՟
մատնեսջիք. զի ա՟ծ ընդ
մե՛զ է. Եւ զխորհուրդն
զոր խորհիք՝ խափանե՛
տ՟ր, զի ա՟ծ ընդ մեզ է.
Եւ զբանն զոր խօսիք,
մի՛ մնասցէ առ ձեզ, զի
ա՟ծ ընդ մե՛զ է։

Բազմադիմի՛ և զանա-
զա՛նք են խորհուրդք
մարդկան առ 'ի նենգել.
և ևս առաւե՛լ դիւաց.
Ո՟պ ասէ մեծն Եւագրիոս
եթէ՝ դեւք միմեանց հա-
կառա՛կ են, և 'ի մարդկան
կորուստ միաբանին։
Եւ թէ՝ դեւն պոռնկու-
թե՟ հակառա՛կ է դիւ՟ին
հպարտութե՟. զի զոր սա
շինէ, նա՛ քակէ՛ զհպար-
տութի՟ն յընկենու՟ն 'ի
պոռնկութիւն։
Եւ արդ՝ եթէ դեւք և
եթէ մարդիկ անյա-
գաբար միշտ խոկան 'ի
նենգել որք յայնոսիկ
են

են պարապեալ։ Նա՛ թէ
պէտ բազո՛ւմ անգամ
յաղթահարին, ո՛չ եր
բէք դադարին 'ի խոր
հելոյ զչար։ այլ դարձ
ճնարս իմանան թերևս
կարասցեն զամադիւտ
լինիլ։ Որպէս և 'ի սևանայ
կղզւո՛յն է յայտ։ վասն որոյ
և զերդս ասի երգել 'ի
յայտնիլ դաւաճանօղ
թշնամեացն։ Նա՛ զոր
օրինակ մեծ և կարծրա
գոյն վէմ յեզր ծովու
հաստատո՛ւն իցէ, և բազ
մադիմի ալեաց յարուց
մունք ո՛չ կարիցեն սասա
նել զնա։ այլ՛ հաստա
տուն կայ և մնայ յանշար
ժութե։ Նոյնպէս որք
հաւատով յԱստուած իցեն խա
րսխեալք և զշինուած
առաքինութեն 'ի վերայ հաս
տատուն վիմին հաւատոյ
իցէ արկեալ, թէ և ամենայն
յողդողդմունք չարաց 'ի
մարդկանէ և 'ի դիւաց
մաքառիցեն, պարտաւո
րեալ գտցին։ Մինչ
զգուշանալ պարտ է 'ի

հաճոյսն այ որով փրկ
կութի գտանի։ Իսկ եթէ
և երբեմն արդարք մատ
նին 'ի վիշտս և 'ի նեղու
թիս, և այն ևս 'ի թոյլ
տալոյ և 'ի խնամոցն այէ
վասն բազո՛ւմ իրաց։
Նա՛ զի թէ փո՛քր ինչ կա
սեալ լինին արդարք յա
ռաքինութէ և կամ մե
ծամտեալ 'ի գործս բա
րիս, և թոյլ տայ ած գալ
փորձութեց 'ի վր այնպի
սեացն զի զգաստասցին։
Նա՛ է՝ զի մատնէ ած եր
բեմն զարս արդարս 'ի
փորձութի վս առաւել
սիրոյ և մտերմութե։ զի
երևելի լիցին յերկիր՝ և
յերկինս պայծառասցին։
Որպէս աբրահամ։ յոբ։ և
դաւիթ։ և այլք բա
զումք 'ի սբցն։
Վասնզի յերկիւղէ ձեր
մէ մեք ո՛չ երկիցուք և
ո՛չ խռովիցուք զի ած ը
մեզ է։ Նա՛ զոր ած մեր
փառաւոր արասցուք և
նա՛ եղիցի մեզ յերկիւղ
զի ած"։ Նա՛ յուսաչել


եղի

եղիցուք մեք ’ի նա՝ և
նա՛ եղիցի մեզ ’ի սրբու-
թի՟ն, զի ա՟ծ". Զի՛ յու-
սացեալ եղիցուք մեք ’ի
նա՝ և նա՛ եղիցի մեզ ’ի
փրկուի՟ն, զի ա՟ծ":

Որ յուսայ ’ի տ՟ր ասէ
մարգարէն՝ իբրև ըզ
լեառն սիօն ոչ սասանես
ցի. զի լերինք շուրջ են
զնովա՛ւ հրշտ՟կաց բազ
մութի՟ք և տ՟րն հրեշտա
կաց. Զի՛ ոչ թողու ըզ
գա՛ւազան մեղա՛ւորաց ’ի
վիճակս արդարոց. վ՟յ
աներկիւղ միշտ լինին ’ի
յարկածից թշնամեաց.
և անխռով խաղաղութե՟
վայելեն ’ի սէրն ա՟յ.
Զի՛ առաքեալն ասէ,
Յոյս որ տեսանի՝ չէ՛ յոյս.
այլ որ առ յապայ ակնու-
նելին է, և ’ի դէպ ժամա
նակի հանդերձեալ է կա
տարումն առնուլ:

Զի թէ ոչ յուսայ ոք
վարձուց հատուցումն
ընդունել ’ի կատարածի.
առաջարկութե՟ բարեաց
փոյթ ոչ կարէ առնել:

Զի թէ ոչ յուսայր
աբէլ, հաճոյական պա
տարագ զիա՛րդ մատու
ցանէր ա՟յ. Զի՛ ենովս
յուսով կոչէր զանունն
ա՟յ յօգնականութի՟ն.
Այսպէս և նոյ զամս
հինգ հարիւր կուսութե՟
այսու յուսով անցուցա
նէր. Ս՟րոյ հաճոյ գը
տա՛ւ ա՟յ և երկրորդ աշ
խարհի սկիզբն եղև.
Նոյնպէս և աբրահամ ’ի
յոյսս յայս զորդին իւր
պատարագէ՛ր ա՟յ. և հայր
ազգաց բազմաց կոչիւր,
և երդմամբ ա՟յ զօրհնու-
թիւնն ժառանգէր.
Սովիմբ և յոբ հայր համ
բերութե՟ գտանէր. որի
նակ բազմաց լինելով.
և յա՟յ վկայէ՛ր յայտնի լի
նիլ ամենեցուն:
Այսու յուսով և մով
սէս զտ՟ր ապաւէնն կար
դայր. և սովիմբ օրինա
դրէր ժողովրդեննն իւրե՟լ:
Նաև դա՛ւիթ հալածա
կան լինէր ’ի յոյսս յայս:
Զի՛ մարգարէքն ա՟մ յազ

գատողհմբ խուրեանց նեն
դեալք լինէին։
Այո՛ զի՛նչէ ինձ երկայնել
զբանս․ առաքեալքն սո
վիմք քարոզէին ընդ տի
եզերս ա՟մ։ Ստեփաննոս
քարկոծիւր․ և վկայքն
ա՟մ նահատակեին՚ի յոյսս
յայս։ Այո՛ զոր օրինակ
հուր զա՛ղտ՚ի բա՛ց մաք
րէ յոսկւոյ և սրբէ զնա,
այսպէս և յոյսն որ առ
ա՟ծ և համբերութի՟ն՚ի
վիշտս՝ զոգիս մարդկան
մաքրէ՛ և սրբէ և փըր
կութե արժանացուցանէ․
սիրելի և մտերիմ ծա
ռայ ա՟յ գործելով։
Նաև յոյսն անսահման
և բացարձա՛կ իմն է և ը՟ն
ա՟յ երկարաձգի․ զի որ՟չ է
ա՟ծ, է՛ և յուսալ ՚ի նա։
Այո՛ ո՟չ զա՟մ ինչ զոր տե
սանէ ոք զչափ և զձև
առնու և ՚ի միտս իւր
կշռէ՛ զորքանութիւնն․
իսկ զորս ո՛չ տեսանէ՝ ան
պարունակելի միայ և
յանբաւ՟ս աճէ։ Նյսպի
սի իմն և զյոյսն է տեսա

նել․ զի որքան մտօք ո՛չ
պարունակի, յև՟ս բարձ
րագոյն աճէ և օր ը՟ն օրէ
պայծառանայ։ Այո՛ յոյս
երբէք զկայ ո՛չ առնու
կամ ընդ մտօք փակի․
ո՛չ աստ և ո՛չ ՚ի հանդեր
ձեալ աշխարհին։ Նյլ
որ քան է՛ ա՟ծ ո՟չ աս՟ց՛,
է՛ և յուսով՝ բարեաց ակն
ունել ընդունել յա՟յ
և աստ և յանվախճան
կեանսն․ հրեշտակաց և
մարդկան և ա՟մ բանա
կան բնութեան։ Զի միշտ
սրբէ և պայծառացուցա
նէ և ա՟ծ արժանի գործէ
յառաջադէմս առնելով
միշտ ՚ի տալն։
Այո՛ ահաւասիկ ես և
մանկունք իմ զոր ետ
ինձ ա՟ծ, զի ա՟ծ"։
Զոր օրինակ մ՟րմնաւոր
ծնունդքն մանկունք կո
չին ծնողացն, և պարծին
նոքօք ՚ի մէջ մարդկան․
և ա՟մ ուրէք յիշեն և
խրախանան և ՚ի բազմաց
երանին․ Զի ՚ի հինն
յօրինուածն մասին եղ ա՟ծ


զոր

զորդէծնութիւն. և բար
գաւաձևալս կոչեց պատ
ճաւորս երևեցուցանե
լով. Նոյնպէս և որք հո
գևոր ծննդեամբն են
սքանչացեալ, հրաշալի՛
երևին ՚ի մէջ մարդկան
և գովելի առաջի այ. և
համարձակութ ասեն ահա
հասիկ ես և մանկունք
իմ զոր ետ ինձ ած։
Ոպ առաքել Պարծանս
կոչէր իւր զծղ վորդսն։
Զի ամ տուրք բարիք
և պարգևք կատարեալք
յայ շնորհին մարդկան
ըստ առաքելոյ։ Եթէ
չարչարիցի ոք ՚ի ձէնջ ա
սէ վս քի՝ այն շնորհք
յայ է։ Նաև որք բանիւ
վարդապետութե աշխա
տին՝ ծնօղք կոչին ըստ
պօղոսի. Ի քս յս աւե
տարանաւն ես ծնայ
զձեզ. Նայլ և ծնօղ ևս
ունիմք ՚ի մեզ ինքեանս
զմիտս մեր. և մանկունս
զոր ՚ի ձեռն զգայութեցս
յղացեալ ծնանիմք ծը
նունդ. եթէ բարի և

եթէ չար։ Նաև ոպ չար
ծնունդքն նախատինքեն
մարդկան և ամօթ, այսպ
և բարի ծնունդքն պար
ծա՛նք են առ ած և առ
մարդիկ։ Նաև այս շնորհ
միայն մարդկան տուաւ
յայ. աճեցուցանել ըզ
քանքար պատուիրանին
և զպարգևս շնորհին.
զի հրեշտակք զայս ոչ
ունին։ Որդարև ոչ
այսպս արար ամ ազգաց
մր. և զգործս զայս ոչ
շնորհեաց նց։ Սորոյ
զինչ տացուք տրիտուր
ան. այլ գոհութբ զա
նուն նորին օրհնեսցուք
հանապազ։ Զի ոչ ըստ
մեղաց մերոց արար մեզ.
և ոչ ըստ անօրէնութե
մերում հատոյց։ այլ ըս
բարձրութե երկնից զօրա
ցոյց զողորմութի իւր յեր
կիւղածս իւր։

Նաև ժողովուրդ որ նս
տէր ՚ի խաւարի ետես
զլոյս մեծ, զի ած ընդ՚՚։
Նաև որ բնակեա՛լդ էք ՚ի
խաւարի և ՚ի ստուերս
մա

մահու՝ լոյս ծագեսցէ
առ ձեզ, զի ած՛՛։
Մեծ լոյսն քո՛ որ ասաց
‖ես եմ լոյս աշխարհի,
ճշմարտապէս ծագեցաւ
հեթանոսաց ժողովրդ-
եանն որ նստէին 'ի խա-
ւարի կռապաշտութե և
'ի ստուերս անհաւատու-
թե. միշտ դեգերեալ
և տատանեալ յանձինս.
ոչ ակն ունելով երբէք
ծագման լուսոյն։
Եւ զոր օրինակ՝ որ ընդ
ծառով կամ ընդ քարի՛
նըստիցի՝ 'ի ստուերի՛ է
միշտ և ո՛չ ծագէ 'ի նա
լոյս արեգականն որ քան
'ի ստուերն իցէ. իսկ յոր
ժամ ի բաց յառնէ և ար
տաքս դիմէ առ լոյսն,
տեսանէ ճշմարտապ ըզ
պայծառութի լուսոյն։
Այնպէս որ քան ընդ մա
հո՛ւ ստուերաւ նստեմա
ցեալ նստէին մարդիկ՝
'ի խաւարի անածութե
էին. և ընդ մահու գրա
ւեալ իշխանութեամբ
և չարին վիճակեալ։

Ըստ այնմ, մահ հովուես
ցէ զնոս։ այսինքն 'ի չա
րաչար ծառայութիս և
'ի վիշտս։ Իսկ յորժամ
ա՛յց արար մեզ արեգակն
արդարութե 'ի բարձանց
և լուսաւորեաց զխաւար
ոգւոց մերոց. և հրա
մայեաց դիմել յօժար
կամօք 'ի լոյսն ածային։
Ըստ խրատուն տն բանի՝
‖գնացէք ընդ լոյս՝ մինչ
դեռ զլոյսդ ընդ ձեզ
ունիք. զի մի՛ խաւար
ձեզ հասցէ։ Յայնժամ
կատարեցաւ բան հոգ
երգողին, տր հովուես
ցէ զիս և ինձ ինչ ո՛չ պա
կասեսցէ։ 'Ի վայրի դա
լարոջ անդ բնակեցոյց
և առ ջուրս հանգստեն
սնոյց զիս։ Ած զի ճըշ
մարտապէս բնակիչք՝ 'ի
խաւարի և ստուերին մա
հու՝ տեսաք զլոյսն մեծ
գիտութեան եկեալ
հասեալ։
Եւ քանզի մանուկ ծը
նաւ և որդի տուաւ
մեզ, զի ած ընդ՛՛։

Այն որոյ իշխանութիւն
իւր իվր̄ ուսոյ իւրոյ,
զի ած՟։ Այն որ կոչի
անուն նր̄ մեծի խորհր
դոյ հրեշտակ, զի ած՟։
Այն սքանչելի խորհրդա
կան, զի ած՟։ Այն ած
հզօր իշխան, զի ած՟։
Այն իշխան խաղաղութե
հայր հանդերձելոյ յաւի
տենին, զի ած՟։

Այն ք̄ զի մանուկ ծնաւ
ասէ և որդի տուաւ։
Անուանս վտանգելոյ ՚ի
նախահօրն յանցանաց՝ մա
նուկ ծնաւ մեզ մարմնա
ցեալ բանն ած և որդի
տուաւ ‖ խոստանացելոցս
՚ի բարեծնութե։ Այն զոր
օրինակ՝ ծերացելոյ հօր՝
մանուկն ցուպ է և հաս
տատութիւն։ Այնպէս
և հնացելոյ բնութեա ՚ի
մեղս՝ նորոգումն և հաս
տատութ̄ի և մխիթարութ̄ի
տուաւ բնութենակից և
աթոռակից հօր որդին.
յոր օրհնեցան ամ̄ ազգ
երկրի. և եկեղեցի ՚ի
բազմորդութ̄ի աճեաց։

Ըստ այնմ, ‖ Բազո՛ւմ եղեն
որդիք սկնդկիդ առա
ւել քան զարամբւոյն։
Զոր և մարգարէն հիաց
մամբ ասէ, ‖ ո՞ լուաւ,
ո՞ ետես, եթէ երկնեաց
երկիր և ծնաւ ազգ մի
ողջոյն միանգամայն։
Աս̄ զի երկնեա՛ց սիօն
և ծնաւ զմանկունս
իւր։

Այն որոյ իշխանութիւն
իւր ասէ իվր̄ ուսոյ
իւրոյ։

Իշխանութ̄ի զխա՛չն է
իմանալ։ Ըստ այնմ,
‖ չև էր հոգի. քանզի յս̄
չև էր փառաւորեալ։
Այն զի փառք և իշխա
նութ̄ի զխաչն կոչէ ոպ̄
անցաւ. զի փառք այն է
որով թշնամին պարտի՛։
Այն տրն̄ ՚ի խաչին պար
տեաց զսատանայ։
Այն յաղօթելն յորժամ
ասէր տրն̄, ‖ հա՛յր փառա
ւորեա՛ զորդի քո։
Այն հայրական բարբառն
վկայէր, և փառաւոր
արարի և դարձեալ փա

ռաւոր արարից ։ Զի
զօրօրինակ իշխանութ՟ի
իշխանին փառք կոչի իւր
և պատիւ ։ Նոյնպէս և
տ՟րն խաչին էառ զիշ
խանութ՟ի ի վ՟ր երկրի ըստ
մարմնոյ ․ ըստ մրգ՟րէին,
Տ՟ր Թագաւորեց վայել
չութիւն զգեցաւ ։
Եւ ըստ իւրում տ՟ն բա
նին, ‖ տուաւ ինձ ա՟մ իշ
խանութ՟ի յերկինս և
յերկրի ։ Զի ա՟ծութ՟ն
յառաջ քան զյաւիտ՟ն
էր իշխան ի վ՟ր ա՟մի ։
Իսկ մարմնով յետ խա
չին 'ի վ՟ր հաւատացելոց
էառ զիշխանութ՟ի ։
Եւ որ կոչի անուն ն՟ր
մեծի խորհրդոյ հրեշ
տակ և սքանչելի խորհր
դակից ։
Հրեշտ՟կն սպասաւորի՛
անուն է ․ և զի սպասաւոր
եղև տ՟րն մեծի խորհր
դոյ տնօրէնութեանն ․
վ՟յ հրեշտակ կոչեցաւ
մեծի խորհրդոյ ․ ըստ ա
ռաքելոյ, ‖ որ մտադիւրն
ծառայեաց բազմաց ։

Եւ թէ՝ ‖ խորհուրդս
այս մեծ է, բայց ես ա
սեմ 'ի ք՟ս և յեկեղեցի ։
Իսկ զի ասէ, սքանչելի՛
խորհրդակից ․ զի կամաւ
հօր և հաճութ՟բ հոգւոյն
ս՟բյ եղև մարմնաւորութ՟ի
որդւոյն ։ Եւ խորհրդ
գալստեան բանին ա՟յ ըս
քանչելեօք ծանուցաւ
սրբոց մարգարէիցն ։
Որպէս ասէր մովսէս,
‖ Մարգարէ յարուսցէ
ձեզ տ՟ր ա՟ծ ձեր յեղբարց
ձերոց ․ Եւ դաւիթ,
սքանչացաւ գիտութ՟ի քո
յիս ։ Եւ ամբակում,
‖ տ՟ր լուր քո լուայ և
երկեայ ․ տ՟ր նայեցայ 'ի
գործս քո և զարմացայ ։
Եւ ինքն տ՟րն առ հայր
խորհրդաբար ասէր,
‖ Հա՛յր՝ կամիմ զի ո՟պ դու
յիս և ես 'ի քեզ, զի և
սոքա 'ի մե՛զ իցեն ․ զի
եղիցուք կատար՟լք 'ի մի ․
որ է արդարև սքանչելի
խորհրդակցութ՟ի ։
Եւ ա՟ծ հզօր իշխան ․
և իշխան խաղաղութ՟ե


Հայր

Հայր հանդերձելոյ յա
ւիտենին ։
Զի իշխանութին այ ոչէ
իբր զմարմնաւոր թագա
ւորաց որ երբեմն զօրա
նան և այլ երբեմն տկա
րանան ։ այլ՝ իշխանութի
նր իշխանութի յաւիտե
նից, և տրութի նր յազգէ
յազգ ․ զի տր հզօր է զօ
րութբ ․ և տր կարօղ ՚ի
պատերազմի ։ Այլ այն
զի ասէ,

Իշխան խաղաղութեան
և հայր հանդերձելոյ
յաւիտենին ։

‖ Զի արար խաղաղութի
ասէ առաքեալն արեամբ
խաչին իւրոյ որ ինչ յեր
կինս և որ ինչ յերկրի ։
Այլ թէ՝‖ մինչ թշնամիքն
էաք՝ հաշտեցաք ընդ այ
մահուամբ որդւոյ նր ։
Այլ ինքն տրն,‖ զխաղա
ղութի զիմ թողում ձեզ։
Զի քաղցր է խաղա
ղութին իրք և ախորժե
լի ․ և այ համաքատակի․
զի ինքն ած է խաղաղու
թիւնն ։ Այլ հայր ասէ

հանդերձելոյ յաւիտե
նին ։ Զի արարչութն
որ զամ արար յոչ էից,
այսպէս և հանդերձեալ
յաւիտեանն նմա է արա
րած․ Այլ արարչութբն
հայր կոչի իբր զծնօղ
եղելոցս և յառաջ բե
րօղ․ յորոց փառա
ւորի՛ միշտ․

Այլ զկնի այսորիկ ըղ
համբառնալ ձեռացն
ասէ սրբութբ, և զխոստո
վանիլ խորհրդոց բանից
և գործոց առ յառաջա
տեան և ծածկագէտն,
և յողորմութին այ միշտ
յուսալ և խնդրել ՚ի նը
մանէ յիշման արժանի
առնել, յորժամ վարձս
խերն բնաւին ծնրով .
և յամ աղօթից վերջն
ծունր ոպ գրեցաւ :
Խաղաղականին և քնոյ
ժամն բազում աղօթից
ծնրոյ և աշխատութեան
պէտքէ . զի խաւարայինքն
՚ի գիշերի ըզօրում ցնորս
յարուցանեն : Ոպ տրն
ասէ , ‖ եթէ ոք գնայ ՚ի
գիշերի՝ գայթակղի . և
թէ լոյս աղօթից չունի
ցի ընդ իւր :
Բայց վա՛յ ինձ թէ մեք
քանի դանդաղանօք ա
ղօթեմք . վսրոյ ՚ի քունն
բազում դառնութեան
հանդիպիմք : Աղաչեմ
վս տն . մի՛ շտապով մի՛
ծայրատ և մի՛ ծուլութե .
զի մի՛ չարն անպատշաճ
խորհուրդ տնկեսցէ ՚ի
մեզ կամ գործ . և մի՛
մա

մահու ապաստեսցէ ան
պատրաստ գտեալ զմեզ.
կամ դիմահարութեան
կարծիս տացէ։
Մայլ աղօթեմ երկի-
ղիւ և ջանարեմ արտաս-
ուաց. և զարարիչն ած
յօգնութիւն կոչեմ։
Այլ առանց ամենտրանի
մի՛ ննջեր. թէ գրով թէ
՚ի բերան. Այլ զդ կողմն
տանն զառաստաղն և ըզ
յատակն կնքեմ նշանաւ
խաչին. և զմիտսդ և ըզ
զգայութիւնսդ ՚ի սէր ան
բևեռեմ. և աներկիւղ
ննջեմ ՚ի փառս նորա։
Որ է օրհնեալ յաւիտեանս
ամէն։

Յովհաննու Իմաստասիրի,
Սոյն Գիշերային Ժա-
մուն։

Ազդարարութի ժա-
մահարին՝ ըզ
գաբրիելեան
փողոյն ունի զօրինակ։
Այլ դիմելն ՚ի տեղի աղօ-
թիցն՝ զհաւաքումն ա-
հեղ ատենին։ Զի զար-
թուցեալքն ՚ի թմրութէ
քնոյ, օրինակեն զարդրան
առաջինս. յաձայն ազդ-
մանէ՝ ՚ի միտսն զարթու-
ցեալ ՚ի մարմնականացն
հեշտութէ անկողնոց.
և զհետ կամացն այ՝ ՚ի
կիրս կացեալ առաքինու-
թեց. Նաև զազդումն
փողոցն ՚ի սինա, և զազ-
դումն հոգւոյն ՚ի մար-
գարէսն նշանակէ։
Այլ որպէս բարձրաբար-
բառ փողով խմր լերինն
բարձու կացեալ՝ զամե-
տիսն օթծէին սիոնի.
Նշանակէ և զառաքելսն,
և զամենատարանիչսն. որք
քաջամեծօղք եղեն փո-
ղովք՝ ժամատուք տիեզե-
րաց. Այլ զհանդերձեալն
ևս զեկուցանէ վն հա-
սարակաց յարութե յաւի-
տենից ննջեցելոցն. և
զամենայնն ՚ի գիշերի՝ ու-
սաք լինիլ. Առաջինն,
զի գիշեր էր անգիտուե.
Այլ երկրորդն, խաւար
եգիպտականն ախտակրու-
թեան. Իսկ երրորդս՝
որպէս ՚ի գիշերի եղև
տր

տ՟րունական յարութ՟ն։ Ամ պէս մինչ անզգայ եալք 'ի մեղսն էաք 'ի մէջ գիշերի՝ կենդանա ցաք կենարարին մերոյ յարութ՟ն։

Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, Թուէ որպէս նոր գեալ է Մաշտոցի Գրոց Հայցուածս։

Զա՟ծայինն ժամանեալ խաղաղութ՟ն խորհուրդ 'ի չարին վրդովմանց՝ ժողովուրդ ք՟ս եկեղեցւոյ՝ որպէս յանդիման կալով առաջի մեծի Թ՟գ՟որի, նմին համարձակութիւն հայցէ 'ի բանալ բերանոյն· յասելն, Տ՟ր՝ եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։

Ահա յետ այսորիկ համարձակեալ պատմէ՝ զնեղչացն դաւաճանութ՟ն և զազգի ազգի աւէկոծութիւն, յասելն, Տ՟ր՝ զի բազում եղեն

իէ

նեղիչք իմ· և բազումք յարեան իվ՟ր իմ 'ի սկըզբանէ կենաց իմոց թըշնամիք 'ի դըրախտին հակառակամարտ զօրութ՟իքն։ Ահա բազումք ասէին զանձնէ իմմէ թէ չիք փրկութի նորա առ ա՟ծ իւր։ Սորոյ աղաչէ օգնական լինել տկարու՟ բնութ՟եաս, առ 'ի խորտակել զյարձակումն յլկողացն, և ո՛չ անտես լինել բնութ՟եաս 'ի բարեգթութենէն տ՟ն։ Զի լցոյց ասէ չարչարանօք զհոգի իմ, և զկեանս իմ 'ի փառաց դրախտէն՝ 'ի դժոխս մերձեցոյց· և համարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն 'ի գուբ· և որ զկնի սաղմոսն պատմէ զանազան փորձութ՟ 'ի վար արկեալ ոգ՟ վարմի՝։

Արդ ը՟ ա՟մ կիրս մարդկային անցեալ եկեղեցւոյ, սակայն ո՛չ լքանի յարարչական խնամոցն· յիշելով զսկզբունսն հայրական խնամոցն որ 'ի դը



րախ

րախտին, ամենևին որ
տաքս սահմանել զինքն
'ի բարձրուէ. խոնարհե
ցուցանող տրտմութեց,
'ի վերինն ուրեմն խարըս
խեալ ամրութի՝ գոչէ
քաջալերաբար հրամա
նաւ ասելով յինքեան,
Օրհնեա անձն իմ զՏր,
և ամ ոսկերք իմ զանուն
սբ նր. Այլ թէ՝ մի մո
ռանար զամ արարեալ
սքանչելեսն զառաջինսն,
և զառ յապայսն, յոր պը
սակելոց է զկամարարսն
իւր՝ իւրով ողորմուքն.
Այլ այսպէս սրբեալ և
ամրացեալ և զգաստացեալ
հինգ սաղմոսիւքն, յա
ղագս հինգ զգայութեցն
մաքրութեց խնդրեաց
յԱյ զսբ հոգւոյն շնորհն
յոգնականութի. առաջ
նորդ լինել յերկիր բա
րութեանցն ուստի ելաք
մախանօք չարին.
Յասելն թէ, հոգի քո
բարի առաջնորդեսցէ
ինձ յերկիր ուղիղ.
Օ, որ և քարոզն պատ
ւիրէ պահել զպատուի
րանն. զի երկայնօրեայք
լինիցին յերկրին բարու
թե. և ոչ ոպ 'ի դրախտին
սակաւօրեայք.
Որոց լիցի մեզ ամցուն
պահել զպատուիրանս նր
և հասանել յայն երանե
լի կեանսն 'ի քս յս 'ի տր
մեր. Որում վայելէ
փառք իշ".

Թուղթն Տն Կարգաց Ներսէ
շնորհալւոյ եւ Մխիթարայ. Օ որ
[illegible] է [illegible] Վար
դապետի, 'ի խնդրոյ Վար
դապետաց Մխիթարայ եւ [illegible]
[illegible] Մ[illegible] [illegible]
[illegible] Մ[illegible].

Զիմաստաիղձ և ըղ
գովելի նամակս
խնդրոյ՝ ընկա
լայ ես թարմատար և տը
կար ոգի եսայի. և գիտա
ցի զհմտագոյն իմաստա
սիրաց ձերոց ծնունդ
սխրալի. Ա՛րդ՝ ասեմ
քաջ գիտողացդ ոպ ու
սաք 'ի սրբցն հարց.


Ակե

Եկեղեցի դուստր է վերին սիօնի · և քաղաք անմահ արքային ։ և նըման երկնաւորին կառուցաւ յերկրի · զի անվըրէպ զերկնայնոցն և ըզբոլոր ծագաց երկրի բերէ յինքեան զօրինակ ։ Խորհնաւն զերկինս երկնից ուր ածութին հանգուցեալ է ։ Եւ տաճարն զհրեշտակակին կայանսն մաքրութբ և ձևով յարմարութեամբ իւրով։ Իսկ գաւիթն զերկրի՛ շրջագայ բնութե ունի զկազմութի ։ Որպէս և'ի ծնունդն եռայարկ խորանն կառուցաւ · և երիցս անգամ նոյնպէս նորոգեցաւ · և ըստ աստիճանի արժանաւորութեան առանձին գործ ղատեցաւ ։ Քահանայապետի · քահանայի · հրէի · հեթանոսի · եկկի և բնակի · մաքրոցն և անմբցն ։ Զնոյն կրեաց և նորս եկեղեցի ։ սկսաւ 'ի հընումն, և նորոգեցաւ 'ի նորումն · և կատարի 'ի հանդերձեալն ։

Այս և երրակի զանազան յարկօք տարածեալ ունի զգոգս իւր ։ Խորանն ածընկալ՝ ուր սեղանն է և պատկերն յի և մարմին նորին բաշխի · քահանայապետական կարգի և բոլոր զարդուն իւր տեղի · ուր բազմի և ներգործէ զածանմանութին ։ Իսկ տաճարն երկնահանգէտ՝ սրբզան ժողովրդոց · որք զերկնայնոցն բերեն յինքենս զօրինակ մաքրութբ և կայանիւ ։ Իսկ գաւիթն՝ երկրիս է խորհուրդ · ոպ զի անկեալն յերկնից սատանայ և տարագրեն 'ի դրախտէն մարդս և ստեղծեալք 'ի սմա կենդանիք՝ ըստ տաղաւարին · լծեալք ընդ ցաւօք և հիւանդութբ հոգեկան և մարմնական ։ Նոյնպ և 'ի սրահս եկեղեցւոյն ախտացեալքն մեղօք և դերեալքն ցան



կու

կութք, և այսակրեալք
ախտիւ դիւականս և տա
րադիրքն յեկեղեցւոյ՝
կան անդ դեգերեալք.
և կերակրեն զանձինս
ապաշխարութեամբ և
խրատով գրոց բըժշկե
լով զախտս հոգւոյ և
մարմնոյ. և 'ի դէպ ժա
մու գտանել զփրկութիւն.
Այս է կարգ եկեղե
ցւոյ. զի ասէ մարգա
րէն՝ յաղօթս կացցեն
առ քեզ ամենայն սուրբք
'ի ժամ ընդունելի.
Նաև օրէնք են բժշկաց
դիտել զժամանակս դեղ
ըմպութեան, և սպեղանիս
դնել ախտացելոց.
Սոյնպէս բժշկապետք հո
գւոց մերոց առաքեալք
և մարգարէք և վարդա
պետք, սահմանեցին և
դորին զտեղի և զժամա
նակ ախտանալոյ բնու
թեան, և ետուն զդեղն
կենաց.
Որդ՝ եղև ախտանալն
առաջին յերրորդ ժա
մուն. մահաբեր խրատն
զոր ետ օձն Եւայի. և 'ի
վեց ժամն եկեր ըզպը
տուղն և ետ առն և մեր
կացան. Իսկ յիննն ժամն
ընկալան զանէծս և ելին
'ի դրախտէն.
Այս յերեկոյին յորում
սպառեցաւ լոյսն և խա
ւար ծածկեաց զերկիր՝
գրեցաւ մարդն ընդ լը
ծովն սատանայի.
Որդ՝ տէրն և արարիչն
հոգւոց և մարմնոց,
նոյն եղև բժիշկ կենաց.
Յերրորդ ժամուն ըն
կալաւ զվճիռ մահուն
'ի պիղատոսէ և գնաց
'ի խաչ. 'Ի վեց ժամուն
տարածեաց զձեռն իւր
և խաւարեցոյց զարեգակն
և զլուսին և ճաշակեաց
զլեղին. 'Ի յիննն ժամուն
աւանդեաց զմարդկային
հոգին 'ի ձեռս Աստուծոյ հօր,
յորում ժամու ել ադամ.
Այս յերեկոյին եդաւ 'ի
սիրտ երկրի. յորում
ադամ յերկիր և 'ի
սատուեր գիշերին.

Որդ նոյն ինքն որ զայս ամենայն արար, նա՛ 'ի ձեռն քարոզչացն իւրոց կարգեաց յեկեղեցիս ժամանակ աղօթից. զի քա՛ւեսցին 'ի նոյն տեղւոջ.

Երրորդ ժամուն զառաջին ողորմեայն. յորում էջ հոգին ա՛ծ. և աղօթք 'ի նոյն հոգին.

'Ի վեց ժամն զերկրորդ ողորմեայն և ըզ պատարագն. յորում ճաշակեց մարդն զպտուղն և քն զլեղին վասն նորին.

Եւ յինն ժամն զերրորդ ողորմեայն, և զնորին խորհրդական աղօթսն. յորում մարդն ել 'ի դրախտէն. Իսկ յերեկոյին 'ի մօտիլ գիշերոյն զգոհութեանն և զհանգըստեան աղօթսն.

Այս են ժամանակ աղօթից 'ի տնէ ա՛ւանդեալ.

Իսկ 'ի մէջ գիշերին, յորում դա՛ւիթ աղօթէր, 'ի մէջ գիշերի յառնէի ասելով. Եւ՛ պօղոս և շիղա աղօթէին. Եւ՛ 'ի հա՛ւախօսին զոր տր զիւր դալուստն ասաց. Եւ՛ յարևագալին դա՛ւիթ ասէ. ընդ առաւօտս կանխէի խօստո''. Եւ պատճառ գիշերային աղօթից ընկալա՛ եկեղեցի զհրամանն քի որ ասաց, ‖ արթուն կացէք. վն զի ոչ գիտէք յո՛րժամ տր տանն գայ. յերեկորեայ. թէ 'ի մէջ գիշերի. թէ 'ի հա՛ւախօսի. և այլն. Յորում յայսքան ժամս արթուն է եկեղեցի և սպասէ քի գալստեանն. Եւ այս լինի ըն դա՛ւթայ որ ասէ, եօթն անգամ յա՛ւուրն օրհնեցից զքեզ վն իրաւանց և արդա''.

Ո այս սահման կանոնի աղօթից ունի ամ եկեղեցի. Պահեաց և մեր յոլով ժամանակս յա՛ւուրս ինքնակալ թագա՛ւորացն մերոց. իսկ յորժամ զօրացան հալա

 ծիչքն

ծիչքն՝ նեղեալք 'ի վը
տանգից և 'ի հարկապա
հանջութէ ազգս մեր,
սաստիկ նեղութե՟ն ոչ
տայր թոյլ ըստ կարգի
և ժամու աղօթել. այլ
զերկու և զերեք ժամու
աղօթսն իմիասին կատա
րէին. Նոյն զի հոգւով
լի՛ էն առաջին հարքն,
այնմ ժամանակին զնը
շանն թողին 'ի կատրւմն
աղօթիցն և ժամուն.
զի թերևս դարձեալ նո
րոգեսցի: 'Ի ժամանակս
իշխանութեան և խաղա
ղութեան, զեօթն ժամն
յեկեղեցին կատարէին.
Բայց արժնորքն միայն
մտանէին. և դաիթն
կայր 'ի սկզբանէ յառա
ջելոցն, որ ապաշխարո
ղացն էր տեղի:
Զի զախտացելսն ոչ
ընդունի եկեղեցի. այլ
'ի ժամ ահաւոր խորհըր
դոյն արտաքս հանէին
ընդ ունկնդիրսն:
Նա̂ սարկաւագն դըռ
նապան կայր կարգած.

և կամ բնաւ ոչ տայրն
թոյլ մտանել: Նա̂ այն
էր մեծ ամօթ որով գոր
ծիւր քաւութիւնն.
յորժամ յարքունական
տաճարէն և 'ի լուսերա
միցն դասէ արտաքս տան
ջեալ լինէին յայտնապ.
Իսկ յետոյ առաջնորդք
եկեղեցւոյ՝ տեսեալ ըղ
տրկարութիւն ոմանց զի
ոչ կարէին յանդիման
այլոցն արտաքս կալ,
վասն որոյ թուլացուցին
զայս և ետուն հրաման
իմիասին աղօթել:
Բայց զձայն սարկաւա
գին թողին 'ի տեղն, զի
որ կարօղն իցէ տանիլ
զայն խոնարհութիւն,
ելցէ արտաքս ըստ հրա
մանին. և թէ ոչ կամի
ցի, կացցէ 'ի ներքս և
աղօթեսցէ:

Նա̂ քի փառք յա
ւիտեանս
ամէն:

Յորանէլոյն Գրիգորի Ս. Տար
ծաղկեցին Հայոց և Յորդանա
ան Ս. Ծաւան Սարգպէտի
Մեծ Տաթևացւոյն և Հօրն
հաւատարչաց, Սարգսելի Իկերոյ
արարողութեանց Սաջեղէացւոյ
Հայաստանեայց, 'Ի բան մար
գարէին որ ասէ, Տ̅ր եթէ զշ
րթունս իմ բանաս, և
այլն.

Լս̅ ե՞ր 'ի մ̅տնէ խընդրեմք բանալ զբերանս մեր. Նա՛խ՝ զբերան իմ բացի և առի զհոգի աղօթէ մարգարէն. և մեք բացցուք զբերան մտաց և առցուք զհոգի շնորհաց և նովա՛ խօսեսցուք ըզբանս աղօթից. և զի թէ պէտ մարմնոյ շրթունս մեր է, այլ զբերան հոգւոյս տ̅րն բանայ. որ պատկեր է նմա.

Պարզ̅ե՛ է̅ կա՛պ է բերա նոյն. այսինքն՝ հրամանն և երկիւղն ա̅յ. կա՛պ են սորա. Նախ՝ հրամանն որ եսա ադամայ 'ի պտղոյն չուտել. և անհրաման եկեր. մեք հրամանա՛ նորա բանամք զբերանս 'ի պտուղ օրհնութե. Երկրորդ՝ երկիւղն որ յեկեղեցն ասացա՛. ե̅ սուրբ երկիւղ քո բանեալ պահեա՛. Ապա խնդրեմք 'ի նմանէ բանալ զբերանս.

Ս՛ ասա ք̅ հարցումն լինի. Նախ թէ՝ վ̅ս է՞ր ք̅ փոխեն և հ̅զ տուն. Պատխնի. Ս̅ս չորից. Նախ՝ զի 'ի հինն ք̅ ժամն 'ի գիշերի էր. Երկր̅դ՝ զի չորեքնիւթեայ է բնութիւնս մեր. Եր̅րդ՝ 'ի փրկութի̅ չորից հասսակաց. որ է երեկոյն, մէջ գիշերն, հա՛ւախօսն, և առա՛ւօտն. Չ̅րդ՝ զի ասէ մարգարէն, 'ի մէջ գիշերի յառնէի խոստո՛. Ս՛ չորս կերպի՛ իրա՛ունք արարք̅. Նախ՝ խաչի՛ն որ է առաջին փոխն. Երկր̅դ՝ թաղմամբն որ է երկր̅դ փոխն. Եր̅դ՝ յարութե̅ն որ է եր̅դ փոխն. Չ̅րդ՝ հոգւոյն որ է չ̅րդ փոխն.

Երկրորդ հարցումն թէ՝ վ՟ն էր համաձայն երգեմք: Պատ՟: Ասեմք թէ, ՚Նախ՚ համաձայն էր ադամ ընդ հրեշտակացն. և յետոյ բաժանեցաւ: Երկրորդ՝ ՚ի ծնընդեան ք՟ն հրշտկք և հովիւք համաձայնք եղեն: Երրորդ՝ յարութ՟ն քի Հրէայք և հեթանոսք կենդանիք և մեռեալք: Չորրորդ՝ ՚ի գալստեանն մարդիկք ընդ հրեշտակաց ՚ի փառս.

Իսկ է՟ դասն որ յեկեղեցի՝ յերկնի և երկրի օրինակ: Եւ դրձ՟լ՝ ՚ի յերկինս է՟ որմունք. հրեշտակաց և մարդկան:

Երրորդ հարցումն թէ՝ վ՟ն էր մի սարկաւագն միայն քարոզէ. Պատ՟: Ասեմք թէ նոյն է. ո՟պ երկու սղմոսղքն է՟ դասուցն, նոյնպէս և մինն փոխանակ է՟ դասուցն: Եւ դրձ՟լ՝ զերկու տունն ՚ի մի շունչ ասել. զի եղ տունն՝ ՚ի մի շունչ լինի իէ

լ՟ք տուն. ՚ի խորհուրդ մարդեղութե ամաց ք՟ն: զի զ՟ն թաղումն և ըզ յարութ՟ն նշանակէ չորս սաղմոսքս այսոքիկ:

Եւ այն որ մինն միայն սաղմոսէ՝ դ՟ ինչ նշանակութիւն ունի:

՚Նախ՚ ՚ի յերկրաւորս. որ մի ումն առ թւգաւորն զգեղին դանկատն ասէ: Երկրորդ՝ մովսէս միայն՝ վ՟ն ժողովրդեանն աղաչէր: Երրորդ՝ ք՟ր մեր վ՟ն ա՟մ մարդկան: և նոյն է խորհուրդն յորժամ մինն պ՟րգէ կամ աղօթէ: Չրրդ՝ նշանակէ սարկաւագն զհոգին ս՟բ. որ բարեխօս լինի ՚ի հեծութիւնս:

Իսկ երգն Ներսէսի ՚ի պաշտօնս գիշերոյ՝ դ՟ բաժին ունի:

Առաջինն՝ վեց տուն որ ասէ, Յիշեսցուք ՚ի գիշերի զանուն քո տ՟ր: Զի գիշերէ համարեալ այս կեանքս հանդերձ՟լ կենացն. և վեցիւք կա



տա

տարի։ Ո՛ եցէ որ շաբա
թուն։ Եւ վեցէ դար
կենցաղոյս կենաց։
Եւ վեց կենդանակեր
պիւք խոնարհի արգ՟կն,
և վեցիւք բարձրանայ։
Եւ վեցէ շարժումն մար
դոյ յամ՟ գործս. եթէ 'ի
չար և թէ 'ի բարի։
Երկրորդն՝ Բ տուն զար
թիքն 'ի դէմս Բ կու
սանացն. որք ննջեցին
մարմնով 'ի գերեզմանի,
և հոգւով հանգեան 'ի
կայանս հոգւոցն։
Իսկ երրորդն՝ Գ տուն
զարթիր ընդ էր ննջես.
'ի խորհուրդ յարութեն
քն. և յարութեան հա
սարակաց մարդկան։
Զի յարութին զօրութ
Երրորդութեն կատարի.
և Երրորդութեն փառս
մատուցանեն երեք յա
ւիտեանս։
Եւ չորրորդն՝ Դ տուն
զարթուցեալքս. որ
այժմ Ե զգայութբ արթ
նացաք 'ի քնոյ, և յայն
ժամ բոլոր ամ՟ զգայութբ

յառնեմք 'ի փառաւորա
նութին մյ։ Եւ բովան
դակն իդ տունն է 'ի պահ
պանութին իդ ժամուց
աւուրց տուընջեան և
գիշերոյ։ Եւ 'ի հանդեր
ձեալն 'ի խորհուրդ իդ
երիցանցն։ Որք և յեր
կոտասան առաքելոցն և
բժան մարգարէիցն։
Եւ Ճ տր ողորմեայն ա
պաշխարութն՝ 'ի խոր
հուրդ հարիւր ոչխարցն.
միոյն պակասեալ։
Եւ յիսունն՝ մարտիրոսց.
զի ազատեալք եղեն։
Եւ 'ի դէմս Երրորդու
թեն 'ի տրունակին տօնս՝
'ի հոգւոյ և'ի մարմնոյ և
'ի մտաց մերոց սրբութ։
Իսկ ասելն, Օրհնեալ
տր մեր և փրկիչ յս քս։
Նախ՝ 'ի յօրհնութենէ
սկսեալք 'ի նոյն աւար
տեմք։ Եւ դարձեալ զամ
աղօթս մեր 'ի քս նուի
րեմք. զի նա ընծայէ
հօր։
Յետ որոյ կանոնք սաղ
մոսաց. է գուբղայն

տի կենացս և ընդ հան
դերձելոյն ։ Նոյնպէս և
ութ կանոնն որ ելք աս
տիճանաց ասէ՝ զելեալն
աստեացս նշանակէ ։

Իսկ կանոնագլուխն կըր
կին ունի խորհուրդ ։
Նախ՝ զի որպ յեսու է
որ շուրջ եկեալ յերի
քով. զվեց օրն լուսոյ,
և յեօթն երրորդին աղա
ղակաւ. և կործանեցաւ
պարիսպն ՚ի ձայնէն ։
Նոյնպէս և մեք զվեց
գուբղայն ՚ի թիւ ասեմք
և զեօթն ձայնիւ ․ և ըզ
փոխն աղաղակաւ ։ և ՚ի
կործանիլ մեղացն ապա
օրհնութի այ նուիրեմք ։
Եւ վս Յ բանեան օրի
նացն և վս Թուոյ աղա
տուե՝ Յ շարական ասի
օրհնութի ՚ի տօնս տրու
նականս և ՚ի տօնս մար
տիրոսաց. զի ազատեցան
աստեցս ։ Իսկ ՚ի պահքն
ոչէ օրհնութի զի ապաշ
խարութի է. Նմանապէս
և ոչ խունկ զի դարշա
հոտ եմք մեղօք ։

Իսկ Թագաւորքն Դ Դ
տունն է ՚ի դէմս Երրոր
դուռն ։ և միջին տունն
՚ի սաղմոսաց խառնեալ.
զի ած է մարդացեալ ։
Եւ ՚ի տրունական տօնս՝
Ալէլուիայիւ՝ հրեշտա
կաց երգակից լինիմք ։
Եւ աստ կտրի մէջ գիշե
րոյ ժամն ։

Իսկ հարցն Դ Դ տունն ։
Նախ ՚ի դէմս երրոր
դուռն ։ Երկրորդ՝ վասն
երից նախահարցն ։
Երրորդ՝ զի Դ էին ման
կունքն ։ Եւ գործա
տունն Է տուն ․ զի Է են
արարածք ․ երկնաւորք
և երկրաւորք ․ իմանա
լիք և զգալիք ։ Եւ սաղ
մոսն Ա տուն ․ զի պատ
կերն բելայ Ա կանգուն
էր ։ Եւ վեց տունն շա
րական՝ զի վեց կանգուն
էր լայնքն ։ Եւ Դ ած
քաւեամ՝ ապաշխարութե.
ոպ աստց մաքսաւորն ։
Եւ զի հարցն ՚ի դէմս
ադամայ էր. և Սողոմեայն
՚ի դէմս Եւայի, ապաշ
խա

խարութիւն։ Մեծա
ցուսցէն 'ի մէջն 'ի դէմս
Ա՟ծածնի. վասն զի նա
եղև լուծիչ երկուց դա
տապարտութ՟եց։
Իսկ 'ի կիրակէի՝ Եղիցի
անուն տ՟ն օրհնեալ.
Մեղմ ձայնիւ 'ի բերանոյ
ադամայ. Եւ փակումն
դրանն՝ զթաղումն 'ի դե
րեզմանի։ Երկու զամ
պարքն՝ զերկու լուսա
ւոր հրեշտակսն։ այլ և
զլոյս աւետարանին։
Իսկ բուրվառն՝ նշանա
կէ զմարդկութիւն ք՟ի.
և հուրն՝ զա՟ծութ՟ին։
Ծխումն՝ զբուրումն հո
գւոյն սրբոյ։ Երեք չը
ւանքն՝ զերեք գոյացու
թ՟ին։ Մերին ադոյցն՝
զմիութ՟իւնն։ Եւ զան
կակքն՝ զառաքեալսն։
Դարձեալ բուրվառն
է կոյսն Մարիամ. և
հուր՝ Ա՟ծութ՟ին 'ի նմա
բնակեալ։ Իսկ խունկն
մերձեալ 'ի հուրն և ըզ
հոտն բուրեալ՝ է մար
մինն միաւորեալ ընդ

բանին և զհոտ անոյշ
բուրեալ աշխարհի։
Դրակալն՝ նշանակէ ըզ
մովսէս. որ ընկալեալ
զպ՟տգամն ա՟յ խօսէր առ
ժողովուրդն։ Եւ ծած
կոյթն՝ զքօղ օրինացն։
Դրձ՟՝ նշանակ խաչին.
և ք՟ս 'ի վ՟ր ն՟ր խաչիւն
քարոզել. Եւ համբոյր
աւետարանին՝ վասն զի
'ի համբոյր եկն մեզ ք՟ս
մարմնով։ Եւ տ՟ր երկ
նիցն բարձր ձայնիւ ը՟
հրեշտակացն երգ.
Եւ ապա փառք 'ի բար
ձունս. զոր երգեցին
հրեշտ՟կք 'ի ծննդեանն.
և յերրորդ ժողովն որ յե
փեսոս ապա կտրեցաւ.
Եւ առաւօտու երգն 'ի
դէմս խաչինն է։ Իսկ է
րեքսրբեանն 'ի դէմս ք՟ի
աւետարանն վկայեաց.
Զայս ասաց եսայի և
խօսեցաւ վ՟ն ն՟ր ասէ։
Եւ այս է միտք բանին։
Թէպէտ ո՟պ մարդ ըմ
բռնեցար՝ ա՟ծ ես.
Եւ թէպէտ կամաւ տր
կա

կարացար՝ հզօր ես։ Այլ
Թէպէտ մեռար մարմնով՝
անմահ ած ես․ վս քո չար
չարանացդ ողորմեա՛ մեզ։
Օ այս յովսէփ արեմա
թացին անց և ընկալաւ
զածացեալ մարմինն 'ի
խաչէն․ Այլ զփառաւո
րեալն՝ Թումա առաքեալն
ասաց 'ի փոխումն ածա
մօրն և կուսի։ Այլ յետ
այսորիկ՝ մանկունքն․ զի
'ի քս մանկացուք միրր
տուք ապաշխարուք և
արեամբ․ և ապա 'ի հան
դերձեալն յարութեն․
Այլ աստ կատարի առա
ւօտու ժամն։

Այլ գիտելի է զի 'ի հր
նումն է անգամ էր
ժամն․ և 'ի նորա ինն ան
գամ․ Առաւօտու յարե
ւելից, և երիկունան խա
ղաղական ոչ էր 'ի հինն․
այլ 'ի նորոյէ յաւելեալ։
Խաղաղականն 'ի խոր
հուրդ իջանելոյն 'ի դը
ժոխս․ և զի խաղաղացոյց
զհոգիսն․ Այլ արևա
գալն 'ի խորհուրդ յա

Ի․

րութեն․ զի յարուցեալ
'ի մէջ գիշերի՝ ընդ ար
շալոյսն երևեցաւ առա
քելոցն և իւղաբեր կա
նանցն։ Այս՝ առաւօ
տու երեք ժամու խոր
հուրդն։

Իսկ 'ի ճաշուն՝ առաջին
ողորմեայն 'ի դէմս հո
գւոյն․ Որ յերրդ ժամն
էջ 'ի դաս առաքելոցն։
Այլ յերրորդ ժամու ա
ւուրն՝ կապեցաւ քս 'ի
հրէիցն․ Այլ յերրդ ժա
մուն խաչեցաւ ըստ գրե
լոյն աւետարանչին մար
կոսի։ Այլ յերեք ժամու
կանոնեցաւ 'ի նոցանէ
պատարագել զքս։
Այլ յերեք ժամու հա
տանի վճիռ յարդար դա
տաւորէն 'ի վր մեղաւո
րաց․ ըստ որում հատին
վճիռ 'ի վր անմահ Թա
գաւորին․ Այլ յերեք
ժամուն հաւանել կինն
ճաշակել 'ի հրաժարեցու
ցեալ ծառոյն։

Իսկ երկրդ ողորմեայն
'ի վեց երորդ ժամուն

վասն ճաշակման նախա-
ստեղծիցն • որ անկեալ
'ի մեղս՝ արտաքսեցան'ի
դրախտէն ։ Ապ երկրորդն
ադամ 'ի վեց ժամու ա-
ւուրն եկն առ իմանալն
դրախտն 'ի մբ ծածինն
և յղացաւ 'ի նմանէ •
Այլ 'ի սոյն ժամուն բե-
ւեռեցաւ 'ի խաչին •
մերկացեալ 'ի փայտին
ճաշակեաց զլեղին ։
Այլ և 'ի վեց ժամու
աւուրն երևեցաւ մետա-
սանիցն • և էկեր ընդ
նոսա յաւուրն յայն յո-
րում կամեցաւ համբառ-
նալ յերկինս ։ Այլ 'ի Է
ժամու աւուրն օձն պը-
ղընձի բարձրացաւ 'ի մով-
սիսէ յանապատն սինայ
յօրինակ փրկչին մի ։
Իսկ երրորդ ողորմեայն
յինն ժամու աւուրն
ըստ այնմ առադրի, վն
զի ժամուն յորում յան-
ցեաւ ադամ և յետ մե-
ղացն մնաց 'ի դրախտին՝
նոյնչափ չարչարեցաւ քս
'ի վր խաչին ասէ եւսեբի

ԻՐ

իմեսու եպիսկոպոսն ։
Այլ յորում ժամու ծաղ-
կեցաւ ծառն կենաց՝ 'ի
նոյն ժամու խոցեաց զի-
նաւորն դեղարդեամբ
զկող փրկչին • որ բացաւ
աղբիւրն 'ի կողէն և ել
արիւն և ջուր ։ Այլ 'ի
ժամու յորում մերժե-
ցաւ ադամ յադինայ՝
յայնժամ աւազակն վն
խոստովանութեն եմուտ •
կարապետ այնոցիկ որոց
անդ էին դառնալոց •
Սն այն 'ի սոյն ժամու
աղօթեմք և փառաւորեմք
զքս զի մտցուք ուր
ինքն հորդեաց մեղ
ճանապարհ ։
Իսկ 'ի տասներորդ ժամն
տրն կենաց էջ 'ի շիրիմ
մահացելոցն • և անապա-
կան յարութեն հաստա-
տեաց յոյս մարդկան սե-
ռի ։ Այլ 'ի ժամու առա-
ջին մրդոյն մաշկափած-
լինելոյն՝ պատի պատա-
ռակալօք բնակեալն 'ի
լոյս անմատոյց ։ Աւ յոր-
ժամ ադամ հեռացաւ 'ի

դրախ

դրախտէն՝ 'ի նոյն ժամն էջ 'ի սէրտ երկրի · ուստի պարտէ աղօթել։

Ո՛ի որ էջ 'ի ստորին կողմն երկրի՝ տարցէ՛ ըզմեզ 'ի վերին աշխարհն անմահ մարմնով նորոգեալ։

Իսկ յերեկոյին ժամն փառաւորեմք զա՟ծ · զի յայնմ ժամու ք՟ս կս ցոյց զպատարագն 'ի վերնատունն, և լուա՛ց զոտս աշակերտացն։ Նա՛ 'ի նմին ժամու իջուցին 'ի խաչէն։

Իսկ 'ի վերջին ժամու երեկոյին որ է խաղաղականն, օրհնեմք զա՟ծ · զի 'ի նմին ժամու աղօթէր ք՟ս, և հեղոյր 'ի նմանէ քրտունքն արեան։ Նա՛ 'ի նմին ժամու եդա՛ւ 'ի գերեզմանի։ Նա՛ 'ի նմին ժամու եկաց 'ի մէջ աշակերտացն դըրօքն փակելովք և ետ նո՟ց ողջոյն ։

Իսկ եկեսցէն որ է իններորդ հանգըստեան ժամն 'ի դէմս հօր, ասեմք և ննջեմք · որ է վերջք և ա՛ւարտ ամենայն ժամուց բոլոր ա՛ւուրն ·

Նա՛ այլ բանք պիտանիք վասն արարողութեանց եկեղեցւոյ՝ լիապէս ասացա՛ւ 'ի գիրս հարցմանց յիններորդ հատորն · 'ի իը՟ երորդ պրակէն մինչև ցվախճան հատորին։

Նա՛ Պ՟Ի Յուսոյն մերոյ փառք յաւիտեանս Ամէն։



## Ի Բնբոսն Մեծն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց Կաթողիկոսի Յաղագս Մատաղին որ է աղքատաց կերակուր 'ի փառս այ։

Լու՛աք դարձեալ և յաղագս անբանից զենմանց կենդանեաց զոր 'ի տրունական յարուԹ և 'ի յիշատակս ննջեցելոց հոգւոց առնեն և մատաղ անուանեն, եԹէ հակառակուԹի է 'ի ձեզ։ Ոմանց ասել Թէ բարւոք է, և այլոց Թէ չար և խոտելի. զի զհինն ասեն առնէք ըն հրէից։ Ցուցցուք ձեզ և զայս ևս յայտնի և պարզ։ Հրէական զոհիցն և պատարագաց արիւնք առ տեղեաւն 'ի քաւուԹի էր ակամայից ոմանց մեղաց. իսկ խորհրդեամբ զարիւնն քի նշանակէին որ լինելոց էր ԹողուԹի ամենայն տիեզերաց։

Այլ մինչև ցգալուստն այ պատարագիլ 'ի վր խաչին, ընդունելիք էին այնոքիկ, վս զի օրինօքն այ գործէին։ Իսկ 'ի գալ ճշմարտուԹեն՝ խափանեցան ստուերքն և օրինակք. քզի չէին պիտանացուք։ որպ և ոչ ճրագ 'ի ծագել արեգական յետ գիշերային մԹուԹՆՆ։

Այլ արդ՝ որ ըստ հրէական օրինացն առնիցէ զմատաղ զատկին, կամ զյիշատակ հանգուցելոց 'ի քս. ոչ միայն խոտելի է, այլ և չար և վնասակար։ Քանզի այնպիսին յայտ առնէ Թէ դեռևս չէ քի արեամբն ազատեալ 'ի մեղաց, այլ ստուերականին ծառայէ օրինաց։ Բայց նախ քննեսցուք Թէ օրէնքն մովսէսի որպիսի օրինակաւ հրամայէին հրէից առնել

նել զզատիկն ։ և եթէ
մերս այնպէս հանդիպի
եղեալ, ապա 'ի բաց ըն
կենլի է և խոտելի։
Այս՝ այսէ նոցայն ։ 'ի Ժ
երրդն Նիսան ամսոյ առ
նուլ ոչխարս տարեկան
և արու 'ի տունս իւ՟րնց
և պահել մինչև ցչորեք
տասան նորին ամսոյն։
Այս՝ յերեկոյին յորում
լուսանայ հնգետասանն,
զենուլ և խորովել և
արեամբն զդրունսն դրոշ
մել ։ և ապա գօտէպինդ
լինիլ և ցուպ 'ի ձեռս
առնուլ և յընթացս ու
տել իբրև Ճանա՟պրհորդ
հանդերձ բաղարջաւ և
դառնըճով։ Իսկ այլ
զոհքն որ վասն մեղաց՝
պէս՟պս և զանազան էին
առնլոյն օրինակքն ըստ
իւրաքանչիւր յանցուա
ծոցն եղելոց։
Այս՝ արդ ասասցուք և
զմերս եթէ համեմատեա
ցին արդեօք նոցայցն,
եթէ հեռագոյնք իցեն։
Ն՟ք տարեկանս ընտրէին
և արուաց ։ և մերս կամ
ամսօրեայ, կամ ո՟պ պա
տահէ ։ կամ աւելի կամ
նուազ ։ և եթէ արու կամ
էգ, անփոյթ եղեալ է։
Նոքա Է՟ աւուրբք յա՟ջ
'ի տունս ածէին։ և մեք
'ի նմին աւուր, կամ ըստ
հանդիպման եղեալ։
Նոքա 'ի հին զատկին ե
րեկոյին զենեալ, և մեք
'ի նորս զատկին առաւօ
տին։ Նոքա 'ի գիշերի
յոտն ուտէին ։ և մեք
բազմեալ և 'ի տու՟նջեն։
Նոքա ընդ բաղարջ և
ընդ դառնիճ ։ և մեք ի՛ր
մոռեալ հացի՛ և առանց
դառնըճի, նոյն՟պ և այլ
զոհք։ Նոցայն վ՟ս կեն
դանեաց ։ և մերս զոր
առնեմք՝ յաղագս մեռե
լոց յիշատակի ։ զի զաղ
քատսն կերակրելով ողոր
մուի գտցեն նոքա յ՟այ։
Որդ՝ որո՞վ կարասցեն
ի՞ւիք ցուցանել հրէա
կանին զմերս համեմատ
Ճշմարտութե ։ և ոչ եր
բէք, բայց թէ սրտու՟ե
մի

միայն և լեզուադարու
թն: Զի որ զնոցայն
առնէ, ստոյգ հեռի՛ է ՚ի
ճշմարտութենէն: այլ
մերս ոչ ըստ այսմ խոր
հրդոյ: մի՛ լիցի: այլ
յոյժ հեռագոյն ՚ի նո
ցայցն:

Այլ թէ զինչ է պատճա
ռ մերոյս և ուստի՞ գը
տան և յումմէ՞, հարկ է
տեղ մի ըստ միոջէ: զի մի՛
այլ ընդ այլոյ կարծեսցի
ոդխտաց: այլ ճշմարիտն
յայտնի եղիցի ամենեցուն:
Գրեալ է ՚ի կանոնական
գիրս սրբոյն սահակայ
հայրապետի թէ, յետ դառ
նալոյ ազգիս հայոց ՚ի կը
ռոցն մոլորութէ յածա
ծանօթութիւն ՚ի ձեռն
սրբոյն գրիգորի, եկեալ
առաջի նր քուրմք հա
ւատացեալք և ասեն.
եթէ ՚ի հեթանոսութե
անդ ՚ի պիղծ զոհիցն ան
տի ուտէաք զկերակուրն
մեր և որդւոց մերոց,
արդ այսու հետև հրա
մայեսցէ տէրութիւնդ
իր

ձեր ցուցանել զպտղաբու
կենաց մերոց եթէ որով
ապրեսցուք: Այլ նա
սահմանեաց տալ նոցա
ժերորդս յամենայնէ.
որպէս ղևտացւոց քահա
նայից ՚ի ծնունդ: Այլ ժո
ղովրդեանն հրամայեաց
զի փոխանակ մեռելոտի
կռոցն նուէրաց զոր մա
տուցանէին յառաջագոյն,
այժմ նուիրեսցեն միայն
այ նուէրս յանբանից
կենդանեաց զենմամբ,
աղիւ խառնելով. ՚ի զատ
կի յարութեան տն.
և յիւրաքանչիւր տօնս.
և յերևելի սրբոցն, և յիշա
տակ ննջեցելոցն ՚ի քս.
Եբրև զտուրս ողորմութե
՚ի կերակուրս աղքատաց
յանուն նց: Այլ ՚ի զե
նեաց նց օրհնադրեաց
տալ հաւատացելոց քըր
մացն մասունս: Ոչ միայն
զոր այժմս տան երի և
մորթի, այլ և ս յոլովա
գոյնս որ այժմուս խա
փանեալ է յաղքատութէ
և ՚ի ժլատութէ տօնողաց:
եւ

Նաև զորդիսն նց եւ յու-
սումն քրիստոնէութե.
լինիլ քահանայս և ժա
ռանգս եկեղեցւոյ. և
կալ ընծայիւք ժողովրը
դեանն. Արդ՝ պտճառ
մերոյ ազգի մատաղ առ-
նելոյն, և եթէ երբ կամ
յումմէ օրինադրեցաւ՝
այս է ստուգութի զոր
գրեցաք. Ոչ ըստ հրէ
ականացն՝ քաւ լիցի. զի
որ առնէ՝ ընդ նս նզովս
ընկալցի. այլ փոխանակ
անոտխապատիր դիցն որ
զոհէին հեթանոսք զա
րարածս այ դիւացն՝ յա
նուն ճշմարտին այ փո
փոխել զզենումն. և նը
մին արարչին նուիրել
զիւր ստեղծեալ կենդա
նիս. Որպ և նախահարքն
որ յառաջ քան զմեզ.
աբէլ, նոյ, և աբրահամ.
զի ըստ որում փոխեցաւ
ընդ դրօշելոց փայտիցն
հեթանոսաց փայտ խա
չին, և ընդ մարդադէմ
գազանացն որոց երկրը
պագէին մարդիկ, պատ

կերն հօր որ 'ի մեր բնու
թե կերպարանս եղեալ՝
բևեռեցաւ իվր խաչին.
Որպ և սբն գրիգոր ասէ
յաղօթական բանսն որ
'ի կախաղանսն. Նոյնպ
և նուիրական զոհից նց
փոփոխումն 'ի ստութե
նէն և 'ի ստուերականէն 'ի
ճշմարիտ և յօգտակարն
դարձուցանելով.
Նաև թէ այլք ազգաց
քրիստոնէից ոչ ունին սո
վորութի առնել զայս,
մի՛ ոք այնու զմերս ըստ
գտանիցէ. քանզի նոքա
ո՛չ ընկալան աւանդութ
'ի նախնի իւրեանց առաջ
նորդացն որպ մեզս. և
առաջնորդք նց վդպտք
ոչ եդին զայս օրէնք՝ զի
չեղև հարկ որպ մերոյ լու
սաւորչին. Նաև առ 'իմըր
բոյն գրիգորէ օրինա
դրեալն մի թէ փոքր ինչ
իցէ արդեօք քան զսբց
առաքելոցն, որ չէր ինչ
նուազ 'ի նոցանէ վասն
անտանելի չարչարանացն
որոց համբեր նա վասն
ան

անուանն քո · և ածա_
շունչ զօրութեն զոր ըն
կալաւ 'ի նմանէ, այս քան
ազինս դարձուցանելով
յերկրպագութի նր ·
Բայց հարցանեմք ընդ
հակառակօղսդ՝ զի թէ
և 'ի սբյն գրիգորէ չէր
հաստատեալ, այլ 'ի վերջ
նոց ոմանց և յաննշանից ·
զի՞նչ պատճառ վնասու
դոյ 'ի մատաղն զատկին,
կամ 'ի հոգեհանգիստ
ունելոյն ։ Որդ՝ կամ
ցուցէք մեզ զվնասն հո
գւոց մերոց և արդարա
ցուցէք զբանս ձեր 'ի
գրոց վկայութե և մեք
հաւանիմք բառնալ զսա ։
Նաև կամ մեք ցուցնեմք
զօգտակարութիս նց ·
որ ո՛չ միայն վնաս չէ,
այլ և յօգուտ ոգւոց ·
և դուք բարձէք 'ի մը
տաց զչար գայթակղու
թիդ զայդ ։
Յորժամ ստեղծ արա
րիչն զազգ զգալի կեն
դանեաց, վկայեաց բանն
զամենեցունց թէ՝ ետես
ած և ահա բրի են յոյժ ։
բայց նոյն արարիչն յե
տոյ որոշեաց զնոսա 'ի
միմեանց · զոմանս սբս
անուանեաց զոր և ու
տել հրամայեաց իբրև
ըզ բանջար · և զոմանս
պիղծս, զորս և անուտե
լիս ասաց ։ Նաև 'ի սրբոց
անտի խնդրեաց 'ի մարդ
կանէ նուէրս մատուցա
նել ինքեն · զոր և յայտ
առնէ նոյ որ յետ ջրհե
ղեղին զմի մի սբց կեն
դանեաց մատուցանէր այ
ողջակէզ · յորոց և հո
տոտեցաւ տր 'ի հոտ ա_
նուշից ։ Նաև այնք զորս
ած այնն բանն սբս լինել
հրամայեաց՝ սբք են և
ուտելիք անխղճաբար ·
և զորս պիղծս ասաց,
պիղծք են և գարշելիք
հաւատացելոց · և որ ու
տէ 'ի նցնէ՝ հակառա՛կ է
հրամանին այ, բայց 'ի խո
զէ որ յառաջն անսուրբ
էր և յետոյ սրբացաւ
հրամանաւ հոգւոյն սբյ
'ի ձեռս առաքելոցն վս



որո

որոշելոյ զհաւատացեալս
'ի քո՛ 'ի հրէիցն միաբա
նութէ։ Ա՞ն արդ՝ եթէ
մեք զմատաղն յանձնք կեն
դանեաց անտի նուիրէաք
ասելով եթէ աղն օրհ
նութեան սրբէ զնս՞ որ
զպղծեալ կերակուրս
աստիք 'ի ձեռն աղօթից՝
ունէիք թերեւս իրաւու
նս հակառակելոյ։
Բայց յորժամ և առնից
աղին օրհնութն սբ են
կենդանիքն զորս մատղս
առնեմք՝ զի՞նչ պատճառաւ
յետ այնորիկ անձնք թը
ւին ձեզ և վնասակար։
Մի թէ քահանայական
աղօթքն և մարգարէից
և առաքելոց և աւետա
րանչացն բանք զորս ըն
թեռնուն իվե՞ր աղին և
խաչին դրոշմն, պի՞ղծա
տայ համարել քեզ զնք
կենդանիսն և անուտե
լի՞։ Ա՞ն առաքեալն պօ
ղոս հրամայէ, ո՛չ միայն
զնուիրեալսն ած այլ և
զհասարակաց կերակուրս
և ըմպելիս նախ սրբել

բանիւն ած և աղօթիւք
և ապա՛ ուտել։ Ուրեմն
ըստ մանիքեցւոցն խոր
հիս զի նախ անիծանեն
զկերակուրն և ապա ու
տեն։ Ո՛վ դու՝ ընթեր
ցի՛ր և 'ի միտ առ զմիտս
բանիցն ասացելոց զոր
'ի վե՛ր աղին ընթեռնուն
քահանայքն յօրհնելն։
և ցո՛յց զնոցա վնասն։
և մեք ներեմք քումդ
շաղակրելոյդ։ Ապա թէ
ոչ կարես ցուցանել, ըլ
ռեցի՛ր զլեզու քո 'ի չա
րութէ և մի՛ դայթակղե
ցուցաներ զժողովուրդն
ած։ Ուրեմն 'ի ձեռոց սը
տայօդ և չարաթոյն բա
նից մոլորեալ են և ա
ռաջնորդք աստոց, որք
օրինադրեն որպ լուաք
իւրեանց ազգին զպանիր
որ յայլ ազգաց ուտել
անխղճաբար և զմեռելո
տի և զամ դարշելի կեն
դանիս որպ սովոր են, և
'ի պանրէ հայոց զգուշա
նալ։ զի մի՛ դուցէ ասեն
'իմանտաղէ դառինն զատ

 կի

կի խախաց մերձեցեալ իցէ 'ի նմա ։ Նա որս 'ի դէպ է առել զմտրուկա կանն քան զոր առ հրէիցն կուրացեալ առաջ նորդան եթէ՝ զմժղուկս քամէք և զուղտս կլանէք։ Նա՛ դարձեալ՝ զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, և 'ի քում ական զգերանդ ո՛չ նշմարես։ Նա՛ թէպէտ մերս դատն առ յանցանս ոչ մժղուկ է և ո՛չ շիւղ, այլ բարի և մբ վկայեալ յայս։ խսկ նց մկնապիղծ կերակուրքն առաւել մեծագոյն է 'ի մեղս քան զուղտս և զգերանս։ Ալ հակառակասիրութե և կուրութն նց․ մանաւանդ թէ և չարին խաբէութն։ Զի մուելոտի զեռնովք պղծեալ կերակուրսն և զըմպելիսն․ զոր մծ պիղծս ասաց, նոքա քահանայական օրհնութք իւրեանց հաստատեն մբ լինել․ և զգառինս որ յառաջ քան զըղ

քահանայական աղօթելն 'ի վր մբ է, պիղծ համարին․ զոր այնպիսիքն դիհաց պաշտօնեայք են։ Նա՛ թէ աղն ասէք պըղծէ զնս, էր 'ի նշխարս ձեր խառնէք զաղն, և կամ յայլ կերակուրս․ զի եթէ զգառն որ օրինակ միայն է Ճշմրտ գառինն անմբ առնէ աղն, և ս առաւել Ճշմարտութե պատարագին խառնելով 'ի նմա։ Նա՛ թէ ասէք, վն զի ըստ հնոց օրինացն առնէք վն այնորիկ դարշիմք 'ի նմանէ․ և ո՛ւր է մեղ ընտրութն ոչխարին և ուտելն 'ի գիշերի և ո՛չ յայգ հանելն 'ի նըմանէ․ և բաղարջ և եղէգն և ցուպ 'ի ձեռս և կօշիկս յոտս. և դօտի ընդ մէջ, և ո՛չ բեկանել զոսկրն․ և այլ ամենայն գրեալքն յօրէնս․ յորոց եթէ առնէաք, յիրաւի դայթակղէիք։ բայց մեք ահաւասիկ ո՛չ 'ի հէինգաւակին ուտեմք և ո՛չ յերե



կս

կորին և ո՛չ նախ քան զա
մենայն կերակուրս ոչ
և նոքա • այլ յետ յարու
թե՛ տն և 'ի տու՛նջեան
միաշաբաթին զկնի ճշմա
րիտ գառինն մարմնոյ և
արեան տն ճաշակելոյ։
Զի թէ զայն կտրէաք՝
պարտ էր զայն ուտել
և ապա զճշմարտութիս։
Ե՛ւ զոսկրն ո՛չ թէ միայն
ոչ բեկանեմք, այլ և ար
տաքս ընկենումք • և ո՛չ
յայգն ևեթ հանեմք,
այլ 'ի նոյն օրն զենեալ
և խորովեալ լինի։
Իսկ եթէ ասիցէք եթէ
ո՛վ ոք յազգացն քրիս
տոնէից նախ քան զձեզ
եղելոց ունի զայդ սովո
րութիւնդ • Ասասցուք
եթէ իւրաքանչիւր ոք յա
ռաջնորդաց ոչ կամեցան
եդին իւրեանց ժողովր
դոցն ա՛ւանդութիւնս
պէսպէսս և զանազանս •
ոչ և առ ձեզ բազում
են դարովելիք յայլոցն •
ոչ ուրբաթազենն, և ո՛չ
խոստովանիլն զմեզս, և

պիղծ կերակրոց անխըտ
րութի, և այլք յոլովք։
Ե՛ւ թէպէտ մեր լուսա
ւորչին ընդունելի է ոչ
'ի հոգւոյն սրբոյ, բայց
նա ո՛չ 'ի յանձնէ եդ ըզ
գառին զենումն զատ
կին • այլ՝ 'ի հռովմայե
ցւոց եկեղեցւոյ ընկա
լա՛ւ և ա՛ւանդեաց •
Որպէս և այժմ առա՛ւել
զգուշութե՛ քան զմեզ
առնեն զայս յամ եկեղե
ցիս Փռանկաց • քանզի
խորովեալ գառն 'ի զատ
կին ա՛ւուր դնեն 'ի խո
րանն ընդ պատրգա՛ն •
և յետ սուրբ խորհրդոյն
հաղորդելոյ՝ բաժանեն
զնա քահանայքն • և տան
իւրաքանչիւր մասն։ և
'ի նմին իսկ յեկեղեցւջն
ուտեն յառաջ քան զայլ
հասա՛րկաց կերակուրս։
Սակայն ընդ ձեր փոփո
խելի բանսդ յո՛յժ զար
մանամք • զի յորժամ հար
ցանեմք ընդ ձեզ եթէ
վս՛ է՞ր 'ի նշխարն ձեր
աղ և ձէթ խառնէք •

դուք 'ի հինն ընթանայք
առնուլ ձեզ վկայութի՟
նոր խորհրդեանն քի՟,
եթէ վս՟ զի մովսէս հրա
մայեց եթէ յա՟մ պատա
րագ ձեր աղ խառնես
ցին. և եղիսէ աղի՟ սըր
բեաց զջուրն երիքովի.
և վս՟ ձիթին' եթէ աղա՟
նին ձիթենի ունէր տե
րև 'ի բերանն. և զօրի
նակն զիւղան որով քա
հանայք և մարգարէք
օծանէին. Իսկ յորժամ
ասեմք եթէ զպղծեալ
կերակուրսն մկամբ' ու
տէք անխտիր և զանմա
քուր կենդանիսն, 'ի
նո՛րս փոփոխէք' թէ վս՟
զի հրամայեաց քս՟ եթէ
ո՛չ որ մտանէ 'ի բերանն
այն պղծէ զմարդն, այլ
որ ելանէ 'ի բերանոյն.
Որ ո՛չ վս՟ զանօթ իրս ու
տելոյ ասաց, այլ վս՟ ան
լուայ ձեռօք. Ա՛ յա
ղագս այնպիսի խորտու
թեանց բերէք յառաջ
և ըզկտաւեղէն անօթն
զոր ետես պետրոս. որ
ո՛չ վասն զշունս զգայլս
և զօձս և զգորտունս ու
տելոյ ասացա՟ այլ' պետ
րոս զէ՛ն և կե՛ր. այլ վս՟
զայնոսիկ պաշտողացն հե
թանոսաց որք սրբելո՛ց
էին 'ի պղծութենէ 'ի
ձեռն պետրոսի քարոզու
թեանն. ո՟պ առ ընթեր
բանն վկայէ. քանզի ո՛ր
պարգևք էին այն պետ
րոսին յետ հոգւոյն սբ՟յ
արբմանն զմուկն և ըզ
մուղեզ և զնմանս նոցա
հրամայել յերկնից զե
նուլ և ուտել. Ասէք
և զառաքելականն բանսն
եթէ ո՛չ ինչ է պիղծ նո
վա՟. և եթէ' ա՟մ արա՟ծք
այ՟ սբ՟ են, և զայլսն զոր
ասէ պօղոս. Որ ո՛չ եթէ
զայս ասելով հրամանս
տայ գազանս լինիլ շաղ
ղակերս. և յա՟մ գարշե
լիս բերանաբաց եղեալ
գազանաբար առա՟ել
քան զհեթանոսս.
Այլ քանզի էին ոմանք
'ի սուտ առաքելոց որք
արդելուին զհաւատացե՟լ

որք 'ի հեթանոսաց՝ 'ի
յամուսնութէ և 'ի մսոյ.
ոչ յանձնք կենդանեաց
միայն, այլ և 'ի մ͞րց ու
տելեաց: յաղագս յայն
պխսեաց գրեաց պօղոս
զայս: զորոց յայտ առ
նէ գրովն առ տիմօթէոս՝
թէ որք արգելուն յա
մուսնանալոյ, և մեկնեն
'ի կերակրոց զոր պատ
րաստեաց ա͞ծ 'ի վայելս
հաւատացելոց և որք հա
սեալ են 'ի ճշմարտու͞թ
վերայ: Տե՛ս ահաւասիկ
զի 'ի մ͞ր կենդանեացն
մարմնոց ասէ պատրաս
տեաց ա͞ծ 'ի վայելս հա
ւատացելոց, այսինքն թէ
հրամայեաց. և ոչ զան
արբոցն ասաց ուտել.
զի զանձնք կենդանիսն
ոչ ուրեք գտանէ ոք 'ի
հինն կամ 'ի նորս հրա
մանն տուեալ ա͞յ ուտել
իւրոց հաւատացելոցն:
Այլ որք կերինն կամ
ուտեն, ընդ դէմ հրա
մանաց նորա գործեն
և պատուհասին:

իր

Զորոց և դաւիթ ամ
բաստանէ 'ի սաղմսի անդ,
թէ կերին զզոհեալ և
զմեռելոտի. և պղծեցան
'ի բեելբեգովր. նոյն͞պ և
ա͞մ մրգրէքն.
Նա՛ թէ ասէք թէ 'ի
հինն էր այն, և 'ի նո
րումս բարձաւ խորու
թի͞ւ կերակրոցն. և ո՞վ
եղև 'ի նորս հրամանա
տու դազանաց՝ ցուցէք
յայտնապէս և մեք հա
ւանիմք ձեզ. ոչ 'ի փո
քունց և յաննշանից ո
մանց այլ երկոտասան առա
քելոցն և քահանայիցն
և յամենեցունց նորոց
կտակարանացն հաստա
տողաց ժողովելոց յէ͞մ
յետ իջման հոգւոյն սըր
բոյ, զի ընդ կռապաշտու
թեան և ընդ շնութե և
ընդ սպանութե և ընդ
պոռնկութե, օրինադրե
ցին որք 'ի հեթանոսաց
հաւատացելոց զհեղձու
ցիկ մեռելոտի ուտեն.
Ա͞պ և պօղոս պատուիրէ
զգուշանալ 'ի պոռնկու



թե

թենէ 'ի զոհից և'ի հեղ
ձուցելոյ. Եւ՛ զուկաս
պատմէ 'ի գործս առաքե
լոցն։ Իսկ դուք օրէնս
եդեալ էք ձերոցդ ընդ
դէմ օրինացն ա̄յ, թէ
զամենայն կերակուր որ
մտացդ ախորժակօք ո՛չ
գարշիս 'ի նոցանէ, կե՛ր
անխտիր։ որք օրէնք ո՛չ
մրտաւոր և բանաւոր
մարդկան, այլ շանց և
խոզից. զի զա̄մ զիրս զոր
տեսանեն աչօք՝ յարձա
կին բերանով։ Եւ՛ թէ
այսպէս է, ապա քո̄ մե
ղացն պաշտօնեայ եղև.
զորովայնամոլութի առա
ւել քան զհրէիցն և ըզ
հեթանոսաց օրինադրե
լով մարդկան։ Ո՛ի ա
ռաջին մեղք և մահու
պատճառք բնութեան՝
որկորստութիւնն եղև։
Եւ՛ զի՞նչ լինիցի աստ
ցեալն 'ի տ̄նէ, եթէ ո՛չ
աւելացու արդարութին
ձեր աւելի քան զդըպ
րացն և փարիսեցւոցն,
ո՛չ մտանէք յարքայութին

երկնից. Եւ՛ մեծ արդա
րութեան վաստակն պա
տերազմին է պահօք ընդ
դէմ որկորստութե, որով
և ա̄մ ս̄ք արդարացան։
Եւ՛ եթէ 'ի հրամայեալ
կերակրոցն կարծել հա
ճո՛յ է ա̄յ, ապա յո՛չ հրա
մայելան մերձենալ՝ ընդ
դէմ կամաց ն̄ր է. յայտ
նի է այս և 'ի օդիտաց.
Եւ՛ նոյն ինքն պետրոս
որ զայն լուաւ զիմրդ
ոչ կտրեաց զերկնայինն
հրամանն. ուտելով ըզ
պիղծ կենդանիսն, եթէ
ուտելո՛յ դէմս էր աստ
ցեալն. այլ սակաւ ոլո
ռամբ շատացեալ լինէր
յաւուրն. որպ̄ս վկայէ
գրիգոր ա̄ծաբանն 'ի
բանն որ յաղագս աղ
քատսիրութեան։

Բայց թողցուք զայսո
սիկ և որ այլ թիւրաւան
դուք են 'ի նո̄ երկնա
ւոր գաստաւորին քննե
լոյ. և զսակաւս զայս վ̄ս
այժմորիկ ասացաք. զի մի՛
ոք 'ի մերոց ասասցէ լսե
լով

լով զայսպիսի բանս 'ի
նոցանէ, անսայցէ. և
կարծելով ուղիղս՝ մոլո
րեսցի 'ի ճշմարտութե
նէն։

Այսմ որդ՝ այսուհետև
առ մերս դարձուսցուք
զբանս հաստատցեալս
'ի տնէ ժողովուրդսդ.
ցուցանելով ձեզ ըստ
հարցմանս ձերոյ թէ զի՞
որդ արժանէ կատարել
առանց խղճի մտաց և
ըստ կանոնական հրամա
նի և կամացն այ զմա
տաղս զատկի, և զտնա
կան, և զննջեցելոց յիշա
տակի. զյաւելորդսն և
զյետոյ մտեալսն 'ի տգի
տաց իբաց հանելով. զի
առանց գայթակղութե
կատարեսցին։

Արդ՝ նախ զզատկին ա
սասցուք։ Դրոշմեսցէ
քահանայն զաղն խաչիւն
քի. ասելով 'ի վր զսաղ
մոսն և զաղօթսն որ կար
գեալն է. և տայցեն զայն
'ի կերակուր գառինն,
զի սրբեսցի բանիւն այ

և աղօթիւք որպէս և
դրեալն է։ Ո՛չ ի թէ պտ
և սբ է բնութբ, այլ հան
դերձեալ է նուիրել այ՝
առաւել պարտ է սրբել։
Այլ զենցեն զնա յորում
տեղւոջ և հանդիպի.
ուր և զայլ անասունս։
Այլ մի՛ ոք որգիտաբար
զարիւն գառինն ժողո
վեսցէ, և կամ կերիցէ.
ուր լսեմք զոմանց ախմա
րաց զի առնեն. զի որ
զարիւն անասնոցն ուտէ՝
իբրև զմեռելոտիս հա
մարեալ է. զի արիւնն
առնէ պիղծ զմեռելո
տին և անուտելի որ 'ի
նմին մնայ և ոչ ելանէ։
Վասնզի պիղծ է արիւնն
ըստ հրամանին այ որ
ասէր առ նոյ, թէ զմիս
արեամբ շնչոյ մի՛ ուտի
ցէք։ Այլ մի՛ ոք իշխես
ցէ այսպէս առնել ա
րեամբ գառինն, որպէս
ասեն զտգիտաց ոմանց
թէ առնեն. զի այն հրէ
ական է։ և որ այնպէս
առնէ ընդ անիծիւք է.


քան

քանզի սեամք դրանց
մերոց՝ զգայարանք մերէ
որ արե̄մբն քի օծանին:
Եւ խորովեալ տացեն
զմասն քահանային բերև
զնուէրս ա̄յ և զայլն կե
րիցեն: Թէպէտ յառաջ
քան զայլ կերակուրս և
թէպէտ յետոյ, անմիջամս
են երկոքին:
Ըստ այսմ նմանութե̄
կատարեսցեն և զայլոց
տ̄րունական տօնից մա
տաղսն, և զսբ̄ցն ա̄յ:
Իսկ խոստ̄ցեալն ա̄յ զոր
տ̄նական կոչեն՝ եղիցի
այսպէս: Մարդասցեն
զգրեալ օրհնութիս իմ̄ր
աղին քահանայք: և տա
ցեն անասնոցն և զեն
ցեն: և հանցեն ըզ մա
սունս քահանայիցն: և
զայլն տացեն աղքատաց
և կարօտելոց: առանց
ակնառութե̄ բաշխեսցեն
զի հաճոյ լիցի ա̄յ:
Եւ զայլսն զոր 'ի տօնէ
քահանայիցն եդեալ է
'ի ցուցակին, կարմրով
ծածկել զանասունն և
յեղջիւրսն Նարօտ կա
պել ըստ հնոյն օրինի,
ամենևին մի՛ առնէք զի
ա̂նելորդ է և անօգուտ
և պատճառ գայթակ
ղութե̄:
Իսկ առ 'ի յիշատակ նըն
ջեցելոցն 'ի քս̄ յորժամ
կամեսցի ոք առնել մա
տաղ՝ այսպէս եղիցի:
Խորովեսցին քահանայք
ի միասին 'ի դուռն եկե
ղեցւոյն, եթէ յոլովք
իցեն և եթէ սակաւ̂ք և
եթէ մի ոք, ընդ նոսին
և տէր պատարագին: և
դիցեն զաղն առաջի սբ̄յ
խաչին, և երգեսցեն ըզ
գրեալ սաղմոսն և զպաշ
տամունսն և ընթերցցին
զկարդացմունսն և զա
ղօթսն երկիւղիւ̂ մեծաւ̂:
և ջերմեռանդն սրտի̂
յիշեսցեն զանուն մեռե
լոյն, և թողութի̄ մեղաց
խնդրեսցեն նմա 'ի տ̄նէ:
և տացեն զաղն օրհնեալ
և զենցեն զանասունն:
և զքահանայից մասն տա
ցեն զսահմանեալն: և

զկարօտեալս հերակլրես
ցեն և զքաղցեալսն նախ.
և ապա թէ յաւելու՝ ըզ
սիրելիսն և զբարեկամս.
Այլ բաց յառաջի օրէն
այլ առաջակայ աւուրցն
'ի յայնցանէ մի՛ ամբա
րեսցէ կերակուր տան
իւրոյ զի ա̄յ է նուիրել.
Այլ մի՛ ոք որդիոտաբար
ասասցէ եթէ առանց մա
տաղ առնելոյ՝ պատարագն
քո չմատչի ննջեցելոցն.
և զայս ասել յոյժ ամ
բարշտութիւն է. քանզի
անասնոց զենմունքն ո՛չ
այլ ինչ առաւելութիւն
ունին 'ի կենդանեացն
օգնութ̄ի կամ մեռելոցն՝
բայց միայն իբրև զողոր
մութն տուրս. Քանզի
պատուէր ունիմք յա̄մէ
զորս ետ մեզ ա̄ծ, նուի
րել նմա 'ի ձեռս աղքա
տացն. և ո̄չ 'ի պտղոյ և
'ի սերմանեաց՝ այն̄չ և
'ի կենդանի անասնոց.
Իսկ պատարագն քո զոր
կատարեն ճշմարիտ հա
ւատով մբ̄ քահանայքն

ԻԸ

յանուն ննջեցելոցն, 'ի
վե՛րէ մեծութ̄ե քան ըզ
միտս և զբան. զի թէ
մի անգամ պատարագելոյն
քո̄ 'ի վե̄ր խաչին զմեղս
բնութե̄ մարդկան ջըն
ջեաց որ յադամայ, ապա
յորժամ բազում անգամ
մատչի յանուն քրիստո
նէութեամբ ննջեցելոց՝
զի՞նչ արդեօք մեղք իցեն
զոր ո՛չ թողցէ նմա հայրն
երկնաւոր վասն միածնի
որդւոյն իւրոյ զենմանն.
Այլ որ հաւատայ՝ մի և
նո՛յն է պատարագն զոր քո̄
մատոյց և զոր քհ̄նայքն
մատուցանեն. միայն թէ
յուղիղ հաւատս և 'ի
դարձումն մեղաց լիցի
ննջեցեալն 'ի ժամ վախ
ճանին. Այլ և ողորմու
թե̄ն տուրք եթէ յանբա
նից մսոց որ է մատաղն,
և եթէ յայլ գոյից իցէ,
մեծ ա̄պս օգտեցուցանէ
զկենդանիս և զմեռեալս.
քանզի ողորմութի̄ է որ
բարձր 'ի գլուխ պարծի.
Այլ և նախ քան զմա

րութեն որ ազդուածն լինի նենջեցելոց հոգւոյն յոր ժամ կենդանիք վն նց պտրգ կամ յաղօԹս կամ ողորմուԹիս մատուցանեն առաջի այ։ Եւ 'ի յառնելն 'ի մեռելոց՝ ողորմուԹին է որ յաջակողմեանն քի դասա՛ւորէ զգործօղս իւր և տայ լսել զեկայք օրհնեալն։

Իսկ Թէ զինչ պատճառա՛ւ սահմանեցին առաջին սբ հարքն մեր նախ օրհնեալ աղ տալ նուիրելոյն և ապա զենուլ, յայտնի արասցուք և զայս։ Աղն՝ մաքրուԹե օրինակ է․ որպ քս աշակերտացն ասաց, դուք էք աղ երկրի առ 'ի զնեխուԹի ապականուԹե նր մաքրել բանիւ՛ քարոզուԹե։ Եւ քանզի երկիր և որ 'ի սմա որք 'ի ստեղծանին յօրհնեցին յարրչէն՝ յետ պատուիրանազանց լինելոյ մարդոյն անէծս ընկալան։ ըստ որում ընդ իշխանին դատապարտելոյ

ԻԹ․

և իշխեցելքն պատժին, և յաղագս այնր պատճառի եղեն անմաքուրք։ Վորոյ և մեք զորս հան դերձեալ եմք յչէս կենդանեացն չի նուիրել, յառաջագոյն բնի՛ն այ զոր ընԹեռնումք, և սբ անուանն նր յիշմամբ, և խաչին դրոշմամբ սրբեմք զաղն և տամք զնա կենդանեաց առ 'ի յուտել․ զի խառնելով ընդ լռուԹի մարմնոյ նր՝ սրբեսցէ 'ի վերջնոյ անիծիցն և զառաջինն օրհնուԹի վերըստին առցէ․ և ապա առժանասցի նուէր լինիլ այ։ այս է խորհուրդ աղին օրհնուԹե․

Եւ արդ՝ յայս ճշմարիտ հաւատոյ հիման վր զոր եդին հրքն մեր առաջինք՝ հաստատեցէք զանձինս ձեր․ և եԹէ որ այլ ազգ ինչ ուսուցանէ ձեզ հակառակ սբց հարցն ա՛նդուԹեց՝ հալածեցէք 'ի միջոյ ձերմէ զայնպիսին։

Եւ քի փառք յա՛՛։

## Յիշատակարան Տպողի սբ Գրքոյս.

Փառք Պատիւ Գոհութի և երկրպագութիւն ամենասբ Երրդութեն և միոյ Ածութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ ամէն.

Որ առատ ողորմութբն իւրով ետ կարողութի մեզ նուաստիցս և անարժանիցս Տպել և 'ի լոյս ածել զսբ հոգեշահ մատեանս որ կոչի մեկնութի Աղօթից. 'ի փառս իւրոյ բարերար մեծութեն և 'ի յօգուտ մաքուր մանկանց եկեղեցւոյ։

Որում դարձեալ գոհութի և երկրպագութի 'ի յաւիտեանս յաւիտենից Ամէն։

Տպեցաւ սբ գիրքս 'ի Հայրպտութե լուսակառոյց սբ գահին Էջմիածնի տն Աբրահամու Կրիցս երանեալ Արքզն Կթղկսին ամ հայոց.

Եւ երկուց Սրբազան Պատրիարգացն սբյն Երուսաղէմի և Կոստանդնուպօլսի տն Գրիգորի և տն Յօհաննիսի Աստուածաբան Վարդպտացն.

Իսկ և ընդհանրական մեծի Աթոռոյն Էջմիածնի հաւատարիմ միաբան և ծայրագոյն նուիրակ տն Ղազարու Աստուածաբանութեան Վարդապետին Ճահկեցւոյ յոգնաջան երկամբն և անդուլ աշխատութբն։

Այլ ինքն՝ զկանոնս բաժանելով և զխորագիրս զումանս մակագրելով, և զայլ բազում բանս սբց Վարդպտաց ժողովելով և աստ դնելով։ Նաև զարս բարեմիտս զներքոգրեալսն յորդորելով առ 'ի տպել զսբ գիրքս։ Որոյ յիշատակն օրհնութբ եղիցի, Ամէն։

Եւ արդ՝ որք հանդիպիք սբ մատենիս այսմիկ և օգտիք 'ի սմանէ, ընթեռնլով կամ լսելով,



յի

յիշեսջիք 'ի տէ(ր) աղօթս
ձեր զարևելցի մահտե
սի պարոն Ղազարն
և զեղբայրն իւր զպարոն
աէհրատն․ և զծնօղսն
զպարոն հախնազարն և
զԹադուհին: Նաև զկո
ղակիցսն զհռիփսիմէն
և զմիւս հռիփսիմէն:
Նաև զորդիսն զհախնա
զարն և զստեփաննոս:
Նաև զկուսակրօն եղբայրն
նորին զտէրոջ ստեփան
նոսն․ և զքըրմերսն ըղ
մարգարիտն զկիւզէլն և
զԹամարն․ և զայլ ամ(ենայն)
արենաւու մերձաւորսն
նորին զկենդանիս և
զմեռեալս:
Յիշեսջիք և զմիւս ջա
նակից և ըղձակից ըն
կերն նորին զտէր Մով
սէսն կոստանդնուպօլսե
ցի․ և զծնօղսն իւր զխօ
ճա դանիէլն և զսիմայն․
և զմեծ մայրն զմահտեսի
փաշուկն: Նաև զորդիսն
ոնոփրիոսն, զմիքայէլն,
և զհանգուցեալ մատթէ
ոսն, և զմիւս ոնոփրիոսն

և զտիրացու յակոբն, և
զմայր սոցին զխօնձայն․
և զայլ ամ(ենայն) արիւնամերձ
ընտանիսն նորին զկեն
դանիս և զմեռեալս:
Յիշեսջիք և զսեբաս
տացի երեսպաշտօն քրիս
տոնեայսն զպետրոսի որ
դի մահտեսի յակոբն․
և յարութենի որդի զաբ
րահամն․ զի սոքա ետուն
զօրինակն գրքոյս ջերմե
ռանդ սիրով:
Նաև յետոյ ետ օրինակ
մի և Սրբոցն Նաշկան
Թրակիոյ Աբրհմ աստուածա
բան վարդապետն․ որ և
նորին յիշատակն օրհնութ(եամբ)
եղիցի:
Յիշեսջիք և զտպագրօղ
սորին զկոստանդնուպօլ
սեցի անարժան մահտե
սի աստուածատուրս․ և զծը
նօղսն իմ զխօճա կարա
պետն և զմարիամն: և
զորդեակն իմ զտիրացու
մինասն: Նաև զմիւս որ
դեակն իմ զտիրացու յօ
հաննէսն զանձանձիր և
մշտաջանաս տքնութե

զծայգ և զծերեկ շարա
բարդօղն զկապարեալ
գիրսն։ Որ և այն քան
ունի սէր ջերմեռանդ 'ի
վր մբ գրոց, մինչ զի ու-
նի 'ի մտի որքան հնար
իցէ՝ և զայլ մբ մատենս
երջանիկ վրդպտացն որ
պէլ 'ի փառս այ և յօ
գուտ եղբարց։ Այսրոյ
մաղթեմ 'ի սիրելեացդ
իմոց, հայցել 'ի տնէ տալ
նմա շնորհ և կարողութի
ոպ ինքն կամեսցի։
Յիշեսջիք և զհանգուցել
մայրն սոցին զսիմայն, և
զայլ ամ ննջեցելան մեր
'ի տր։ Յիշեսջիք և զաշ
խատաւորսն գործարա
նիս զթոխաթեցի տիրցու
զաքարիայն, և զվանեցի
տիրացու վարդանն։
Նաև արզրումեցի զգրա
վաճառ եղբայր մանուկն
յիշեսջիք 'ի տր։ որ նա ևս
ունի աշխատանս իվերայ
գործառնութե գրքոյս։
Ոպ զի տուօղն բարեաց՝
ձեզ և մեզ առ հասա
րակ ողորմեսցի
Ամէն։

Ցանկ Գլխաւոր Բանից
Ըստ Գրքոյս։

Ա


Աբրահամ և այլքն 358
Ահեղ ատեանն քո 59
Ալ վայ է ինձ և 237
Անկեալ առաջի քո 305
Անձուկ ճանապարհն 73
Աղաչեսցուք զամե 232
Աղաչեսցուք զամե 251
Աղաչեսցուք զամե 336
Աղաչեսցուք զկեն 304
Աղօթից գովութին 124
Աղօթից զգուշու 114
Աղօթից խրատ 7
Ամենապայծառ և 147
Ամէն ասելն ինչ է 193
Աշխարհասիրաց եղ 311
Առաջի քո տր 27
Առաջի քո տր և 246
Առաջնորդաց եկե 122
Առաջնորդեա՛ մեզ 264
Առաջնորդ կենաց 251
Առաւօտին երգոցն 208
Առաքինութին ինչ է 14
Առ մբ հոգին մաղ 208

Ա՟ծական արեամբն 17
Ա՟ծ բարձրեալ դու 351
Ա՟ծ խաղաղութ ասի 86
Ա՟ծ միայն է ընդձայն 54
Ա՟ն երկիրպագեսցուք 26
Արատաւորութին 58
Արդարքն յիշատակին 358
Արեւագալին ժամեր 141
Արթուն մտօք և 272
Արի՛ տէր օգնեա՛ մեզ 141

## Բ

Բազումողորմ ած 302
Բարերարութին այ 117

## Գ

Գիրք ընթեռնուլն 108
Գոհաբանելով աղ 266
Գոհանալոյն զայ 147
Գոհանամք զքեն 93
Գոհանամք զքեն 218
Գոհանամքքէն յոյժ 214
Գոհութ տեսականքն 169
Գործոց բարեց խրատ 239
Գրիգորի նորկ ցւոյ 408
Գրոց գիտութին 29
Գրոց սբց ընթեր 108

## Ե

Եկեալքս ամենքն ի սբ 132
Եկեալքս ի խոստո 348
Եկեալքս ի մտանել 325
Եկեղեցւոյ արհա 135
Եկեղեցւոյ գովու 134
Եկեղ՟ մեծ շնորհքն 133
Ես առ ած կարդացի 315
Երախտիքն այ առ 313
Երից մանկանց երգն 130
Երկաբնականքն յան 176
Երկնաւոր խաղաղ 278
Երկրպագեմքին վրբ ն 147
Երգ ժամուն ժամ 255
Եւ եւս խաղաղութ 40
Եւ յամ ժմ օրհնեմք 201

## Զ

Զարթիցուք և մեք 287
Զարթուցեալքս ամե 9
Զտուօտու աղօթս 249
Զգեցո՛ մեզ տր ած 276
Զհրեշտակ խաղա 16
Զուարճացեալքս 144
Զքեն գոհանամք 20
Զօրացո՛ զմեզ տր 220

Թ

Թէր խաղաղութ 354
Թողուլ ընկերին 398

Ի

Ի գիշերի և ՚ի տուընջ 68
Իմաստունանէ ՚ի կենս 211
Իններորդ ժամուն 288
Իւղաբերիցի կարգն 141

Լ

Լոյս զուարթ սբ 321
Լոյս տուր տր աչաց 108
Լուր ձայնից մերոց 338
Լսելն տեառ որդւ իմանի 69

Խ

Խաղաղականին աղ 364
Խաղաղութէ քով հո 267
Խաղաղութ ամցուն 25
Խաչին քի յերգ ժա 256
Խնրհեցո տր զունկն 316
Խոնարհութին գովի 199
Խնդրեսցուք հտով 262
Խնդրեա" հտով ՚ի 284
Խրատք բարի գոր 197
Խրատք բարի գոր 392

Կ

Կթղիկէ վա էր ասի 133

Կանխեալքս ՚ի ժամ 99
Կենդանարար զօրուի 97

Հ

Համբարձի զաչս իմ 345
Հայր գթած՝ բարե 345
Հայր գթութեց եւ ած 285
Հասեալքս ՚ի ժամ 334
Հատուցումն գրծց 128
Հարցին ժամերգու 130
Հեղգսն ՚ի պաշտօննայ 113
Հզօր ամենակարող 140
Հովիւ քաջ է քս 72

Ձ

Ձեռնադրելն զոգ" 122

Ճ

Ճանպրհ կոչի կեն 263

Մ

Մարդեղութ բանին 118
Մրմնասիրց գրծքն 404
Մարմնոյ և արեն ձա 118
Մեղաց բծաւորու 60
Մեղաց չարութին 111
Մեսեդիկեաց մեկ 335
Մխաբան ամքն գո 257
Մխաբան ամքն գո 382
Մովսէսի յշտկրնն 407

Յ

Յապականութեան 212
Յարևելից մինչև 'ի 242
Յաւիտեանն երբեք 41
Յիշելով զմեծամեծս 292
Յոյս հաղորդութեն 275

Ն

Նայեաց տր բարերր 27
Նաւահանգիստ կա 65
Նեղութիք վս ճշմար 198

Շ

Շնորհատու բարեաց 390
Շնորհաց լոյսն 214
Շնորհեա մեզ տր 368
Շնորհն և ողորմութին 88

Ո

Ոխերիմ մտօք հայի 311
Ողորմած մրդասէր և 151
Ողորմութե օգնութին 112
Ողորմութին գովի 400
Ոչ ողորմելոյն փնասն 380
Որ բնակեալն մեկնի 347
Որ էիր յառաջ քան 261
Որ ընտրեցեր և ըն 228
Որ թուչի 'ի տունէ 273
Որ 'ի քրոբէական և 259
Որ տայ զկենդանութի 329

Չ

Չար խորհուրդքն 29
Չար խորհուրդքն սա 76

Պ

Պատարագ է աղօթքն 12
Պարգևատու բարեաց 386
Պատերազմ է մս 197
Պատկեր գոլն մերոյ 396
Պսակիչ սբց որպս 226

Ս

Սղմսին քաղուածքն 40
Սատանայի չարութին 395
Սերոբէից խորհուրդն 158
Սիմոնական մեղքն 122
Սէ ածին մեկնուի 344
Սէ ես տր ած մեր 223
Սէ ես տր և 'ի սբս 247
Սէ ճգնաւորօքն աղ 225
Սէ ճգնաւորօքն աղ 247
Սէ սրտիւ և հաւ 290

Վ

Վս գտանելոյ մեզ 88
Վս 'ի գիշերի և 'ի 57
Վս 'ի վերուստ խա 48
Վս հիւանդաց և 280
Վս ուղղելոյ զգր 73
Վս սբ տեղւոյս չի 142
Վեցերորդ ժամուն 270

## Տ

Տանջանք մեղաւ՟որացն 129
Տ՟ր ապաւէն եղեր 205
Տ՟ր ա՟ծ փրկու՟թ իմոյ 366
Տ՟ր ա՟ծ փրկու՟թ մերոյ 351
Տ՟ր բարերար որ մե 384
Տ՟ր երկնի և երկրի 80
Տ՟ր զօրութ՟ց, որ կա 297
Տ՟ր լոյս իմ և կեանք 388
Տ՟ր ողորմեայն մեկնի 40
Տ՟ր առ՟ընջեան և 50

## Ց

Ցօղեա՛ տ՟ր զցօղ բա 139

## Փ

Փառաւորեսցուք և 332
Փառ՟որեսցուք զա 210
Փառ՟որեսցուք զա 249
Փառք ՚ի բ՟րձունս ա՟յ 157
Փառք պատիւ և գո 208
Փարատեցո՛ զցաւս 282

## Ք

Քահ՟նյից հեղգու՟թն 120
Քահ՟նյից մեծու՟թն 42
Քահ՟նյից պատիժն 45
Քահ՟նյից պատիւն 46
Քաւարանն սո՛ւտ է 200
Քեզ երկիրպ՟գանեմ 341
Ք՟ի միաւորու՟թն յիշի 176
Ք՟ս որդի ա՟յ անո 308
Քում ամենազօր և 85

## Օ

Օգնեա՛ մեզ ա՟ծ փր 232
Օրհնեա՛լ ես ամենա 105
Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ 252
Օրհնեալ հայր ա՟բ 270
Օրհնեալ որդիդ ա՟բ 288
Օրհնեալ հոգիդ ա՟բ 255
Օրհնեալ տ՟ր բնա 317
Օրհնեալ տ՟ր ուսո՛ 204
Օրհնեսցուք և մեք 253
Օրհնութի և փառք 41


Ո՛ անխիջիք և զայս սխ րելիք, զի ՚ի խորագրի փառք ՚ի բարձունսին գրեալ էր թէ՝ խոստովանէ մեկնութիս. և մեք այնպ՟ եդաք։ Բայց յետոյ ծանեաք ՚ի միջին բանէն, որ այլ վրդովմունք արարեալ է։ Եւ մեզ այսպ՟ թուեցաւ թէ՝ Ներսէսի Լամբրոնա ցւոյն է արարեալ։

Օ սրբագրող ս՟բ Գրքոյս և աշխատող ցանկիս՝ զպաղատո՟ր մեղաւոր անձն իմ իմայնովքս հան դերձ յիշեսջիք ՚ի տ՟ր։

Վ. Ն. Բ. Ջ.